23 ՓԵՏՐՈՒԱՐ 2008 ՇԱԲԱԹ 35 (3929)

Azg Ազգ

Ով ինձ հեռ չէ, տականք է...

Այսոր կամ մոտավորապես այսոր է ասել Լեւոն Տեր-Պետրոսյանը երեկ Ազատության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքի ամբիոնից: Ըստ «Lragir.am»-ի, ՀՀՇ առաջնորդն ի մեջ այլ բաների, ասել է. «Սա վերացման եւ սորացման ժամանակաշրջան է: Դժվար է պատկերացնել մի քաղաքացի, որն ունի արժանապատվություն եւ չի կանգնում շարժման կողքին, ուրեմն դա ազգի տականքն է»: Նա ցավ է հայտնել, որ տականքը շատ է, սակայն նշել է նաեւ, որ «ազատ քաղաքացիների, համաժողովրդական շարժման մասնակիցների ավելանալու հետ մեկտեղ այդ տականքը նվազելու է եւ էլանալով՝ մտնելու է իր բները»:

Այս էլ մեր ուսյալ, գիտնական, իմաստուն, եվրոպական ու համաշխարհային արժեքներ կրող նախագահացուն...

ՍՊԱՍՈՒԹՅԱՆ ԿՈՉ

Ռուսաստանի հայերի միության հայտարարությունը Հայաստանի նախագահական ընտրությունների առթիվ

2008-ի փետրվարի 19-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացված նախագահական ընտրությունները կարեւոր քաղաքական իրադարձություն եղան հայոց պետության ճակատագրում:

Ընտրությունները բոլոր կուսակցություններին թույլ տվեցին հասարակությանը ներկայացնել սեփական ծրագրերը, եւ ժողովուրդը հնարավորություն ուներ համադրելու նախագահի պաշտոնի թեկնածուների ծրագրերը եւ նախապատվությունը տալ նրան, ով առավել լրիվ եւ հավասարաչափորեն է սահմանել հայոց պետության հետագա զարգացման ուղին, որը կայունության ակտիվ աճ, բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացում, հանրապետությունում կստեղծի կայունության, հաշտության ու համաձայնության մթնոլորտ:

Ընտրությունները կայացան, Հանրապետական կուսակցության առաջնորդ Սերժ Սարգսյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության նախագահ: Ընտրաբեմի արդյունքները ճանաչեցին ինչպես միջազգային կազմակերպությունների, այնպես էլ ԱՊՀ անդամ երկրների եւ ազգային պետությունների ներկայացուցիչ բազմաթիվ դիտորդներ: Ընդդիմադիր կուսակցությունները վիճարկում են ընտրությունների արդյունքները: Հնարավոր է, որ մի շարք ընտրական տեղամասերում պատահած լինեն առանձին խախտումներ, որոնք արձանագրել են տեղական եւ միջազգային դիտորդները:

Իհարկե, մեր կարծիքով, խախտումների բոլոր դեպքերը պետք է մանրակրկիտ քննության առնվեն, եւ մեղավոր պատասխանատու անձինք պետք է ըստ օրենսդրության պատասխանատվության կանչվեն դատական համակարգի միջոցով: Ծագած հարցերը հակադիրավական մեթոդներով լուծելու ամեն մի փորձ կարող է հանգեցնել Հայաստանի ներքաղաքական իրադրության աղակայունացմանը եւ անուղղելի վնաս պատճառել մեր պետության միջազգային հեղինակությանը:

Մենք հաստատ համոզված ենք, չի կարելի թույլ տալ, որ հակադիրավական գործողությունների պատճառով սկսվեն անկարգություններ եւ բախումներ:

Հասարակության կայունության պահպանումը, ամբողջ ազգի բոլոր առողջ ուժերի համախմբումը կարող են Հայաստանին թույլ տալ արագորեն հաղթահարելու տնտեսության առաջընթաց զարգացումը, սոցիալական խնդիրների լուծումը, ժողովրդի բարեկեցության բարձրացումը, պետության անվտանգության ամրապնդումը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքերի ուժեղացումը:

Մենք վստահ ենք, մեր ժողովուրդը, ինչպես դա հաճիցս եղել է մեր պատմության մեջ, այս անգամ եւս կհաղթահարի ներկայիս դժվարությունները եւ առաջ կշարժվի երկրում կայունության, հաշտության ու համաձայնության ամրապնդման ուղիով:

ԱՐԱ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,
Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ, ՍՈՒՆԵՄԿՕ-ի բարի կամքի դեսպան

Անհայտին «միացող» հանրահավաքը, լռակյաց Ձիանգիրյանն ու դեմոկրատ Բաֆֆի Հովհաննիսյանը

Այսօրվա «քամաշան» վաղը կարող է դառնալ համախոհություն՞ն

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՐՈՒՑՈՒՄՆԵՐ

«Անցյալ գիշեր էստեղ ընենց կայֆ ա եղել, ասում են՝ պարել են, խֆֆ արել... Արա, բա մենք ընչի՞ չենք եկել... Էսօր գալու եմ, տունը նստում եմ՝ ինչ անեմ»: Այն ժամանակ, երբ երեկ Ազատության հրապարակում հավաքված ժողովրդին հոծորի հովերով տարածները այլեւայլ վանկարկումներ էին հեղինակում, հարեւանությամբ կանգնած ուսանող տղաների խմբի խոսակցությունը հենց այսպիսին էր: «Ազգի» հարցին, թե տվյալ պահին ինչ են անում Լեւոն Տեր-Պետրոսյանի հանրահավաքում, տղաներից մեկը, որ հպարտությամբ ներկայացավ, թե Արսենն է, պատասխանեց, որ ուզում է հասկանալ՝ ինչ է երկրում կատարվում: «Համ էլ դասի չենք նստելու, ասում են», ավելացրեց Արսենն ու հասկեցրեց, որ Երեւանի պետական համալսարանից է, բայց վարանեց նշել ֆակուլտետը:

Տղաների խմբից երկուսը հեչ պարապ չէին մնում: Նրանցից մեկն, առանց այն էլ օժտված լինելով հզոր ձայնով, այնպես էր հավաքածների հրապարակակենտրոն հատվածին համընթաց վանկարկում «միացում», «Լեւոն» եւ այլն, որ միշ էր մնում նրան ուղղված հարցը ինչեր այսպես. «ՀՀՇ-ական ես»:

«Ազգի» հետաքրքրությունը, թե ինչն է նրան ոգեւորողը, ժորիկ ներկայացած պատանին արձագանքեց հետեւյալ կերպ. «Ես ուսանող եմ, մի վախտ փող եմ տալիս, որ սովորեմ: Ինչի՞: Ուզում եմ, որ դարաբաղցիները գնան ընտրից, դրա համար էլ պիտի «Լեւոն» գոռամ»: Հարցին, թե արդյոք համաձայն ես հանրահավաքում ինչող կարծիքներին, ժորան առանց երկմտելու պատասխանեց, թե լավ գիտի՝ ինչ են ասում: Որպես պարզաբանում ինչպես հարցին, թե որքանդ նախագահն է ներկայումս ընտրել, ժորան պատասխան չտվեց: Նա փոխարեն ընկերները պատասխանեցին:

Տես էջ 3

Գագիկ Ձիանգիրյանին դատախազության համակարգից հեռացնելու միջնորդություն

«Դատախազության մասին» ՀՀ օրենքն արգելում է դատախազներին զբաղվել քաղաքականությամբ: Օրենքի 7-րդ հոդվածն ուղղակի սահմանում է. «Դատախազը չի կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատախազը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսեւորել քաղաքական զսպվածություն եւ չեզոքություն», ասված է ՀՀ գլխավոր դատախազության կայքէջում եւ ավելացված. «Գագիկ Ձիանգիրյանը կոպտորեն խախտել է օրենքի պահանջը եւ ՀՀ գլխավոր դատախազը միջնորդել է հանրապետության նախագահին՝ ազատել նրան զբաղեցրած պաշտոնից եւ հեռացնել դատախազության համակարգից»:

Հիշեցնենք, որ հենց Գագիկ Ձիանգիրյանը 1995-ին խորհրդարանական ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի փոխնախագահն էր ու ընտրակեղծիքների տեխնոլոգիաներին լավ էլ տիրապետում էր: Այդ նա էր, ով, հանգուցյալ եդ. Եգորյանի հետ, ՀՈՒԱԿ-ին զրկեց հազարավոր ձայներից: Հենց այդ Գագիկ Ձիանգիրյանի թեթեւ ձեռքով 1996-ին 20 օրով փակվեց «Ազգ» օրաթերթը, երբ նա զբաղեցնում էր արդարադատության փոխնախարարի աթոռը: Ի դեմ, Գագիկ Ձիանգիրյանը մինչեւ 2003-ի մարտը գլխավորում էր «Հոկտեմբերի 27»-ի գործը, այնուհետեւ դրանից անջատված մասով նախաքննություն իրականացնող քննչական խումբն ու միանձնակ լռում էր «բերանը ջուր առնում», իսկ հիմա բլբուլ է կտրել ու չմեղանում է՝ դիմելով Վազգեն Սարգսյանի ընկերներին ու զինակիցներին՝ կոչ անելով. «Ընկկրկել որեւէ մեկի առաջ եւ այս երկրում չկա ոչ մի գենեռալ, ոչ մի զինվորական, որը հայ ժողովրդի վրա ձեռք կբարձրացնի»:

Ս. ՄԱՍԿԱՐՅԱՆ

Պաշտպանության նախարարությունը հերքում է ու հայտարարում

Երկու օր է, ընդդիմությունը իր չարտոնված հանրահավաքներում նշում է, որ պաշտպանության փոխնախարար, ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանը, փոխնախարար Գագիկ Մելքոնյանը միացել են Լեւոն Տեր-Պետրոսյանի շարժմանն ու անժամկետ հանրահավաքներին եւ սատարում են նրան: Այս լուրը ճշտելու համար «Ազգը» դիմեց ՊՆ մամուլի խոսնակ Սեյրան Շահսուվարյանին, պարզաբանումներ ստանալու համար: Երեկ նախարարության կայքէջում տեղադրվեց ՀՀ պաշտպանության նախարարի, պաշտպանության նախարարի տեղակալների ստորագրած հայտարարությունը, որտեղ նշված է. «Դիմում ենք ՀՀ քաղաքական գործիչներին՝ կոչ անելով զերծ մնալ ՀՀ ԶՈՒ-ն քաղաքական գործընթացների մեջ ներքաշելուց: Մենք պահանջում ենք ընդդիմադիր քաղաքական գործիչներից եւ հատկապես Լեւոն Տեր-Պետրոսյանից չօգտագործել մեր անունները եւ չտարածել սադրիչ հայտարարություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Վստահեցնում ենք ՀՀ քաղաքացիներին, որ ՀՀ զինված ուժերը չեն ներքաշվելու ներքաղաքական գործընթացների մեջ, գործելու են օրենքի սահմաններում եւ ապահովելու են մեր հայրենիքի անվտանգությունը՝ կատարելով երկրի գերագույն գլխավոր հրամանատարի կողմից դրված խնդիրներն ու առաջադրանքները»:

Մ. Մ.

Պայթուցիկ՝ մետրոպոլիտենում

Երեւանի մետրոպոլիտենից հաղորդում են, որ «թիվ 6 երթուղու No 0110-0111 ուղեւորներով բեռնված գնացքը, ժամը 6.52-ին դուրս է եկել Գարեգին Նժդեհ կայարանից եւ, 3 շրջադարձ կատարելուց հետո, 9.25 մուտք է գործել էլեկտրահավաքակայան՝ տեխնիկական զննման արդյունքում, համապատասխան ափսեակցի կողմից No 0110 վագոնի վերջնամասի ձախ անկյունի նստատեղի տակ գտնվող արկղի մեջ հայտնաբերվել է սեւ գույնի գլանաձեւ կապակցի իր, ժամացույցի մեխանիզմով: Մետրոպոլիտենի ղեկավարությունը անմիջապես դիմել է Ազգային անվտանգության ծառայություն, իրականացրած օպերատիվ միջոցառումների շնորհիվ կապակցելի իրը վնասազերծվել է եւ ուղարկվել փորձաքննության՝ պարզելու, թե դրանում առկա է պայթուցիկ նյութ եւ կա՞ գործի գցող սարքավորում, թե՞ ոչ»:

Լեւոն Տեր-Պետրոսյանն այդման ձայն չէր ստանա, եթե քաղաքական համակարգ ունենայինք

Այն, որ Հայաստանի քաղաքական կյանքից մեկուսացած մեկը կարող է մի առավոտ արթնանալ ու նախագահական ընտրություններում իր թեկնածությունը դնելով երկրորդ տեղը զբաղեցնել, մի երեւույթ է, որը, քաղաքագետ **Ալեքսանդր Իսկանդարյանի** բնութագրմամբ, ցույց է տալիս մեր հասարակության՝ «ընդդիմությամբ հոգի լինելու մասին»: Այդ վիճակում մեր հասարակությունը կմնա այնքան, մինչեւ երկրում կձեւավորվի քաղաքական համակարգ: Այս ընտրություններն առանձնահատուկ էին ամենից առաջ Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտնությամբ, նրա անսպասելի ասպարեզ գալը դինամիկ թափ հաղորդեց ներքաղաքական կյանքին: Եթե ՀՀՇ-ն ընտրություններին մասնակցեր որպես քաղաքական ուժ, դժվար թե ձայների այդքան մեծ տոկոս ստանար. «Այստեղ խոսքը անհատի մասին է, այլ ոչ թե քաղաքական այն ուժի, որին նա ներկայացնում է: Մի քանի ամսվա ընթացքում նրան հաջողվեց իր կողմը գրավել այս իշխանություններից մեծ դժգոհություններ ունեցող մարդկանց եւ ընտրությունների ավարտին ստանալ առաջնորդի արդյունք», «Հայելի» ակումբում երեկ ասաց Իսկանդարյանը: Ի դեպ, նախագահական ընտրություններից առաջ նա հայտնել էր, որ Սարգսյանի միջեւ, մյուսներն էական դերակատարում չեն ունենա:

Ընտրական ու հետընտրական զարգացումների մասին խոսելիս նաեւ քաղաքագետ, «Ժառանգություն» կուսակցության անդամ **Ստեփան Սաֆարյանը**, նշելով, որ Հայաստանում քաղաքական համակարգի հետ գոյություն չունի նաեւ ընտրական համակարգ: Իսկանդարյանի պես նա էլ է համոզված, որ եթե մեզանում քաղաքական համակարգ լիներ, պատահական մեկը չէր կարող մտնել քաղաքական կյանք ու միանգամից այդքիսի հաջողություն գրանցել: «Կարծում եմ, որ երեւանում ծավալվող իրադարձությունները որոշակի անկանխատեսելիության ռիսկեր են պարունակում: Ուժական ընտրողներով կաճառված ընտրությունն իմքնին անկայունության ռեսուրս է»: Միջազգային դիտորդների գնահատականներն, ըստ նրա, անհասկանալի են, երկիմաստ ու չեն արացոլում իրական պատկերը:

Իսկ թե ինչպես կտեւի Ազատության հրապարակում շարունակվող երգն ու պարը, քաղաքագետները դրա պատասխանը չունեին: Սաֆարյանը այնտեղ հավաքածների մեջ տեսնում է վճռական այն զանգվածին, որն առայժմ նահանջելու մտադրություն չունի: Մեր այն ակնկալիքն, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն ու իր թիմակիցները գործի են դրել 88-ի սցենարը, մոռանալով, որ ի տարբերություն այն օրերի, այսօր իրենք իշխանություն զավթելուց բացի այլ գաղափար չունեն, ու նրանց հետեւից գնացող ժողովուրդը վաղը խաբված վիճակում է հայտնվելու, Սաֆարյանը նախ հանձայնեց, որ 88-ին ժողովրդին միավորում էր Հայաստանի եւ Արցախի անկախության գաղափարը, հետո հավելեց, որ ինքն այսօր հավատում է՝ ժողովուրդն այլեւս չի խաբվի: (Բայց չէ՞ որ նորից է խաբվում):

Իշխանության կարոտախտով տառապող ՀՀՇ-ն պայքարի է դուրս եկել 88-ի սցենարով՝ ցույցեր, երթեր, նստացույցեր, վրաններ, հավանաբար այսօր էլ հարթակ կբարձրանա առոմակայանն ու «Նաիրիտը» փակելու պահանջով հացադուլի նստելու պատրաստ մեկը: Մնում է գործադուլ անելու կոչը, որն այդպես էլ չի հնչի, որովհետեւ ՀՀՇ-ականների օրոք գոցվեցին բոլոր գործարանները:

Միայն թե վաղն Արցախում պատերազմ չսկսվի, որովհետեւ պայքարի առաջին գծում իրենցից ոչ ոք չի կանգնելու: Այն ժամանակ դասագրքի դուրս եկած ուսանողներս լավ են հիշում Թաքեւորական հրապարակում բղավող «դարի մեծագույն գրող» Վանո Սիրադեղյանի խոսքերը՝ «Եթե վաղն Արցախում պատերազմ սկսվի, առաջինը մենք եմք գնալու»:

Մինչդեռ...

Ռ. Պ.

«Հանրահավաքներում ազնիվ մղումներով մարդիկ կան, բայց մտահոգիչը կազմակերպիչների հարցադրումն է»

Ասում է Շ. Քոչարյանը հետընտրական զարգացումների մասին

«Լեւոն Տեր-Պետրոսյանի հրավիրած հանրահավաքներում կան ազնիվ, քաղաքացիական մղումներով հանդես եկող մարդիկ, բայց մտահոգիչը կազմակերպիչների հարցադրումն է, որ անկախ իրենց սացած դիրքերից, իրենք պետք է գան իշխանության», երեկ «Տեսակետ» ակումբում հետընտրական հանրահավաքային զարգացումների մասին ասաց թեկնածու Վազգեն Մանուկյանին անցած ընտրություններում սատարող **Շավարշ Քոչարյանը**: Նա նմանություն գտավ այսօրվա եւ 96-ի իրավիճակների միջեւ՝ նշելով, որ եթե այն ժամանակ ասում էին 100 տոկոս ձայն էլ սացած լինեք, իշխանությունը չենք տալու, հիմա ասում են՝ 50 տոկոս էլ չենք սացել, բայց գալիս ենք:

Շավարշ Քոչարյանի խոսքով, առաջին նախագահի հանրահավաքներին մասնակցում են իսկապես վրդովված եւ պատասսակած մարդիկ, ինչն իշխանությունները պետք է հաշվի առնեն, «բայց վտանգավորն այն է, որ կազմակերպիչները դա կարող են օգտագործել ժողովրդի միջեւ բախումներ, պատակում առաջացնելու համար»: Այս տեսանկյունից նա ողջունելի է համարում իշխանությունների ներկայիս պահվածքը, որ «չկա ծեծ ու քարշ, չկան ձերբակալություններ, ինչպես նախորդ հանրահավաքների ժամանակ»: Շավարշ Քոչարյանը կարծում է, որ այս երկու օրվա ձայների վերահաշվարկները շատ առումներով կազդեն զարգացումների ուղղվածության վրա:

Տեր-Պետրոսյանի թիմի՝ ներկայիս իրավիճակը 88-ի հետ համեմատելու կամ դրան նմանեցնելու քայլերի վերաբերյալ Շավարշ Քոչարյանն ասաց. «88-ի շարժումը մեր բոլորի միասնականությունն էր, այլ ոչ թե իրար հակադրելը: Այսօր հանրահավաքների կազմակերպիչները մեղադրում են բոլորին անխտիր՝ դիտորդներին, բոլոր թեկնածուներին, հեգնում են Սարկոզիին, Ազնավուրին: Սացվում է մի իրավիճակ, որը բոլորովին հակառակն է 88-ի՝ դա ոչ թե միասնականությունն է ազնիվ գաղափարի, նպատակի շուրջ, այլ հակառակը՝ փորձ է պառակտելու՝ օգտագործելով մարդկանց ազնիվ մղումները»:

Նախագահական ընտրությունների վերաբերյալ ակումբի հյուրը նշեց, որ դրանք մի կողմից ուղեկցվեցին ընտրախախտումներով, մյուս կողմից էլ միջազգային դիտորդներն արձանագրեցին դրանց մի քանի առաջ, միջազգային չափանիշներին համապատասխան լինելը: Քոչարյանի խոսքով, դա նորմալ է, քանի որ դիտորդները մեր ընտրությունները ոչ թե զարգացած, կայացած երկրների ընտրությունների հետ են համեմատում, այլ հենց մեր երկրի ընտրությունների հետ: Իսկ մեր ընտրությունների մակարդակն էլ, ըստ նրա, 96-ին այնքան իջեցվեց, որ դրանից հետո այդքան քայլ առաջները մեզ դեռեւս չեն բերում այն արդյունքին, որը ցանկալի է մեր հասարակության, մեր ժողովրդի համար:

Շավարշ Քոչարյանն անդրադարձավ նաեւ Կոսովոյի անկախացմանն՝ ասելով, թե այդ գործընթացը կարելի էր կանխատեսել եւ հակավոր էր ազգային պատրաստ լինել այդ իրադարձությանը, քանի որ «ամենահազգալիը այդ հարցում Հայաստանն ու Ղարաբաղն են, բայց այս ընտրական իրավիճակի պատճառով մեր ուշադրությունը լրիվ շեղվել է այդ չափազանց կարեւոր հարցից»: «Ես ցավով եմ նշում, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը բավականաչափ մեծ ձայներ սացավ, որովհետեւ նրանց, ում որ դա ծեռնտու է, դա օգտագործում են ոչ թե ձայներ ընդդեմ ներկա իշխանության, այլ փորձելու են օգտագործել իբրեւ ձայներ, որոնք ցույց են տալիս, որ Հայաստանի հասարակությունը պառակտված է Լեռնային Ղարաբաղի հարցում: Սա թուլացնում է մեր դիրքերը՝ մենք այս պահին պետք է կարողանայինք հանդես գալ ավելի խելամիտ, միասնական եւ պատրաստված այս գործընթացին: Մնում են այս պահին ծեռնտու հակադարաբաղյան տրամադրությունները», ասաց Շ. Քոչարյանը: Կոսովոյի հարցում Ադրբեջանի պահվածքին (Ադրբեջանը չի ճանաչել Կոսովոյի անկախացումը) անդրադառնալիս էլ ընդգծեց, թե Ադրբեջանի պես մահմեդական պետությունը կցանկանա լավ հարաբերություններ ունենալ Կոսովոյի հետ, սակայն Ադրբեջանը լավ հասկանում է, որ դա նախադեպ է: Սա է Ադրբեջանի երկսայրի վիճակի պատճառը»:

ԳՈՌԻՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ,

Վ. Մանուկյանը լեւոնականների դայքարը ատելության ալիքի վրա ամեն գնով իշխանության հասնելու քայլ է համարում

«Կոչ եմ անում ազատության, արդարության ձգտող բոլոր մարդկանց, չհուսահատվել ընտրությունների արդյունքից՝ կրկին ակնառես լինելով կեղծիքներին: Մեր պայքարը դեռ առջեւում է, եւ մենք լի ենք վճռականությամբ՝ վերափոխելու հասարակության գիտակցությունը դեպի իրական ազգային ու համամարդկային արժեքներ, որոնց դեպքում է միայն հնարավոր կառուցել նոր Հայաստան, հիմնված ազգային ժողովրդավարական սկզբունքների վրա», հայտարարել է երեկ Վազգեն Մանուկյանը՝ իր հայտարարությունը ենթավերնագրելով «Մինչեւ ԿԸՀ-ի կողմից վերջնական արդյունքների հրապարակումը», այսինքն, կարելի է ասել, որ սա Վազգեն Մանուկյանի միջանկյալ հայտարարությունն է: Վերջնական հայտարարությանը պետք է սպասել վերջնական արդյունքների հրապարակումից հետո:

Հայտարարության մեջ ընդհանրություն հայտնելով իր ընտրողներին, իր խոսքերով՝ հասարակության սկզբունքային եւ անկաշառ հատվածին, նա բնութագրել է ընտրությունները որպես «հերթական անգամ մեզ արդեն ծանոթ բազմաթիվ խախտումներով» 1996 թվականից հիմի դրված հակաժողովրդական համակարգի իրականացրած: Մանուկյանն իր հայտարարությամբ էլ հանդես եկավ հանրությունը հանդարտեցնելու մի մեթոդով, որը կանգնեցնել մինչ օրս չի հաջողվում: Բայց հավերժ այդպես չի լինելու»: Միաժամանակ՝ Հայաստանի առաջնորդ նախագահին Վահան Հովհաննիսյանը իմաստնություն ու վճռականություն է մաղթում՝ առաջիկա տարիներին բարեփոխումներ կատարելու, որ «հաջորդ ընտրություններում իշխանությունը պարտավորված չլինի առաջիկայում փոքրին, իշխանական ռեսուրսին, նրա հետ սերտաճած կիսաքրեական տարրերին»: Իսկ մեզ, սիրելի հայրենակիցներ, ես կոչ եմ անում չվհատվել եւ չիհուսաբափվել: Ես ձեզ հետ եմ եւ ուժեղ: Մեր պայքարը երկարատեւ պայքար է», ավարտում է իր հայտարարությունը Վահան Հովհաննիսյանը:

Մ. Խ.

Վահան Հովհաննիսյանը ԱԺ փոխնախագահի պաշտոնից հրաժարվեց

Երեկ ԱԺ փոխնախագահի պաշտոնից հրաժարվել է ՀՀ նախագահի թեկնածու, ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանը: Այդ որոշումը նա պատճառաբանել է երեկ տարածած հայտարարության մեջ, որը նաեւ տեղի ունեցած ընտրությունների գնահատական է պարունակում: «Ամբողջ ընթացքում ես պայքարեցի բացառապես քաղաքական մեթոդներով՝ հենվելով գաղափարական եւ բարոյական արժեքների վրա: Ես ջանք չխնայեցի մրցակցությունը կառուցողական քաղաքական բանավեճի շրջանակներում պահելու, մեր քաղաքացիներին «հանում», այլ ոչ թե «ընդդեմ» կողմնորոշելու համար: Ես փորձեցի մեր քաղաքացիներին համոզել, որ հաղթանակը հնարավոր է», հայտարարել է Վ. Հովհաննիսյանը՝ նշելով, որ դա իրեն չհաջողվեց եւ նախընտրական պայքարի ողջ ընթացքում տիրեց ատելության եւ անհանդուրժողականության մթնոլորտը, որը եւ իր դրոշմն է դրել բուն ընտրության օրվա վրա. «Տարաբնույթ ընտրական խախտումները, ընտրակաբանի համաձայնած բաժանումը, որոշ տեղամասերում կոպիտ բռնությունը, լցոնումները էլ ավելի խորացրին հասարակության մեջ ընտրությունից ընտրություն արմատավորվող կասկածամտությունը եւ անվստահությունը: Նորից սահմանափակվեց ժողովրդի քաղաքական կամքի ազատ արտահայտման իրավունքը, ոտնահարվեց եւ վիրավորվեց մեր քաղաքացիների արժանապատվությունը», ասվում է հայտարարության մեջ՝ տեղեկացնելով, որ ՀՅԴ գերագույն մարմինը ուսումնասիրում է ընտրատեղամասերից սացած հաղորդումները եւ շուտով հանդես կգա հայտարարությամբ: Շնորհակալություն հայտնելով 100 հազարից ավելի իր ընտրողներին եւ բոլոր նրանց, ովքեր «դեռեւս ազնվորեն, իրենց կամքով, չազդվելով կուրացնող ատելությունից, վախից ու ագահությունից», Վ. Հովհաննիսյանը հանդարտության ու զսպվածության կոչ է անում մեր հայրենակիցներին. «Նրանք, ովքեր այսօր փորձում են գնալ ընդվզումի ճանապարհով, պետք է հիշեն ու հասկանան, թե ինչ հանգամանքներ գործեցին եւ ինչ արհավիրք բերեցին մեր ժողովրդի գլխին՝ կոպտորեն կեղծելով 1996 թ. նախագահական ընտրությունները, սանձազերծելով ընտրախախտումների ինքնաբարեալագործվող մի մեթենա, որը կանգնեցնել մինչ օրս չի հաջողվում: Բայց հավերժ այդպես չի լինելու»: Միաժամանակ՝ Հայաստանի առաջնորդ նախագահին Վահան Հովհաննիսյանը իմաստնություն ու վճռականություն է մաղթում՝ առաջիկա տարիներին բարեփոխումներ կատարելու, որ «հաջորդ ընտրություններում իշխանությունը պարտավորված չլինի առաջնորդել փոքրին, իշխանական ռեսուրսին, նրա հետ սերտաճած կիսաքրեական տարրերին»: Իսկ մեզ, սիրելի հայրենակիցներ, ես կոչ եմ անում չվհատվել եւ չիհուսաբափվել: Ես ձեզ հետ եմ եւ ուժեղ: Մեր պայքարը երկարատեւ պայքար է», ավարտում է իր հայտարարությունը Վահան Հովհաննիսյանը:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 01 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հարությունյան 47
Հեռ. 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՀԱՎԵՏ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ / հեռ. 529221
Գործադիր տնօրեն (գովազդ) / հեռ. 582960
Լուսագրության վարիչ / հեռ. 581841
Հասցեագրատիրոջ / հեռ. 582483
Տարբերակ լրահոսում ծառայության / հեռ. 529353
Հասցեագրային տարածքը «ԱԶԳ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր ճանապարհով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր հաստատութեան խստիւ արգիլւում են հանձնարարութեան ՀՅ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տարով յղուած նիւթերը գրախօսային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Կոսովոյի անկախացումը՝ ալբանական ոեսության ընդլայնման ճանապարհ

Արթուր Բաղդասարյանի կամ Լեւոն Տեր-Պետրոսյանի հաղթանակը կնշանակեր Նախիջեւանի ճակատագիր Արցախի համա՞ր

Կոսովոյի անկախություն հռչակելը բավականին հետաքրքրական նոյտակակետեր ունի: Ըստ երեկ «Փասարկ» ակումբում հյուրընկալված խաղաղագետ **Լեւոն Մելիք-Շահնազարյանի**, Արեւմուտի համար նախ հավանական է դառնում նաեւ Վոյեվոդինայի անկախության հեռանկարը: Բացի այդ, Արեւմուտում կձեւավորվի եւս մեկ մահմեդական երկիր՝ Կոսովոյի ալբանացիների շնորհիվ, որ հետագայում կմիանա Ալբանիային: Այդտեղ դրան կարող է միանալ Մակեդոնիայի մի մասը կամ անգամ ողջ Մակեդոնիան, հանի որ այնտեղ ավելի քան 45 տոկոս ալբանացիներ են ապրում:

Դռանով ալբանական ոեսության ընդարձակումը չի ավարտվի: Մելիք-Շահնազարյանի ներկայացմամբ, ալբանական հառավ ունեցող Ցեռնոգորիան եւս կարող է նույն ճակատագիրն ունենալ այնպես, ինչպես Հունասանի ալբանաբնակ հատվածը: Քաղաքագետի մատուցմամբ, հատկապես Միացյալ Նահանգների շրագիրն է այդտիսին, որի համար ընտրվել է մուսուլմանական, ագրեսիվ նոյտակետեր ունեցող եւ բնորոշ ներուժով մի ժողովուրդ:

Ընդ որում, ալբանական մուսուլմանական ոեսության «կերտման» ֆոնին որոշակիորեն նոր փասարկներ հնարավոր կլինի տալ նաեւ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության դեմ արտահայտվելու համար: Մասնավորապես, Եվրոպայում մուսուլմանական ոեսության առկայությամբ կարելի է հակադարձել Թուրքիայի անդամակցության առնչությամբ կրոնական հիմքեր բերելու մոտեցումները, իբր կա մուսուլմանական ոեսություն եւ հարցի կրոնական կողմն չէ անդամակցության դեմ արտահայտվելու հիմք:

Մելիք-Շահնազարյանի խոսքերով, Կոսովոյի անկախության ճանաչումն ինքնին որոշ գործընթաց յուրօրինակ ուղերձ է, մասնավորապես Ռուսասանի դաշնային սուբյեկտներին, ասենք՝ Թաթարասանի, Բաշկորկասանի, Հյուսիսային Կովկասի, Չեչնիայի համար՝ անկախության հայցեր ներկայացնելու:

Ամեն դեպքում, կասկածի ենթակա չէ, որ, ըստ Մելիք-Շահնազարյանի, Կոսովոն դեռ էլի շատ երկրներ կճանաչեն, այդ թվում՝ նաեւ Ռուսասանը, ինչը պետք է օգտագործվի Արցախի պատագայում: Այս համատեքստում Արցախի Հանրաքվեությունը չճանաչելու մոտեցումը խոչընդոտական անբարյակամություն է ազատարհի երկրների կողմից: Ըստ այդմ, Հայաստանը պետք է ակտիվացնի իր արտաքին հարաբերությունը, եւ ամենից առաջ Արցախը պետք է դիմի Կոսովոն ճանաչած եւ ճանաչող երկրներին՝ նույնատիպ խնդրանքով:

Մելիք-Շահնազարյանը գտնում է, որ թեկուզ ընտրական խառն իրավիճակում գտնվելու դեպքում Կոսովոյի անկախություն հռչակելու առնչությամբ Հայաստանի լռությունը սխալ է: Բայց մինչ Հայաստանը, ըստ խոսքերի, պետք է իր անկախության ճանաչման խնդրանքով Կոսովոն առդեմ իսկ ճանաչած երկրներին դիմեր Արցախը, թեկուզ 20-ամյակի առնչությամբ փետրվարի 21-ին տեղի ունեցած հանրահավաքում: Ավելին, այդ խնդրանքը պետք է ափսարհի պետությունների հասցվի հնարավորինս շուտ:

Կոսովո-Արցախ համադրության մեջ Մելիք-Շահնազարյանը ցավով նշեց, որ Արցախի խնդիրն ու Լեռնային Ղարաբաղը դարձել են «ծայրամասային» հարց: Այդ առումով կարելի է երկու մոտեցում դիտարկել. կամ ափսարհի համար կա իսկապես Արցախի Հանրաքվեությունը, կամ այդ խնդրին լավ է ներկա պահին չանդրադառնալը: Ըստ Մելիք-Շահնազարյանի, իրականությանը մոտ է երկրորդ տարբերակը:

Այստեղ խնդիրն այն է, որ եթե Սերբիայի դիրքերը թուլացնելը նշանակում է հարվածել Ռուսասանին, ապա Հայաստանին աջակցությունը՝ ի հակադրություն Ադրբեջանի, կնշանակի հարվածել Արեւմուտի տնտեսական շահերին, ինչը չի արվում: Մինչդեռ այդ կեցվածքն, ըստ Մելիք-Շահնազարյանի, սխալ է այն պատճառաբանությամբ, որ Ադրբեջանն ամեն դեպքում, կաջակցեն ադրբեջանական դիրքորոշմանը, թե ոչ՝ վաճառելու է իր բնական հարստությունները:

Բայց եթե դառաբաղյան հակամարտության լուծումը չգտնվի, ապա, Մելիք-Շահնազարյանի ներկայացմամբ, հաջանական է պատերազմի վերսկսումը, որի ընթացքում «Ադրբեջանն անգամ պլաստիկ շշերով նավթ վաճառել չի կարողանա. թույլ չեմ տա»: Մինչդեռ Արցախի հարցը ծայրամասայինից հանելու համար պետք է ամեն օր խոսել այդ խնդրի մասին:

Առավել հետաքրքրական է Կոսովոյի անկախության ճանաչման վերաբերմունքի եւ մոտեցումների առումով ափսարհում վերադասավորումների դիտարկումը: Ամենից առաջ, Կոսովոն ճանաչեցին այն երկրները, որոնք ազգային խնդիր չունեն իրենց ներսում: Բայց դա միայն իրենց անխնդիր վիճակի արտահայտությունը չէ: Կոսովոյի ճանաչումը, ասենք, Գերմանիայի կողմից, նաեւ հարված է Իսպանիային, որի ներսում գոյություն ունեն Կասալոնիայի եւ բասկերի խնդիրները, որոնք էլ թելադրում են Կոսովոն չճանաչելու իսպանական մոտեցումը:

Հետաքրքրական հակասություն է առաջանում նաեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ: Առաջինը ճանաչել է առդեմ Կոսովոն՝ նկատի ունենալով «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» խնդիրը, Ադրբեջանը ամբողջությամբ դեմ է ճանաչմանը՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Ռուսաստանն չի ճանաչում Կոսովոյի անկախությունը՝ նկատի ունենալով Ղրիմը, եւ այդ կերպ, ըստ Մելիք-Շահնազարյանի, կանգնում է Ռուսասանի կողքին, որ դեմ է Կոսովոյի անկախությանը: «Ազգի» հարցին, թե ինչ հետանկար ունի Ռուսասանի՝ Աբխազիան եւ Հարավային Օսիան ճանաչելու հակադարձումը, Մելիք-Շահնազարյանը կարծիք հայտնեց, թե դա միայն դիվանագիտական խաղ է, որին չի հետեւի այդ տարածքների անկախության ճանաչումը: Իսկ Ղարաբաղի առնչությամբ մոտեցումը նույն ծայրամասային խնդիր դիտարկվում է:

Մելիք-Շահնազարյանի ներկայացմամբ, Կոսովոյի անկախության հարցին Հայաստանի մոտեցումը որոշակի խնդրահարույց պահեր ունի: Հայաստանի կողմից Կոսովոյի ճանաչումը կարող է դառնալ «գործարկման, արձակման մեխանիզմ»՝ տարածքների եւ հողերի անարդար բաշխման համար, քանի որ Կոսովոն տվյալ դեպքում Նախիջեւանն է, «երբ ուժերները հավասարվում են եւ սեղմում պետություն, բնակեցնում ուրիշներով»: Հայաստանի պարագայում պետք է գրավոր դիմել միջազգային կառույցներին, պարզաբանելով, որ եթե անարդար տարածի անկախությունն է ճանաչվում, ապա Արցախի ճանաչումն անհերքելի է:

Կոսովո-Արցախ համատեքստում անդրադառնալով Հայաստանի ներքաղաքական իրավիճակին, Մելիք-Շահնազարյանը ընդգծեց, որ Կոսովոյի անկախությունը հռչակվեց Սերբիայում արեւմտամետ Բորիս Տադիչի հաղթանակից հետո: Եթե Հայաստանում էլ նախագահ ընտրվեր ընդգծված արեւմտամետ թեկնածու, Արցախը կունենար Նախիջեւանի ճակատագիր: «Ազգի» հարցին, թե ովքեր են արեւմտամետները, Մելիք-Շահնազարյանը պատասխանեց. «Արթուր Բաղդասարյանը եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որոնց եւ սեփական էությունը, եւ մտածելակերպը շատ ավելի ձգտում են դեպի Արեւմուտ, քան դեպի Հայաստան»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 11.00-ին ՀՀ ԱՌԻ-ի բարձրաստիճան սպայակազմը՝ ՀՀ պաշտպանության նախարար Միհայել Հարությունյանի գլխավորությամբ կայցելի «Հաղթանակ» զբոսայգի՝ Անհայտ զինվորի գերեզմանին ծաղկեպսակ դնելու համար:

Երկուշաբթի

◆Ժամը՝ 10.00-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում կազմակերպվում է «Հանդուրժողականությունը եւ այլասերությունը հարավկովկասյան տարածաշրջանում» միջազգային գիտաժողով:

◆Ժամը 11.00-ին «Ուրբաթ» ակումբում ԵՄՍ-Ն կներկայացնի ՁԼՄ-ների մոնիտորինգի տվյալները:

◆Ժամը 12.00-ին «Երեւան» հյուրանոցում Վերակառուցման եւ զարգացման բանկը կներկայացնի Հայաստանի մասին զեկույց:

Ընտրախախտումների վերաբերյալ հարուցվել է 10-րդ քրեական գործը

ՀՀ նախագահի ընտրությունների ընթացքում թույլ տրված խախտումների վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում փետրվարի 22-ի դրությամբ հարուցվել է 10 քրեական գործ: Նախորդ 9 քրեական գործերի մասին տեղեկացրել էինք, իսկ 10-րդը ՀՀ գլխավոր դատախազությունում գրանցվել է ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի Գյումրիի նախընտրական շտաբից, որ «Ժողովրդական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մանկեանն իր համախոհների՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի Գյումրիի նախընտրական շտաբի պետ Մուրադ Գրիգորյանի, Գյումրիի զինվորական ոստիկանության նախկին պետ Ատոմ Զաքարյանի ու Շոթա Սաղաթելյանի հետ ներխուժել են Գյումրիի թիվ 34/06 ընտրատեղամաս, հայհոյել եւ սպառնացել հանձնաժողովի անդամներին:

Նախապատրաստված նյութերի հիման վրա փետրվարի 22-ին հարուցվել է քրեական գործ:

ՄԱՐԻՈՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Անհայտին «միացող» հանրահավաքը, լռակյաց Ձիանգիրյանն ու...

1-ին էջից

Իսկ պատասխան հուշողը հարթակում հայտնված Հայաստանի գլխավոր դատախազի, թերեւս առդեմ նախկին տեղակալ Գագիկ Ձիանգիրյանն էր: Նախկին, հանի որ Ձիանգիրյանի նման մարդիկ լավ գիտեն օրենքները, ու թերեւս նրա համար հասկ է, որ էլ իր պոստում չի կարող լինել: Ամեն դեպքում, Ձիանգիրյանի «հայտնությունը» Ազատության հրապարակում բավականին տպավորություն գործեց ներկաների վրա, եւ այդտեղ վանկարկումների ընթացքում վեր բարձրացվող բռունցքները որոշակիորեն շատացան:

1995 թվականի խորհրդարանական խայտառակ ընտրությունների ժամանակ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացնող Ձիանգիրյանն, այնուամենայնիվ, հայտարարեց, թե նման կեղծիքներով ընտրություններ չի տեսել: Վերջին ժամանակներս հիշողության խնդիր այնքան է արծարծվել, որ մեր կողմից անդրադարձի անհրաժեշտություն չկա:

Դրա փոխարեն ժամանակի զինվորական դատախազը, որ վերահսկում էր նաեւ «հոկտեմբերի 27-ի» գործի քննությունը, հրապարակում հայտարարեց, թե այդ գործի՝ կազմակերպիչների առնչությամբ անջատված մասով քննությունն անօրինական կարճվեց եւ տուսով այդ նոր հանգամանքների մասին կտեղեկացնեն հանրությանը: Իսկ զուտ քաղաքական առումով, ինչի իրավունքը գլխավոր դատախազի տեղակալն ուղղակի չունի, պարզվեց, որ Գագիկ Ձիանգիրյանը միանում է ԼՏՊ քաղաքական գնահատականներին: Ի դեպ, Ձիանգիրյանի կարծիքով, ԼՏՊ-ն ընտրված նախագահ է, բավական չէ, դեռ պետք չէ այլեւս նրան կոչել առաջին նախագահ, այլ դրա փոխարեն՝ երրորդ:

Իսկ մինչ նախկին զինդատախազի հայտնվելը հրապարակում ելույթ ունեցողներն ավելի շատ տարբեր վանկարկումների կոչեր էին անում, հրապարակում առանց նեղվածքի կանգնած մարդիկ դրանց արձագանքում էին բռունցքների թափահարմամբ: Մի պահ ելույթ ունեցողի ձայնի բարկությունը հիշեցրեց Ատոմ Մանուչարյանի ելույթները դեռեւս շարժման սկզբի հավաքներում, որոնք որակական բացարձակապես այլ բովանդակություն ունեին: Իսկ գլխներից վերեւ բռունցքները բնավ էլ հաճատարած չէին:

Բացի Ազատության հրապարակի կենտրոնական հատվածից, մնացյալ տեղերում բռունցք բարձրացնող ու «միացում» գոռացող չկար: Հենց բեմահարթակի առջեւում կանգնած մի խումբ աղջիկներից ոչ մեկը չպատասխանեց հարցին, թե ինչու են «միացում» գոռում: Ում կամ ինչի են ուզում միանալ, եթե դա է իրենց ցանկությունը: Ամեն դեպքում, աղջիկները, կարծես թե այնքան, որ անգամ սազական չէր լինի լսարանի նստարաններին «նստելու» համար, վայելում էին արդեն հաջորդ օրվա «դասադուլը» այն տարաբանությամբ, որով հարթակից դասախոս իրեն ներկայացնող մեկը կոչ էր անում առավոտից հենց նույն հրապարակ գալ՝ բուն գնալու փոխարեն:

Մինչեւ հանրահավաքային ժողովրդին Գագիկ Ձիանգիրյանի «միացումը»՝ հրապարակում ելույթ ունեցողը խորհրդարանական դարձած միակ ընդդիմադիր կուսակցության՝ «Ժառանգության» առաջնորդը: Ռաֆֆի Հովհաննիսյանի խոսքն ու մոտեցումը այդպես էլ հասկանալ չհաջողվեց: Եկել էր Սերժ Սարգսյանին այդքանի ձեռքից փրկելու առաքելությամբ, թե՞՝ «ժողովրդավարություն», «օբյեկտիվություն», ավելին, «ազնվություն» հասկացություններին «տիրապետելու» սեփական ձիրքը փաստելու:

Ինչեւէ, չմոռանալով Սերժ Սարգսյանի ավանդը արցախյան ազատագրական պայքարում, Հովհաննիսյանը կոչ էր անում նույն Սարգսյանին «սեփական կենսագրության վերջին գլուխ»-ում առաջ ճիշտ դիրքորոշում ունենալ, ճիշտ վարվել: Առավել հետաքրքրական էր, որ, ըստ Հովհաննիսյանի, ընտրական հանձնաժողովներում սեփական տեղը զբաղեցնելու անընդունելի իր կուսակցության ներկայացուցիչները «չէին կանգնելու հարթակին, այլ տարալուծվելու էին ժողովրդի մեջ»:

Ինչպես ասում են՝ «յուրաքանչյուրի մեղքն իր վիզը»:

Բայց ամենակարեւոր երեւույթը երեկվա հանրահավաքում թերեւս այն մեկ պահն էր, երբ հավաքածների գլխավերեւում բռունցքների միասնական, միահամուռ ալիք բարձրացավ: Սակայն դա անձի, կուսակցության գովերգման, կամ իշխանություններին հայհոյախոսող վանկարկումների առնչությամբ չէր:

Ինչ էլ ասելու լինենք, Ազատության հրապարակում մեկ բան վստահաբար միշտ միավորել է եւ ուտախալի է, որ դեռ միավորում է մեզ՝ անկախ սերժ-ռոբերտյանական «ավազակապետությունից», կամ «լեւոնական վկաների» գործողություններից: Երբ Ռաֆֆի Հովհաննիսյանը դիմեց հավաքածներին մեկ ոտքն լռությամբ հագցնելու արցախյան ազատամարտի հերոսներին, Ազատության հրապարակը, թեեւ թվականով զգալի զիջում էր, հիշեցրեց 88-ի նույն ամսվա իրադարձությունները:

Բայց միայն այդքանը: «Միացում» բղավողներից ովքե՞ր էին, տեսնես, էլի կանգնած եղել 88-ին այդ նույն հրապարակում, երեկ ինչին միանալու մասին էին գոռում: Հանրահավաքային հարեւան տիկնանցից մեկը, որ ակնհայտորեն բարեկեցության ոերաճներից լիովի օգտվում էր, ձայն չէր հանում: Երբ հարեւան տիկինը, որի մուսակը շատերի ափսաստվարձի տարեկան կուսակումների դեպքում անգամ մաչելի չի դառնա, հորդորեց, թե «այլիս ուզում ես գոռալ, ինչի չես գոռում», առաջինը պատասխանեց. «Ձայն չունեմ»: Ավելի հեռվից արձագանքը չուշացավ. «Ձենը գոռալուց է բացվում»:

Իսկ երբեր ու հավաքներ կազմակերպողները լավ են տիրապետում այնպիսի տեխնոլոգիաների, որ «ձայնը բացվի»: Ավելին, թեեւ անընդհատ հնչում են իշխանությունների սպրդանքներին չենթարկվելու հայտարարություններ, բախումը կարող է անխուսափելի դառնալ սադրանքի բոլոր ձեւակերպումներով: Բայց մինչ այդ հանրահավաքային իրականությունը ամբոխն էր, եւ «Լեւոն ջան» կոչնող ծերուին, որ երեկվա ու նման օրերի անօրինակ վաստակով հրճված արեւածաղկի սերմ վաճառողների նման, իր գուցե թե արդեն վաղվա հացն էր մուրում:

Ժողովրդավարությունը վաս է, բայց դրանից լավ բան դեռ մարդկությունը չի ստեղծել: Այս խոսքերն ասվել են վաղուց, բայց արդիական են այնքանով, որ ամբոխը չի որոշում ապագան: Եվ եթե մի քանի հազար մարդ պահանջներ ունեն, մնացյալ հարյուր հազարները շարունակում են իրենց առօրյա իրականության մեջ ապրել: Իսկ ժողովրդավարությունը ամենից առաջ մեծամասնության իրավունք եւ իրականություն է:

Գերմանական լրատվամիջոցներում ՀՀ նախագահական ընտրություններին զուգահեռվում է ղարաբաղյան հակամարտության թեման

«Վարչապետ Սարգսյանը դարձավ նախագահ», սա Հայաստանի նախագահական ընտրությունների վերաբերյալ փետրվարի 20-ին գերմանական լրատվամիջոցների առավել հաճախակի մեջ հանդիպած վերնագիրն էր: Շատերն, իհարկե, տեսից չէին խուսափել «Կրեմլի բարեկամը դարձավ նախագահ» վերնագիրն էր ընտրել, օրինակ, «Ցնցադոյլ ցայթունգը», Սերժ Սարգսյանի՝ Հայաստանի նախագահական ընտրություններում տարած բացարձակ առավելությամբ հաղթանակը 55,62 տոկոս ներկայացնելով: Հիմք ընդունելով հնարքային գործակալության տրամադրած տվյալները, գերմանական լրատուն այնուհետև նշել էր, թե զլխավոր մրցակից՝ 21,41 տոկոս գրանցած Տեր-Պետրոսյանը ուսաց բարեկամ Սարգսյանին մեղադրում է ընտրակեղծիքների մեջ եւ չորեքշաբթի օրվանից զանգվածային բողոքարշավ սկսում: Քոչարյանը գնահատել է քվեարկությունը՝ որպես երկրում ժողովրդավարության առաջընթաց: 600 դիտորդ է մասնակցել ընտրությանը: Նրանք ակնկալում են, որ Սարգսյանն իր նախորդի նման Մոսկվային հավատարիմ կուրս է որդեգրելու եւ հարեւան Ադրբեջանի ու Թուրքիայի հանդեպ կարծր դիրք շարունակելու է: «Ցնցադոյլն ցայթունգի»՝ հիշյալ կարծիքը, ինչպես նաեւ ընտրակեղծիքներին վերաբերող տեղեկատվությունը փոխանցել են նաեւ այլ լրատվամիջոցներ՝ «Վելթը», «Շտիգել-օնլայնը» (սա մասնավորապես նշում է Արմեն Սուքիասյանի հայտարարածը, թե Տեր-Պետրոսյանի հակակիրները նաեւ ծեծի են ենթարկվել): «Վելթը» հրագեկում է նաեւ, որ Արթուր Բաղդասարյանի սեպագած քվեները 16, 8 տոկոս են կազմում:

«Ընդդիմությունը իշխանություններին մեղադրում է ընտրակեղծիքների մեջ» վերնագիրն է ընտրել «Ֆրանկֆուրտեր ռունդշաուն»: Ներկայացնելով ընտրական հանձնաժողովի տվյալները, ըստ որոնց՝ պահպանողական Հանրապետական կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանը ստացել է մոտավորապես 53 տոկոսի քվե, նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 21 տոկոս: Մի քանի հազար ցուցարարներ են հավաքվել ժայռափաղաքներեւանում՝ ընտրարդյունքները բողոքարկելու նպատակով: «Այս թվերը իրականության հետ կապ չունեն, իսակ՝ մենք ավելի առաջ ենք», Տեր-Պետրոսյանի մամուլի խոսնակ Արման Սուքիասյանի խոսքերն է մեջբերում «Ֆրանկֆուրտեր ռունդշաուն»՝ այնուհետեւ ներկայացնելով առաջին նախագահի հայտարարությունը, թե կեղծվել են քվեաթերթիկները, գնվել են ձայներ եւ ահաբեկել են իր կողմնակիցներին:

Նախագահական ընտրության հայեցակետում երկու գործոն կա՝ սնտեսական եւ ԼՂՀ կարգավիճակին վերաբերող: Հենվելով Կոսովոյի անկախության հռչակման փաստի վրա, կառավարությունը պահանջում է նույն որոշումը մեծ մասամբ հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղի համար, ինչը մերժում է Ադրբեջանը, հաղորդում են «Ֆրանկֆուրտեր ռունդշաուն», «Վելթը», իսկ «Դոյչե վելլեն» նույն պարբերությունը «բարձ» ենթավերնագրով է գոտեւորում՝ «Լեռնային Ղարաբաղ՝ մի նոր Կոսովո»: Պարբերությունը զեղեցած լրատվամիջոցները հիշեցնում են, որ Տեր-Պետրոսյանը 1998-ին սեղմված է եղել հրաժարական տալ՝ Ադրբեջանի հանդեպ փոխզիջումային քաղաքականության պատճառով: 1994-ին ավարտված Ղարաբաղյան պատերազմը խլել է 30 000 կյանք, 1 միլիոնից ավելի փախստական են դարձել:

«Դոյչե վելլեն» նշում է, թե արեւմտյան դիտորդները ինքնադատել են, որ տեղեկատվամիջոցները գերակշիռ մասով լուսաբանել են Սարգսյանի ընտրապայքարը: Ուշագրավ է նույն աղբյուրի փետրվարի 14-ին հեռարձակած հաղորդումը, որի հեղինակ Բրիտտա Քլեյմանն իր հաղորդումը վերնագրել էր՝ «Ընտրություններ Հայաստանում. եվրոպային մերձենալու ինդիկատոր»: Անդրադառնալով այն փաստին, որ 9 թեկնածուներից միայն երկուսը կամ երեքն ունեն հաղթելու իրական հնարավորություն, լրագրողը նշում է, որ նախընտրական հարցումներով կայուն 50-60 տոկոս քվե ունեցող 54-ամյա Սարգսյանի հետ են երկրի արդիականացման հույսը կապում նրա ընտրողները: Նախագահի պատճառնում նրա զլխավոր ադվերսարը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը արդեն մի անգամ եղել է երկրի գլխին: Հրաժարականից ավելի քան 10 տարի անց նա նորից հաղթականություն է վերադառնում: Շատ հայեր միայն վատ հիշողություններ ունեն 90-ականների՝ նրա պատճառնավարման տարիների մասին, երբ էներգետիկ ճգնաժամն ու պատերազմն իշխում էին երկրում: Հիմա համոզված համակիրներն են նրան վստահում, ասելով, թե երկրում միայն նա կարող է իրադրությունը բարելավել:

Ընտրություններում հավասի հնարավորություն ունի նաեւ խորհրդարանի նախկին նախագահ Արթուր Բաղդասարյանը: Նա եվրոպամետ հասակ կուրսի պատճառն է եւ հարցումներով՝ 13 տոկոս ընտրական ունի: Ներաղաքական խնդիրներին զուգահեռ այս ընտրություններում արտաքին քաղաքականն էլ կարեւոր դերակատարում ունի, ընդգծում է Բրիտտա Քլեյմանը, հավելելով՝ հարավային կովկասում այս փոքր պետությունը այնուհետեւ կկողմնորոշվի դեպի ավանդական դաշնակից Ռուսաստանն, թե՞ կմերձենա եվրոպային: Հայաստանը մաս է կազմում ԵՄ նոր հարեւանության քաղաքականությանը եւ շարունակ պնդում է եվրոպային՝ իր մտադրությունի պատկանելության մասին: Բայց եւ այնպես Հայաստանի կարեւորագույն արտաքին քաղաքական գործընկերը Ռուսաստանն է: Երկու երկրներին միացնում են քաղաքական, սնտեսական, ռազմական կապերը: Այնուհետեւ «Դոյչե վելլեի» մեկնաբանը անդրադառնում է օրեր առաջ ԵՄ արտաքին կապերի հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդների տարաբաշխված կատարած այցին, որի ժամանակ հայտարարել էր, թե նախագահական ընտրությունների ընթացքն այն ինդիկատորն է, որը պիտի ցույց տա, թե երկիրը որքան լուրջ է վերաբերվում եվրոպային եւ նրա արժեքներին մերձենալու իր ցանկությանը:

Հայաստանի նախագահական ընտրությունների օրը՝ փետրվարի 19-ին գերմանական հեռուստատեսության առաջին ալիքը՝ ARD, իր առավոտյան եթերը սկսեց Կոսովոյի անկախությանն անդրադառնալով, իսկ ՀՀ ընտրությունների հանդեպ ուշադրությունը բացատրեց ղարաբաղյան հակամարտության առկայությամբ՝ այդուհետեւ մասնավորեցնելով, թե այն պատկանում է Ադրբեջանին, բայց Հայաստանի տիրապետության տակ է:

Փետրվարի 20-ին նույն լրատվամիջոցի Մոսկվայի թղթակից Քրիստինա Նագելը 2,14 րոպե տեւողությամբ իր հաղորդումը սկսեց Սարգսյանի համակիրների ուրախ աղմուկով՝ մեկնաբանելով, թե գիշերն արդեն նրանք կարող էին տոնել իրենց թեկնածուի հաղթանակը: Զայների հաշվարկից առաջ էլ պարզ էր, որ նա առաջին փուլում հաղթելու է, ասաց մեկնաբանը՝ այնուհետեւ ներկայացնելով Գարեգին Ազարյանի զեկուցած քվաբանությունը, ըստ որոնց՝ Ռուսաստանի բարեկամ թեկնածուն ավելի շատ քվե է ստացել ՀՀ առաջին նախագահի համեմատ: Ապա ներկայացրեց ԱՊՀ դիտորդական առաքելության ղեկավարի գնահատականը՝ խոսել են վստահված անձերի, այլ առաքելությունների դիտորդների հետ՝ չկան լուրջ ենթադրելի կետեր: Առանձին դեպքերում դրանք տեխնիկական դեպալներ են, որոշ դեպքերում ցուցակներում անունները ոչ ճիշտ էին գրված, նշանակություն չունեցող սխալներ եղել են, ինչը չի կարող քվեարկության բնույթի վրա ազդել: Ընտրողի իրավունքի ոտնահարման մասին խոսք լինել չի կարող, նշեց առաքելության ղեկավարը: Ընդդիմության առաջնորդ Տեր-Պետրոսյանը խոսում է զանգվածային կեղծիքների՝ իր համակիրներին ծեծելու, ահաբեկելու մասին ու կոչ անում բողոքի զանգվածային ցույցերի, շարունակեց ARD-ի մեկնաբանը՝ նաեւ նկատել տալով, թե ընտրության ոչ ազատանքային երեքաթթին հանգույսն կիրակիից լիովարվելու հիմ օրերի վարժություն է:

«Ուղղության ընտրություն Հայաստանում»՝ նախագահական ընտրությունների մասին հոդվածում փետրվարի 21-ին «Ֆրանկֆուրտեր ռունդշաուն» անդրադառնում է ղարաբաղյան հակամարտությանը, որը «հին ու բարդ» է որակում: Հոդվածագիր Կարլ Գորբեն նկատել է տալիս, որ թե՛ Քոչարյանը, թե՛ նրա ցանկալի հաջորդը սերում են Սեփհանակերից, իսկ Տեր-Պետրոսյանը՝ քաղաքական ներկա է վերադարձել Հայաստանի միջնադարյան պատմությունից, ինչի մասին գրում էր վերջին տարիներին: Նա ընտրությունների ֆավորիտը չէ: Նրա վերադարձի ճանապարհին 53-ամյա վարչապետ Սերժ Սարգսյանն է կանգնած: 15 տարի առաջ Սարգսյանի ու Քոչարյանի քաղաքական հայրենիք «Ղարաբաղ» կոմիտեն անկախություն հռչակեց: Մի՞ Հայաստանի պատճառնավարող նախագահը, ո՛չ էլ նրա ֆավորիտ հաջորդը չեն կամենում սակարկել: Դրան հակառակ Տեր-Պետրոսյանը սակարկելու պատրաստակամություն է ակնարկել՝ միգուցե հնարավոր համարելով տարածային փոխանակությամբ թեթեւացնել նավթի պատճառներով հարուստ եւ սնտեսապես հզոր հարեւանի հետ հաղորդակցության գործը: Բախվում, արդարեւ, ավելի սիրով նրա, քան Սարգսյանի հաղթանակին են սպասում: Մեկ ուրիշ պատժական հակամարտություն էլ Հայաստանը Թուրքիայից է բաժանում, գրում է «Ֆրանկֆուրտեր ռունդշաուն»՝ հավելելով, որ 1915-ին Արեւելյան Անատոլիայից հայերի բռնի տեղահանումը «էքնիկ մաքրագործում է», ինչը ճանաչել իբրեւ եղեռն Թուրքիան մինչ օրս մերժում է:

Այսպես թվերից կտրված Հայաստանը ճարահատյալ ապավինում է միակ դաշնակից Ռուսաստանին: Հայաստանի 3,3 միլիոն քաղաքացիների համար կարեւորագույնի՝ սնտեսության զարգացման վարդապետն հեռանկար չկա, ամփոփում է «Ֆրանկֆուրտեր ռունդշաուն» հոդվածագիրը:

«Թուրքիան Հայաստանի հետ նորմալ հարաբերությունների հաստատման հույս է հայտնում» այս վերնագրով գերմաներեն հաղորդագրություն էր տարածել փետրվարի 21-ին «Ռոյթեր» գործակալությունը՝ նկատի ունենալով նախագահ Գյուլի՝ նորընտիր նախագահ Սարգսյանին ուղղված շնորհավորական ուղերձում արտահայտած հույսը: «Հակառակ Սարգսյանի, նրա նախորդ Ռոբերտ Քոչարյանը Թուրքիայում կարեւոր դիրքի ներկայացուցիչ է համարվում», փոխանցում է «Ռոյթերը»:

ԱՆԱՏՈՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Ամերիկահայ համայնքը երկար ճանապարհ է անցել

Բայց կարող էր ավելին հասնել, եթե ավելի ակտիվ լիներ, համոզված է Հարութ Սասունյանը

Բոլորս էլ կարող ենք վերհիշել այն ժամանակները, երբ հաղթական բարձրաստիճան անձնավորություններից մեկը, ներկա լինելով մեր տարեկան ձեռնարկներից մեկին, զգվանքով խոսում էր հայերի ձեռքբերումների մասին: Ներկաները հոգնկայս ծափահարություններով էին դիմավորում նրան, եւ եթե նա մի քանի հայերեն բառ էլ արտասանում էր, արդա հնարի տեղ էին դնում նրան:

Այդ ժամանակներն անցել են: Կոնգրեսի անդամների այցելությունները հայկական հավաքներին մեր օրերում դարձել են սովորական: Սոչիի 24-ի ոգիով կազմակերպված հուշ-երեկոներին բանախոսություններով հանդես են գալիս նահանգային կառավարիչները, հաղթահարելը: Հակառակ կառավարության դիրքորոշմանը, նրանք Հայոց ցեղասպանության հիշատակի օրեր են նշանակել: Համարյա բոլոր նախագահական ընտրություններից առաջ թեկնածուները պարտ են համարում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հանդես գալ, դրանով իրենց աջակցությունը ցուցաբերելով հայկական ամենաարագ խնդիրների լուծմանը:

Այո, ամերիկահայ համայնքը երկար ճանապարհ է անցել, ձեռքբերումների համար մեզ պարտական ենք ամերիկահայ կազմակերպությունների ակտիվ ափտասանին եւ հասկանալ նվիրվածությանը համայնքի այն հազարավոր անդամների, որոնք նեցդավված են հաղթական կյանքի անցուդարձում եւ կամ նյութական օգնություն են ցուցաբերում նրանց: Կան նաեւ ուրիշներ, որոնք հաղթական պատճառներ են զբաղեցրել: Նրանցից մեկը՝ Տորջ Դոմնեջյանն, օրինակ, ընտրել է Կալիֆորնիայի նման մեծ նահանգի կառավարիչ: Ուրիշ ամերիկահայեր զբաղեցրել են բարձր պատճառներ, դարձել Կոնգրեսի, հաղթահարեցառնի, հաղթային խորհրդի անդամներ կամ առարարության ղեկավարներ: Տիգրան Տեւրիզյանը՝ առաջին հայ դաշնային դատավոր, Արմենդ Արաբյանն ու Մարկին Բախտեր՝ Կալիֆորնիայի գերագույն դատարանի դատավորներ:

Հակառակ այս բոլորին, առավել նշանակալի ձեռքբերումներ կարելի էր ունենալ, եթե ավելի ակտիվ ու ավելի կազմակերպված ափտասիկներ: Դժբախտաբար, միշտ գտնվում են մարդիկ, որոնք լուսանցային դիրք բռնելով, ոչ միայն իրենք չեն մասնակցում տրված ափտասանին, այլեւ խոչընդոտում են նրանց, ովքեր հաղթականաթես ակտիվ են: Դրանով նրանք տարհանոգում են նաեւ ուրիշներին, որոնք պատրաստ են իրենց լուսանն նետելու համայնքի ափտասանքներում: Նրանք կիսալեցուն բաժակը համարում են կիսադատարկ եւ առարկում, որ իմաստ չունի զբաղվել հաղթական հարցերով, քանի որ հաղթագեներին ընդհանրապես չդեմ է վստահել, երկրորդ՝ քանի որ ոչ ոք թույլ չի տա, որ հայերն իրականացնեն իրենց մտադրությունները: Այդ անգործունյա հայերը հոգեվարում են ծախսել ժամանակ, եռանդ եւ փող հայկական խնդիրներին լուծում տալու համար: Փոխանակ այդ էքնիկական խմբավորումների ձեռքբերումներից օրինակ վերցնելու, սեւացնում են նրանց ափտասանը: Վերցնենք Ամերիկահայերական կոմիտեի (ԱՀԿ) օրինակը, որը պատրաստվում է Նյու Յորքում նշելու իր հիմնադրման 102-րդ տարեդարձը: Այդ միջոցառման համար նրանք հրավիրել են ՄՄԽ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունին, ոչխարատուպար Կոնդոլիզա Ռայսին, Ֆրանսիայի վարչապետ Ֆրանսուա Ֆիլոնին, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովին, Արարատի միջազգային հիմնադրամի նախագահ Դոմինիկ Ստրաս-Կանին, Կոլումբիա հանրապետության նախագահ Լի Բոլինգերին, Մարոկկոյի արտգործնախարար Թահիր Ֆասի Ֆիհրին եւ Վուդրո Վիլսոնի անվան համալսարանի ռեկտոր Էն-Մարի Սլոթերին:

Չեմ զարմանա, եթե ոչ հեռու ապագայում ամերիկահայ կազմակերպությունները նույնպես նման պատկառելի անձնավորությունների հրավիրեն իրենց տարեկան միջոցառումներին կամ համերգահանդեսներին: Վերջին տարիներին ՀԲԸՄ-ն, Հայ դատը, Հայկական համագումարը, էջմիածնական եւ Անթիլիասական պատրիարքարանները, այլ կազմակերպություններ արդեն իսկ անցկացրել են բարձրաստիճան հանդիպումներ, որոնց ներկա են եղել շատ հեղինակավոր բարձրաստիճան դիտորներ:

Երկրորդ չափանիշը, որով կարելի է դատել համայնքի առաջխաղացումը, դրամահավաքներն են, տասնյակ ամերիկահայ կազմակերպություններ տասնյակ միլիոններ են տարեկան հավաքել զանազան հայկական խնդիրների լուծմանը: Դրանցից ամենանշանակալին Հայկական հիմնադրամի տարեկան հեռուստամարաթոնն է:

Քաջալերելու համար ամերիկահայերին եւ մղելու նրանց ավելի ակտիվ գործունեության, տեսնենք, թե ինչպիսի հաջողություններ է արձանագրում ամերիկահրեական համայնքը: Ըստ վերոհիշյալ ԱՀԿ-ի նախագահ Հոուարդ Ռիգերի հաղորդումների, Հյուսիսային Ամերիկայի հրեական դաշնության համակարգը անցյալ տարի 2,4 միլիարդ դոլար է կարողացել հանգանակել: Այս խմբավորումն այժմ ավելի քան 13 միլիարդ դոլար ունի իր հիմնադրամում: Այդ գումարը տարեկան մոտ 4 միլիարդ դոլարով ինքնաբերաբար ավելանում է: Հասկանալի է, որ ԱՀԿ-ն ավելի հին է, ավելի բարգավաճ եւ կազմակերպված, քան ամերիկահայ համայնքը: Բայց հայերն էլ կարող են ավելին հասնել, եթե ընդարձակեն իրենց գործունեությունը:

Այո, ամերիկահայ համայնքը երկար ճանապարհ է անցել եւ դարձել մի մասնիկը ամերիկյան քաղաքական դաշտի: Առավել կազմակերպված, առավել ակտիվ գործունեություն ծավալելով եւ անտարբեր, անգործունյա զանգվածներին ներգրավելու ճանապարհով հայկական համայնքը կարող է էապես բազմապատկել իր սնտեսական եւ քաղաքական ներուժը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային ասպարեզներում:

Թարգմ. Հ. Ս.

23 ՓԵՏՐՈՒԱՐ 2008·ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ ԱՄԱՍՈՒՅԹ

Դարբերականություն՝ երկաբաթյա

Թիվ 4(47)

ԲԱԽՏԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Սիրանույշի ծննդյան 150-ամյակի առթիվ

Սիրանույշը Երեւանում

Ազգանց չափազանցության կարելի է ասել, որ հայ բեմի մեծ դերասանուհի Սիրանույշը (Մերոմե Սահակի Գանթարճյան, 1857 Կ. Պոլիս-1932 Կահիրե), հանճարեղ հային թատրոնի մեծություններից մեկն է: Նա անունը ոչեմ է դասվի Ֆրանսուհի Սառա Բեռնարի, իտալուհի (հայկական ծագումով) Էլեոնորա Դուզեի, ռուսներ Գլիկերիա Ֆեդորովայի, Մարիա Երմոլովայի, Մարիա Սավինայի, Վերա Կոմիսարժեւսկայայի շարքում, իբրեւ մեծ ողբերգակ դերասանուհի, որի ավելտով հիացել ու գնահատել են նաեւ օտարազգի հանդիսատեսներն ու թատերական քննադատները:

Մեր դժբախտությունն այն է, որ փոքր ազգ լինելով, դժվար ենք ընկալվում ուրիշների կողմից: Բայց ավելի ցավալին այն է, որ մենք չենք կարողանում մեր մեծություններին ներկայացնել աշխարհին: Մեկ ունենար Վահրամ Փափազյան, որ մի քանի լեզվով մենագրություն չգրեր նրա մասին: Մեր ազգային ունեցածն էլ միայն հիշողություններ են: Մեկ ունենար Սիրանույշ, որ ուրիշ լեզուներով չգրաներ նրա փառքը միջազգային թատերական կյանքում: Այս տեսակետից մի փոքր բացառություն է կազմում Պետրոս Անդամյանը, որի մասին նախախորհրդային տարիներին երկու փոքրիկ գիրք է տպվել (ռուսերեն), իսկ խորհրդային տարիներին՝ ընդամենը մեկը, այն էլ՝ շեխովյան առումով: (Խոսքը հայերենի մասին չէ):

Սիրանույշն ապրել է 75 տարի, որից 60-ը նվիրել է բեմին, խաղացել է 200-ից ավելի հոգեբանական բարդ եւ հուժկու խառնվածք ունեցող դրամատիկ ու ողբերգական դերեր, գնահատվել հայ եւ օտար թատերական գործիչների կողմից, փառավոր ու դժբախտ օրեր ունեցել, սիրել ու սիրվել է հարազատ ժողովրդի կողմից, եղել է մայրենի լեզվի անաղարտության ու ոգեհարման ջերմ պաշտպան ու ջատագով, ուշադիր՝ շրջապատի ու ընկերների նկատմամբ, երբեմն կամակոր ու անհնազանդ, երբ ոտնահարվել են իր իրավունքները, բայց միշտ մնացել է բեմի երկրպագու, արվեստի նվիրյալ, հարազատ ժողովրդին նվիրված, թատրոնից դուրս այլ կյանք չունեցող մի ասուր, որի նմանը դժվար է պատկերացնել:

Աշխարհագրական մեծ ընդգրկումներ են ունեցել Սիրանույշի բեմական գործունեության շրջանակները՝ Թուրքիա, Հունաստան, Բուլգարիա, Ռումինիա, Անդրկովկաս եւ Ռուսաստան (Նեռոդալ Մոսկվան ու Պետերբուրգը), Միջին Ասիա եւ Պարսկաստան, Եգիպտոս: Շատ որում, մի շարք երկրներում հանդես է եկել մի քանի անգամ: Որոնք էլ Հյուսիսային Կովկասում խաղից-խաղալ գնալիս վախեցել է չեչենների հարձակումներից, գիշերները հյուրանոցներում նստարանների վրա լուսացրել, ամառները Շուշիի սառը օդից դժգոհել, բայց ամեն տեղ գնացել է սիրով, մեծական խղճի թելադրանքով, որ գավառական բնակչությունն անհաղորդական չլինա գեղեցիկ արվեստի տված բարդական դասերից:

Այս բոլորով հանդերձ դերասանուհին իր գործունեության բեղմնավոր շրջանն անց է կացրել Անդրկովկասում, որտեղ հայությունն ավելի շատ է եղել: Երախտագետ դերասանուհին այսպես էլ խոստովանել է. «Ես պարտական եմ իմ գոյությամբ Կովկասի հասարակությանը, որը փրկել է ինձ՝ պահպանելով իմ ուժերը եւ զարգացնելով իմ մեջ գտնված ընդունակությունը»:

Սիրանույշն առաջին անգամ ոտք է դրել Անդրկովկաս 1879-ին եւ մինչեւ 1922-ը տարբեր տարիների ընդհատումներով գործել Թիֆլիսի եւ Բաքվի մշակութային թատերախմբերում: Ամենայն թատերաշրջանն ավարտելով, խմբեր է կազմել ու մեկնել գավառները՝ տեղական հանդիսատեսի գեղարվեստական պահանջմունքները բավարարելու:

Գավառներում դերասանական շրջագայություններից ամենանվիրական վայրը Սիրանույշի համար եղել է Հայաստանը, որտեղ նա զվարճվել է ոչ միայն բնության գեղեցկությամբ, այլեւ ճարտարապետական կոթողներով ու հնություններով: Հենց միայն Անիում երեք այցելություն է ունեցել: Քաղաքների մեջ նա շատ է սիրել Երեւանը, նրա հեզ ու խոնարհ, անմիջական հանդիսատեսներին:

Սիրանույշն իր 60-ամյա բեմական գործունեության մեջ ոչ մի տեղ այնքան շատ ելույթ չի ունեցել, որքան Երեւանում: 1899-ից մինչեւ 1917 թվականը Սիրանույշը տասն անգամ հյուրախաղերի է եկել Երեւան, ըստ որում, վերջին տարում՝ երկու անգամ, կարծես կանխազգալով, որ այլեւս չի տեսնելու իր սիրած Մասիսները, Արագածը, Էջմիածնի, Ղզլարքոցի պատմական հուշարձանները:

Հայաստանյան վայրերից Սիրանույշը խաղացել է նաեւ Աղարտաստում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Իգդիրում, Հին Նախիջեւանում, Ջուլֆայում, Շուշիում, որոշ ամառներ հանգստացել Մեծ Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր) եւ Դիլիջանում: Նա հաճախակած է եղել եւ հյուրացել Հայաստանի գեղատեսիլ վայրերով, Սեւանի կարուսակ ջրերով, Էջմիածնի, Հաղրատի, Սանահինի, Անիի ճարտարապետական հուշարձաններով, անձնական հուշարձաններով:

Իր բեմական գործունեության 35-ամյակի նախատեսությամբ շրջանում, սիրով Հայաստանի խաղաղանկում: Ժամանակը կարճ լինելով (երեւանյան ներկայացումներից բացի, մի քիչ էլ Ալեքսանդրապոլում են խաղացել), Սիրանույշը չի հասցրել լայնորեն ճանաչել հայրենի բնաշխարհը, նրա աշխատասեր ու թատերասեր ժողովրդին:

Հարազատ ժողովրդի նկատմամբ սերը, ավելի մոտիկից ծանոթանալու ցանկությունը նրան հանգիստ չեն տվել: Մեկ տարի անց՝ 1900 թ. դեկտեմբերին, գրական-մշակութային գործիչ Հակոբ Գենջյանին (Կարա Դարվիշ) գրած նամակում, իր առաջիկա անելիքների մասին խոսելիս նա գրել է, որ Բաքվից հետո ոչեմ է գնա Թիֆլիս, իսկ այնտեղից՝ մի փոքր խմբով Երեւան, ուր ներկայացում տալու: Բացի այդ, նրա ծրագրած ուղեւորությունների մեջ է մտել Հաղրատի, Սանահինի եւ շրջակա հնավայրերի այցելությունը 1901-ի ամռանը:

Երեւանի եւ նրա մերձակա հնություններ՝ ավելի լայն առումով Հայաստանի բնաշխարհին ծանոթանալու առաջին հարմար առիթը ստեղծվել է 1901-ի մայիս-հունիս ամիսներին: Երեւանյան հյուրախաղերից բացի, նա իր խմբով հանդես է եկել նաեւ Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) եւ Կարսում: Խաղացանկում եղել են «Մեղեա», «Երկոսդ երիտասարդություն», «Կյանքի արժեքը», «Հայրենական տուն», «Ջավակ», «Սաֆո» պիեսները, որոնցում գլխավոր՝ դրամատիկա-ողբերգական հերոսուհիների դերակատարը եղել է ինքը՝ Սիրանույշը:

Ցնցող տպավորություն է թողել հատկապես Մեղեայի նրա դերակատարումը, ուժեղ ողբերգական մի դեր, որից հետո նա մի օր հանգիստ է առել: Մեղեայի դերակատարության օրը՝ մայիսի 16-ին, վանեցի արեւթագործ եղբայրներ Տեր-Արիսակեսյանների կողմից պատրաստված մի հուշաքար է մատուցվել Սիրանույշին: Այն հասանիստ մի բուրգ է, որի մի երեսին դրոշմված է դերասանուհու դիմանկարը, մյուսներում՝ տեսարան, իսկ վերեւում՝ հրեշտակ, որը ձեռքերին բարձր բռնել է Ս (իրանույշ) տառը: Այդ հիշատակը երկար տարիներ Սիրանույշի հետ է եղել, նրանից հետո անցել է դստերը՝ Աստղիկին, Աստղիկից՝ որդուն՝ Պարույր Կիրակոսյանին, որը, տասնամյակներ առաջ, Լեւոն Արամյանի դեկավարությամբ հայասանական պատվիրակության հետ Ջիլիից ուղարկել է Երեւան եւ այժմ պահվում է Ջարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի թատերական բաժնում, Սիրանույշի ֆոնդում:

1901 թվականի գարեթ ամբողջ տարին, հայ իրականության մեջ, ամենուրեք նշվել է Գաբրիել Սունդուկյանի անձնի «Պեպո» կատակերգության առաջին բեմադրության 30-ամյակը: Սիրանույշի դեկավարությամբ դերասանական խումբը եւս արձագանքել է հանդիսատեսական այդ մեծ տոնին: Այն ներկայացվել է մայիսի 19-ին, Քաղաքային ակումբում: Սիրանույշը պիեսում դեր չունենալով, կատարել է Հովհաննայի (Ժանննա դ'Արկ) մենախոսությունը Շիլլերի «Օրլեանի կույսը» պիեսից: Ներկայացման հաջող օրը՝ մայիսի 20-ին, խմբի անունից հեռեպատ բովանդակությամբ հեռագիր է հղել Թիֆլիս՝ Սունդուկյանին. «Երեսանը հետ ջրկակ ուրիշ խաղերից եւ այսօր տոնում է ձեր անվան «Պեպոյի» հոբելյանը: Ցանկանում ենք ձեզ երկար ու արդյունավետ կյանք եւ սրտում ենք ձեր տաղանդի մի նոր հզոր ստեղծագործություն հոգուս մեր աղքատիկ դրամատիկական բեմի»: Հեռագրի տակ ստորագրել են Սիրանույշը, Փառանձեմը, Զարուհին (Ունսե Վոսկի), Գեւորգ Պետրոսյանը, Առամ Վոսկի, Մաթեւոս Աղայանը եւ Երեւանի թատերական գործիչ Էմին Տեր-Գրիգորյանը: Ի դեպ է ասել, որ Սիրանույշը Երեւանում գտնված օրերին է. Տեր-Գրիգորյանի հաստատել է սաստել իր նամակները:

Սրեն այդ շրջանում, Սիրանույշն այնքանով հանդարտ ու ճանաչում է ունեցել գավառներում, որ տեղական կոմոդիանոներից մեկը նրան ձոնված «Քայլերգ» է գրել, որը եւ զինվորական նվագախումբը կատարել է «Սաֆո» ներկայացման ընդմիջմանը:

Դեռեւս հյուրախաղերը չավարտված, Սիրանույշն իր մտերիմներին հաղորդակից է դարձրել իր մտադրություններին՝ Հակոբ Գենջյանին, իր խմբի գանձապահ Միխայել Բրուտսին (Բրուտյան): Մասնավորապես Բրուտսին ուղղած նամակում նա գրել է. «Ինձ հարկավոր էր այստեղ գալ եւ տեսնել այս հրաշալի հնությունները: Ափսոս, որ դրան չեկար»: Իսկ դերասանուհու տեսածը էջմիածնի Մայր տաճարն էր ու վանքերը, հայրենի վարդապետ Դաղյանի սկսած գրությունները, որոնք հետո է աշխարհին ներկայացնելու Ալեքսանդրապոլի տաճարի ապրված հուշարձանները:

Ավելի սրատես է եղել Սիրանույշի գրած նամակը ասորիանաբնակ, հասարակական-մշակութային գործիչներ Գեւորգ Խաչանա եւ Սոֆիա Մկրտումյաններին: Երկու ամիս առաջ բաժանված լինելով նրանցից, Երեւանում ներկայացումներն ավարտելուց հետո, իր հիացմունքին մասնակից է դարձրել նաեւ իր ադեսը գնահատողներին: Նրա նամակում կարդում ենք. «Այսօր տալիս եմ վերջին հրաժեշտս հրաշալեր Մասիսին՝ դեռ չիմանալով նրա արեւաբաստիկ գագաթը... Դեռ չեմ ասել իմ կարոտը, դեռ չեմ հագենում նրան դիտելով ու զմայլվելով...»: Հետքով հրաժեշտ տալով Մասիսին, Արագածին, հասել է Սեւանին՝ «մի խմբի ժամից հետո տեսա իմ փրեցի Սեւանա լիճը... Ասված է հրաշք նրանով. երկնային է նա եւ ոչ երկրային»,- գրել է նա հույզն ու սերը արտում:

Երկու տարի անց, 1903-ի մայիսիսին, Սիրանույշը նորից խմբով ներկայացումներ է տվել Երեւանում: Քաղաքային ակումբում տվել է տասնմեկ ներկայացում՝ եւ կրկնվող եւ նոր պիեսներով: Տպավորիչ են եղել հատկապես Մարգարիտ Գոշիեն («Կամենիագարդ տիկին»), Կուլիգինան («Անմեղ մեղավորներ»), Սիլիգան («Թագի համար»), Իգեիը հանանուն պիեսում եւ ուրիշներ, որոնք թեեւ պատկերել են տարբեր ժողովուրդների կյանքը, բայց միասնական հոգեբանություն եւ գաղափարախոսություն է ունեցել՝ կնոջ իրավահավասարության, ազատության եւ այդ բոլորին հասնելու համար բորոտ-պայքարի թեման:

Սիրանույշի այդ շրջանի բեմական գործունեությունը շատ հետաքրքրական է նրանով, որ Կարարեն Գալֆայանից հետո (1901 թ.), 1903-ի ապրիլի 17-ին ցանկացել է Երեւանի հանդիսատեսին ներկայացնել իր լավագույն դերերից մեկը՝ Համլետը: Այդ դերը նա առաջին անգամ խաղացել էր 1901-ին Թիֆլիսում Կարարեն Գալֆայանից եւ Նիկոլայոս Հովհաննիսյանից հետո, դերի վրա աշխատելով մեկ ու կես տարի:

Սիրանույշը եղել է Արեւելքի ժողովուրդների թատրոնի Համլետի առաջին կին դերակատարը, որը խաղ տարում շուրջ հարյուր անգամ հանդես է եկել այդ դերում (1901-1922): Թերեւս երկրորդ եւ վերջին դերակատարն էլ հայուհի է՝ եգիպտահայ թատրոնի նշանավոր դերասանուհի Առախի Օհանյանը (1956):

«Համլետի» ներկայացման համար թույլտվություն ձեռք բերելու նպատակով խմբի դերասան Անդրանիկը գնացել է ոստիկանատուն: Ոստիկանապետը՝ մեծրեզ է նրա պահանջը՝ առարկելով, որ բեմադրության թույլատրված պիեսների ցանկի իր

Տես էջ 8

Սիրանույշը Երեւանում

Ա էջից

ունեցած օրինակում չի հիշատակված թարգմանիչ Հովհաննես Մասեհյանի անունը: Նա ոչհանգչել է, որ խաղալ են Ալեքսիի թարգմանությամբ: Դերասանն առարկել է՝ թե իրեմ հայ դերասանական խումբ եմ, ինչպե՞ս կարող եմ ռուսերեն խաղալ: Ոստիկանապետը զայրացել է, ոտը հատակին խփել ու սպառնացել հաղից վտարել: Ներկայացումը չեմ խորհուրդ ելը գտնվել է՝ ազգագրի վրա՝ թարգմանչի անունը գրել են Դ. Ալեքսիեւ, բայց խաղացել Հ. Մասեհյանի թարգմանությամբ: (Ի դեմ է հիշել, որ 1890-ական թթ. կեսերին, նման արգելքների պատճառով է, որ Հովհաննես Աբելյանն էլ չի կարացել Համլետ խաղալ Բաքվում կամ Թիֆլիսում):

Երեւանում գտնված ժամանակ Սիրանույշը հանդիպումներ է ունեցել տեղի մտավորականության հետ: Նրանցից մեկը եղել է իր վաղեմի ծանոթ՝ 1890-ական թթ. Թիֆլիսի թատրոնի դերասան եւ թարգմանիչ Ալեքսանդր Սուտաբեգյանը: Այս նոր միջավայրում նա երեւացել է նոր «դերում»՝ որպես խորեն վարպետ Սուտաբեգյանը, որը տասնամյակներ անց պետք է դառնար Ամենայն հայոց կաթողիկոս եւ զոհ գնար բռնատիրության զոհերին: 1903 թ. ապրիլի 21-ին խորեն վարդ. Սուտաբեգյանն իր լուսանկարը նվիրել է «Հայ բեմի պարեանի տիկ. Սիրանույշին», հավաստելով, որ թե թատրոնի, եւ թե նկեղեցու բեմերը ծառայում են ի շահ հառագաս ժողովրդի:

1904 թ. մայիսի սկզբից մինչեւ հունիսի վերջը, Սիրանույշն իր խմբով նորից է հանդես եկել Երեւանում: Նրա խաղացանկում տեղ են գտել նոր պիեսներ՝ «Լորուսը», «Սեր եւ խաղավանք», «Կյանք», «Բազեներ եւ ագռավներ», «Ծծմայրեր», «Ուզան», «Կարմիր հանգգեսս», «Պաշտոյան» եւ ուրիշներ: Այս շրջանում նրա հոգսը եղել է երեք դերի պատրաստություն, որոնցից մեկը եղել է առաջին անգամ Երեւանում կատարած ելենա Նիկոլայեւնայի դերը «Պաշտոյան» պիեսում:

Սիրանույշն այդ շրջանում ունեցել է մի ոչ պակաս կարեւոր մտահոգություն եւս: Տարիներ շարունակ, նա եղել է հանդես գալ Մոսկվայում, հայ կամ ռուս դերասանների հետ: Նրա երազանքն է եղել Համլետ խաղալ Մոսկվայում, բայց ոչ մի կերպ չի սեղմվել:Եվ հանի որ Բաքվի ռուսական թատրոնի կառավարիչ Ա. Կուլիշիչից առաջարկություն է ստացել իր խմբի հետ հանդես գալու Համլետի եւ այլ դերերում (խաղացել է 1907-ին), Սիրանույշը միտք լարել է նաեւ այդ ուղղությամբ, որպեսզի այդ միջոցով ճանապարհ հարթվի դեպի մոսկովյան բեմ:

Երեւանյան հյուրախաղերի ավարտից անմիջապես հետո, 1904-ի հունիսի 5-ից 10-ի ընթացքում Սիրանույշը եղել է Անիում, ուր նրա բեմընկեր դերասան եւ Ն. Մառի հնագիտական արշավախմբի պեղումների լուսանկարիչ Առամ Վրույը նրան լուսանկարել է Ս. Առաքելոց եկեղեցու գավթի առաջ:

1905-ի սկզբներին, Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերության վարչությունը որոշել էր տոնել Սիրանույշի բեմական գործունեության 30-ամյակը: Բայց Բաքվում եւ Անդրկովկասի մի շարք վայրերում սկսված հայ-ադրբեջանական ընդհարումները տեսնելով, նա հրաժարվել է հոբելյանից եւ վերադարձել իր ծննդավայրը՝ Կ. Պոլիս: Բաքվում բնակվող իր մտերիմ (խմբի գանձապահ) Միխայել Բրուսոնին գրած նամակում հայտնել է, որ եթե մյուս տարի Կովկաս գա. «Միայն կգնամ Երեւան, մի անգամ եւս Առաքը ողջունելու, Անին այցելելու համար»:

Այդ մյուս տարին դարձել է 1907 թ. ապրիլը, երբ Երեւանի ժողովրդի թատերասիրում Սիրանույշի ղեկավարությամբ դերասանական խումբը սկսել է 16 ներկայացում՝ «Լորուսը», «Երջանկության համար», «Դավաճանություն», «Իգեմի», «Ջավակ», «Օղլեանի կույսը», «Համլետ», «Մեռեա», նորերից՝ Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտը» (Նազելի դերում) եւ ուրիշներ: Երեւանից բացի խումբը ներկայացումներ է տվել նաեւ Ալեխանդրապոլում, իսկ «Ջավակ» պիեսով հանդես եկել Իգդիրում, բեմական ասպարեզ բացել տեղական թատերասեր Սոֆիկ Հարությունյանի (հետագայում՝ Սարգսյան, Միխայելյան) համար:

Գնահատության հետաքրքրական վերաբերմունք է սպասել Սիրանույշն այս շրջանի հյուրախաղերի ընթացքում: Երեւանցի գրող-մտավորական, «Խաթաբալա» երգիծական շաբաթաթերթի (Թիֆլիս) թղթակից Լեոնիդ Մարկոսյանը երկու թղթակցություն է ուղարկել խմբագրությանը. մեկը չափաւոր, մյուսը՝ նամակի ձեւով: Երեւանյան ներկայացումների առթիվ նրա գրած «թատերախոսականը» չափաւոր է:

«Ամենն ամենայնի, դու չես պատկանում,
Տարիներդ լուծը ինձ չի կաշկանդում,
Անժամանակի հմայիդ ուժգին
Դեռ չէ դադարում դիպել մեր հոգին:
Եվ ահա այսօր, խորին հուզմունքով,
Քեզ պսակում ենք թարմ ծաղիկներով,
Սիրիր դու երկար, փայլ տար հայ բեմին
Միայն թե տիկին, թող այդ Համլետին:
Ահա եւ նամակը. «Մայիսի 25-ին դերասանուհի տ. Սիրանույշը հեռեպալ բողոքագիրն ստացավ Երեւանի հայ ենորդներից.
«Տիկին
Ոչ խնդրով ըլեր գալդ, եկար չեկար մեր ջահել ջիղերի խելքն իրենց գլխներից առար. այդ դեռ ոչինչ. նոնմ առանց խելք էլ լոլա կերթան. միայն մեր էլ ցիրներս դասարկեցիր: Ասված էլ ի՞ն ցիրը դասարկի. խնդրում ենք՝ խղճա մեզ եւ տուս գնա, թե չէ էլ հայ չմնաց մեզանում:
Մնում ենք Քեզ բարի ճանապարհ մաղթող Երեւանի թատերասեր գավակների անբախտ հայրեր»:

Սրանցից առաջինն իբրեւ թե գրված է մայիսի 2-ին, իսկ երկրորդը՝ 25-ին: Իրականում դրանք գրվել են հյուրախաղերից հետո եւ տպագրվել են «Խաթաբալայի» 23-րդ համարում (էջ 187, 191):

Նամակագիր «անենը» հասնում է Ասծոն եւ նա էլ որպես առյար դասավոր, դասարկում է Սիրանույշի գրությունը: Անենը դեռ հետո էր իրակնանալու:

Հանգիստ ու խաղաղ են անցել Սիրանույշի՝ 1912 թ. մայիսյան հյուրախաղերը: Բայց, ահա, վրա է հասել Ասծո ահեղ դասասանը, որը ոչ միայն Սիրանույշի գրությունն է դասարկել, այլեւ առաջին Համաշխարհային պատերազմի մասնակից երկրների գանձարանը:

1914-ի մայիսին Սիրանույշն իր խմբով նորից այցի է եկել իրեն սիրած Երեւանը: «Հրաշեկ օրակ», «Տուկա», «Ջավակ» ներկայացումները խաղաղ են անցել, բայց «Դավաճանություն»-ը դավաճանել է Սիրանույշին: Մայիսի 17-ի «Դավաճանություն» ներկայացումից հետո տեղի է ունեցել մի ֆարաբասիկ ադեն, որը մի քանի ամիս դերասանուհուն հանգիստ չի տվել:

Իր խաղացած հերոսուհու՝ վաց գեղած թագուհի Ջեյնաբին վայել, բեմում ձրդ կահավորանքի սեղեղելու նպատակով, Սիրանույշը տեղական բնակիչներից երեք գոգ է վերցրել: Բուսն ծախահարությամբով վարագույրը փակվելուց հետո, մինչեւ ածենն իրենց գործով են զբաղվել, բեմից անհետացել են գոգերը: Գոգաստը հարյուր ռուբլի է պահանջել Սիրանույշից՝ իբրեւ փոխհատուցում: Դերասանուհին սփոփված է եղել 100 ռուբլին տալ մինչեւ կորստի հայտնաբերվելը, ըստ որում չգտնվելու դեպքում ոստիկանությանը ինը պետք է փոխանցեր տիրոջը:

Կորստի հաջորդ օրը՝ մայիսի 18-ին Սիրանույշը գնացել է նահանգապետի մոտ՝ իրողությունը հայտնելու: Այս անգամ էլ կառից գողացել են նրա պայուսակը՝ մեջը մոտ 200 ռ. արժողությամբ ոսկե առարանքաղ եւ ժամացույց, ինչպես եւ մի քանի հարյուր ռուբլի:

Երեւանյան հյուրախաղերից հետո Սիրանույշը վերադարձել է Թիֆլիս, իր գլխին եկած փորձանքները պատմել ծանոթներին ու կոտրված սրտով գնացել Պոլիս: Թատերական գործիչ Առամ Նազարեթյանից (Թիֆլիս) ստացած նամակից պարզվել է, որ Սիրանույշի ձեռքի պայուսակը գտնվում է Թիֆլիսի ոստիկանատանը, որտեղից էլ ուղարկվել է տիրոջը: Սիրանույշը կասակի վերածելով այս գործիչների համար: Հայաբաս կենտրոններում նշվել են Շեխմիրի մահվան 300 եւ Պետրոս Աղամյանի մահվան 25-ամյակները (Թիֆլիս, Բաքու, Նոր Նախիջեւան եւ այլ քաղաքներ):

Հովհ. Աբելյանի ղեկավարությամբ դերասանական խումբը Բաքվում ներկայացումներ տալուց հետո, ուղեւորվել է Երեւան: Այդ հյուրախաղերը զուգադիպել են Շեխմիրյան հանդեսների օրերին: Շեխմիրյան միջոցառումը տեղի է ունեցել մայիսի 22-ին: Քաղաքային ակումբում (Երաժշտական կոմեդիայի թատրոնի նախկին շենքում) ներկայացվել են տեսարաններ «Համլետ» եւ «Արա Լիր» ողբերգություններից: Սիրանույշը հանդես է եկել Համլետի դերում, ներկայացնելով Համլետի եւ Ուրվակների (Անուշավան Շիրոյան) եւ Համլետի ու մոր՝ Գերտրուդի (Զաբել) հետ տեսարանները: Իսկ Հ. Աբելյանը (Արա Լիր) ներկայացրել է փոքրիկի դերը: Բայց մենք դրան պատասխան ունենք. «Պատվելի ժողովուրդ Երեւանի: Այժմ Ներոնի դարն է, մարդիկ պետք է մի հիշ էլ ժամանակի հետ արդեն: Ինչ կյանքի մասին եք խոսում, երբ այժմ մահն է տիրում... Ջեզ ինչ փույթ, թե մենք ինչ կհագնենք!... Ուստի խնդրում ենք հարգանքով վերաբերվել դեպի մեր պատկառելի խումբը՝ որ գլխավոր գաստրոլյորներ են Սիրանույշ եւ Աբելյան: Դում պարտավոր եք ենորհակալ լինել եւ ասել՝ աֆերիմ Սիրանույշ, Աբելյան, պատիվներդ շատանա»:

Այս կիսահեգնական-ինքնանդամական ակնարկներից զգացվում է, որ «Մեծ հանցավոր» (Ներոն), «Բելիսարիոս», «Արշակ թագավոր» պատմական ողբերգություններում դերակատարները գրեթե նույն զգեստներն են հագել՝ հնարավորություն չունենալով ամեն մի կերպարի համար համապատասխան զգեստավորում պատրաստել:

Չնայած այս ամենին, Հայաստանի թատերասեր հասարակայնությունը նորից դեպի իրեն է ձգել թատերախմբերին (դրամատիկական, օպերետային): Հաջորդ՝ 1917 թվականի հյուրախաղերը տեղի են ունեցել փետրվար-ապրիլ ամիսներին: Հոկտեմբերյան հեղափոխության լուրը Աբելյանի ղեկավարությամբ խմբին է հասել դեկտեմբերին՝ Կարսի հյուրախաղերի ժամանակ: Սկզբում խումբը գործել է «Շրջիկ թատրոն» անվան տակ, հիմնականում ունենալով Աբելյանի եւ Սիրանույշի խաղացանկի լավագույն պիեսները՝ «Յո՞ երթաս», «Կայսր», «Ուրիշ Ակոսա», «Իսրայել», «Վենետիկի վաճառականը», «Համլետ», «Թագավոր» եւ այլն: Դեկտեմբերին խաղացվել են Սիրանույշի ուժեղ գործերը՝ «Ջավակ» եւ «Մեռեա»:

Դեռեւս Երեւանում գտնված ժամանակ Սիրանույշը մտադիր է եղել մի փոքրիկ խումբ կազմել եւ հյուրախաղերի մեկնել Պարսկաստան: Այդ նպատակով նա նամակագրության մեջ է մտել Հարություն Բեռյանի, Մկրտիչ Թաբզյանի (Թավրիզ), Միխայել եւ Մարգո Կոսայանների (Բաքու) եւ ուրիշների հետ: Բայց խաղաղական պայմանները, մանավանդ դերասանների անապահով վիճակը հնարավորություն չի տվել իրագործելու նրա այդ ցանկությունը:

Իրան գնալու Սիրանույշի նախկին ցանկությունը կատարվել է 1918-ի գարնանը՝ Բաքվից, բայց ոչ իր նախաձեռնած պայմաններով:

Բաքվի Կոմունայի անկումից դեռ առաջ, Սիրանույշն այցելել է նրա նախագահ Ստեփան Շահումյանին՝ խնդրելով նրան արտոնել Իրան՝ հյուրախաղերի մեկնելու: Վերջինս հարգելով մեծ դերասանուհու ծառայությունները եւ իրանահայության գեղարվեստական կյանքը մի քիչ աշխուժացնելու ձգտությունը, սիրով ընդառաջել է նրան: Բայց օսմանյան թուրքերի Բաքու ներխուժելու վտանգի սպառնալիքի տակ, հարյուրավոր փախստականների հետ Սիրանույշն էլ է աղջկա եւ թոռան հետ մեկնել Իրան: 1918-1921 թթ. Բաքվից փախած մի քանի դերասանի եւ տեղական թատերասերների հետ նա ներկայացումներ է տվել Ռաշտ, Թավրիզ, Թեհրան, Նոր Ջուղա քաղաքներում:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1922-ին Սիրանույշը Բաքու-Թիֆլիս ճանապարհով վերադարձել է իր ծննդավայրը՝ Կ. Պոլիս՝ կարոտած հարազատներին տեսնելու եւ Մեծ եղեռնի զոհ դարձած հարազատների կորուստը սգալու:

Մինչ Սիրանույշը Պարսկաստանում էր, Հայաստանի կառավարությունը մտադրվել է հոգ տանել բուն երկրում եւ արտասահմանում ապրող գրականության եւ արվեստի ականավոր դեմքերի նյութական ապահովության համար: Հոգատարության ենթակա գործիչներից մեկն էլ եղել է Սիրանույշը: «Խորհրդային Հայաստան» օրաթերթի հոկտեմբերի 9-ի համարում տպագրվել է հետեւյալը՝

Տես էջ 9

Սիրանույշը Անիում, 1904
Լուսանկարիչ՝ Առամ Վրույր

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

ԸՆԹԵՐՑՈՒՄ

Մեծ հայրս յայտնի հեքիաթասաց մըն էր: Այնպիսի հեքիաթներ ունէր, որ լսողը կը զոհունացնէր: Ես՝ իր երբուններն կախուած կը մնայի մանաւանդ հեքիաթի այն դուռագին հանդիպման, երբ արքայազնը իր սուրը մերկացուցած վերջ ոտքի տար իր թշնամիին կեանքին... Մնացեալը վաղը գիտեր, կ'ըսէր մեծ հայրս, եթէ բարի ըլլաս ու դասերդ լաւ սորվիս...

Ես արդէն տասնամեակներ առաջ մեծ հայր եղած եմ ու ահա, Յակոբ Յակոբեանին այս գիրքը կը կարդամ որդիս թէ մեծ հայրս պատմած ըլլար այն բոլորը, զորս կը «պատմէ» հեղինակը:

Յիրաւի, հեքիաթ մըն է մեր օրերուն ապրուած այս կեանքը, զոր որդիս ոչտմիսուն ուլունքաւոր մեզի կը ներկայացնէ յայտնի երգիչագրող Յակոբ Յակոբեանը, ըսել տալով մեզի. մեծ հայրիկ, պատմէ, շարունակէ, հոգիդ սիրեմ, շարունակէ... մինչ ան մեղմիկ ժպիտով մը կ'ըսէ մեզի, - վաղը... եթէ բարի ըլլաք եւ կեանքի դասերը լաւ սորվիք...

Երանի՞ հեքիաթ ունեցողին:

Պարզին վսեմ ըլլալը հաստատած է Արփիար Արփիարեան:

Արդարեւ, իրաւ որ վսեմ է պարզը: Ու ինչպէս Յակոբեան արուեստագէտ նկարիչը, նոյնպէս եւ Յակոբեան գրողը պարզ է: Պարզ է, երբ վրձին ի ձեռին նկարակալին դիմաց է, պարզ է, երբ գրիչ կը վերցնէ սպիտակ թուղթին առջեւ, պարզ է, երբ կը խօսի մեզի հետ, պարզ է ու խորունկ: Ալեկոծումներով չի ներկայանար մեզի, բայց հանդարտ երեւցող ջուրերուն տակ ինչպիսի՞ ալեկոծումներ կան...

Այս գիրքին մէջ յօդուածներու եւ հարցազրոյցներու շարքով մը կը ներկայանայ մեզի հեղինակը, թէ՛ էութեանական գեղեցիկ տողերը ընտրելով որդիս խորագիր՝ «Ու մերթ լացաւ, ու մերթ խնդաց իմ հոգիս»:

Այդպէս ալ այս կեանքն կոչուածը մերթ լաց ու մերթ խնդում չէ՞ միթէ...

Գիրքը կազմած ու խմբագրած է մեր մշակոյթի բոլոր արտայայտութիւններուն տարօրէն սիրահարուած մատտրական մը, որ կը կոչուի Երուի խաչատրեան:

Հայ գիրքը սիրելի դարձնող Սարգիս խաչենցի հրատարակչական գործն է այս գեղակազմ հատորը:

Թող վարագոյրը բացուի այս հեքիաթին վրայ:

Նախ Յակոբեանին լուսանկարը՝ պարզ, խորունկ, խոհուն հայեացքի մը՝ ուղղուած կեանքին, առա՛՝ յառաջաբան մը «Գիրքը» խորագիրով, ստորագրութիւն՝ հեղինակը:

Եւ ինչ է գիրքը, երբ լաւ գրուած չէ՝ «վաս հայերէնով գրուածէ մը կարծես փչացած ճաշ ըլլար, որ քեզ հրամցնում էին»:

Յակոբեանը կը պատմէ, թէ ինչպէս գրել սորված է եւ թէ.- «անշուշտ, հայրենիքի մէջ, մանաւանդ անկախութենէն ի վեր, մարդիկ պիտի ուզեն՝ այնքան աւելի շատ հաղորդակցուիլ՝ հայրենիքի մէջ է, որ իրենով հետաքրքրուողներ կան, եւ ինքն ալ ուզում է փոխել իր երգարտասանի հետ: Հայրենիքին մէջ է, որ ներկայացնում էին առիթներ խօսելով եւ գիրով ելոյթներ ունենալու: Սփիւռքն ալ՝ ամբողջ է, հայրենիքի՝ երկիր»:

Հեղինակը ըսաւ իր ընթերցողը, առանց մոռնալու շնորհակալութիւն յայտնելու բոլոր անոնց, որոնք գնահատեցին իր գրածները, կամ գիրով արտայայտուելու մղեցին զինք:

«Հայաստանը երազ էր...». այս առաջին գրութիւնն է գիրքին եւ այդ երազը սեղմողը՝ «բարի կախարդ» Վարդան Սարեանն է, որ իր վրձինով՝ «միանգամից միանում էր հազար տարուայ մեր մշակոյթին»:

Յակոբեանը կը տեսէ գիրքին ձեւաւորման կարեւորութիւնը՝ նկարիչին համար՝ «երբ գիրք եմ նկարագրում, ինձ աւելի շատ եմ կարուած զգում մարդկանց, իմ երգարտասի հետ»:

«Մինաս, Սիրելիս» գրութիւնը Յակոբեանի անհուն սէրը կը բնորոշէ հանդէպ մեկու մը, որ «մեր նկարչութեան բարձրացող աստղն էր՝ հեռուներից տեսանելի ու հեռաստաններ բացող»:

«Ազատն Մինաս» գրութիւնը տեղ անկեղծութեան մատնարեայ, բայց շնչող մեկ արձանը ըլլայ կարծէ. - «Ես հասկցայ, որ Մինասը ընկերս է, իմ աւագն է, իմ վարդեսը»: Մէ՛ նկարիչը կրնայ նման տոհի տակ ստորագրել...

«Անում եմ՝ ինչ որ կարողանում եմ» հարցազրոյցին մէջ Յակոբ Յակոբեանը իր կարծիքները յայտնելով սովետահայ նկարչութեան մասին ու տեսնելով ազգային կարտուրութիւնը, կ'ըսէ. - «Մարտիրոս Սարեանի նկարչութեան հետ է, որ մենք կարում ենք մեր նկարչութեան հայկականութեան դրսեւորումը»:

Պատասխանելով Մանուկ Մուրադեանի մեկ հարցումին՝ Յակոբեանը կ'ըսէ. - «Ոչ մի նկարչի ստեղծագործութեամբ, որքան էլ նա մեծատաղանդ լինի, չի աւարտում նկարչութիւնը»:

Հեքիաթական զրոյց մը կ'ունենայ Սարգիս Կիրակոսեանը, Յակոբեանին հարց տալով, թէ ան ինչու՞ խեղճ մարդիկ նկարած է: Պատասխանը՝ «խեղճ մարդիկը զիս յուզած են թերեւս այն հիմնական պատճառով, որ ես զիս խեղճ մարդ մը կը զգայի, թերեւս այդպէս ալ եմ մինչեւ հիմա, բայց այդ ժամանակ յանկարծ ես տեսակ մը հոգեմէս ընկճուած եւ թոյլ մարդ մըն էի, եւ բնական կերպով իմ համակրանքս ոչտմ է երբար դէպի այդ խեղճերը»:

Այդ երջանի Յակոբեանի գործերուն գոյներն ալ ծնած են խեղճ մարդոց գոյներէն՝ ծօսիկը գորշին, տխրութեան:

Բոլոր հարցազրոյցներուն մէջ, բոլոր հարցումներուն ընդմէջէն Յակոբեանին տուած պատասխանները կը յանգին իր նեռաքարհէն բխող հոգեկան ապրումներու բացայայտումին: Այդպէս է նաեւ, երբ Յակոբեանը կը պատասխանէ լիտուացի գրող՝ Եուտզաս Նեկոչիուսի հարցումին, որ ըսած կ'ըլլայ. - Մեր նկարչութեան եւ երաժշտութեան նահապետ Ցիտլիոնիսը ասում էր. «Աշխարհը մի երգող հանգուագ է»... հետաքրքիր կը լինէր իմանալ, թէ ինչ խնդիրներ էի դուք առաջադրում ձեզ, երբ վերցնում էի վրձինը»: Պատասխանը՝ նկարիչը ունի յատուկ զգայարան: «Որտեղ էլ եղել եմ՝ միշտ տեսել եմ նկարելու բան: Իսկ եթէ նկարելու բան տեսնում եմ, արդէն անկարելի է չնկարելը: Իմ մէջ սկսել էր գործել յատուկ զգայարանը»:

Եւ այսպէս, մտածումներ անոյծոյժ, բայց խոր մեկնաբանութիւններ հարիւրաւոր հարցերու, միտքերու յստակութեամբ մը, որ ծագող առաւօտեան կը յիշեցնէ, ըսել տալու համար. - Ոչ, մի՛թէ խօսք կամ բառ ունի արտայոյսը, որ կը բռնկի, այն ալ ինձի՞ պէս...

Դիտելով Յակոբ Սուքիասեանի ցուցահանդէսը, Յակոբեանը կը գրէ. - «Յակոբ Սուքիասեանի ամէն մի նկարը մի գողտրիկ պատմուածք է հայ հողագործի մասին»: Մի՞թէ Յակոբեանը ամէն ինչ չըսաւ նկարիչ Սուքիասեանի մասին:

Եւ ահա «Նկարագրութիւնն էր նոա կեանքը» յօդուածը, ուր Յակոբեանը կը ներկայացնէ նկարիչ Աշոտ Յովհաննիսեանը. - «Տեսնելով նոա նիւթական պայմանները այդ խեղճուկակ գիտի մէջ, նայելով նոա նկարներին, հասկացայ, որ ինքը սովորական նկարիչ չէ, այլ կարծես Հայաստան եկած առաքեալ է կամ ասպետ, որ չունի հարստութիւն եւ կայուածներ, չունի տուր, բայց ունի իր վրձինը: Անհասկանալի իր զէնքը, որով պիտի պայքարի ճշմարտութեան, իսկական գեղեցիկը պաշտպանելու համար, նաեւ ինքն իրեն պաշտպանելու համար»:

Յակոբեանը իր նման էջերուն մէջ ժամանակագիր մըն է, կենսագիր մը, որ գալիք օրերուն համար ուսումնասիրելու կոակ մը կը թողու:

Նկարիչ Յակոբեանը, որպէս Հայաստանի հաղարացի, շատ յստակօրէն կը յայտնէ իր հաղարական կեցուածքը մեր ժողովուրդի այսօրին ու վաղուան մասին. «Թշնամութիւններով դժուար է երկիր կառուցել»: Այսպեղ հարցը Ղարաբաղի մասին է: Հրաւէրներ խոյանալ: Մէկ հոգի չէ, որ պիտի փրկէ երկիրը կամ Ղարաբաղը: Բոլորս միասին պիտի փրկենք: «Անկախ Հայաստանն ինձ համար նախ եւ առաջ այն է, որ մեր կառավարութիւնը, մեր նախագահը ուրիշի կողմից նշանակուած չէ, այլ մենք ընտրած ենք: Ուստի՝ մենք սկսում ենք ամենակարեւոր մի փուլ մեր պատմութեան մէջ՝ մեր պատմութեան ստեղծումը... Սանից աւելի բարձր իդեալ ես չեմ պատկերացնում»:

Նկարիչ Սինասը միշտ ներկայ է Յակոբեանի հոգիին մէջ. «Մինասի այս սխանչելի ցուցահանդէսը տօնախմբութիւն մըն է, հրաւանքի օր մըն է նկարչութիւն սիրողներու համար:.... Մինասը իր արուեստով պայքարելով բռնութեան դէմ, սրկութեան դէմ, յաղթեց եւ զոհուեցաւ պայքարի ժամանակ: Մինասը պարզապէս հանճարեղ նկարիչ չէր, Մինասը Ոգի՛ի հերոս էր»:

Շահէն Խաչատրեան հեռախօսով կը յայտնէ Յակոբեանին, թէ Երեւանի մէջ պիտի կազմակերպէ Բեռնար Բիւֆէի գործերուն ցուցահանդէսը: Յակոբեանը թէ՝ «Լսածիս չհաւատացի: Բեռնար Բիւֆէի ցուցահանդէս Երեւանո՞ւմ... Դա նոյնն էր, եթէ Յոս են ջութակահար Մարսին Երիցեանն ու Իտալիա ապրած ու ստեղծագործած նկարիչ Օրագեանը: Քաղաքական բնոյթ ունի «Ճակատագրին դէմ գնալ երեւի անօգուտ է» յօդուածը:

Իսկ ինչո՞ւ չգրէր քաղաքական յօդուածներ: Իր ժողովուրդին զասակը ոչտմ է գրէր ու ստորագրեց նաեւ քաղաքական յօդուածներ:

«Ծանիր զքեզ, մենք՝ Հայերս» յօդուածը ինչպէս նկազ քաղաքական է, որ ցոյց կուտայ Յակոբեանին ունեցած տեղեկութիւններուն սուղութիւնը, պատմագրական տեղեկութիւնները մեր ժողովուրդին մասին, ուր իր իրատութեան մէջ կը գտնենք Արշիլ Գորկին, Մարտիրոս Սարեան վարդեսը: Հարա Վախտանգ Անանեանը, որուն գործերը կարդացած ու բարեկամութիւնը վայելած է Յակոբեան, որ կ'ըսէ որտոր գրողին մասին. «Վախտանգ Անանեանին համար. - Այս հողին վրայ ապրող մարդ, անասունը, բոյսը, երկինքը, «անձրեւը» իրեն համար մեկ ընտանիք էին՝ անբաժանելի՝ իրարու կարուած սիրով»:

Նկարիչ Աշոտ Մելիքոնեանի եւ լուսանկարիչ Հրայր Խաչերեանի (Բազէ) մասին սիրազեղ խօսքեր ունի Յակոբեանը, ուր կը նկարագրէ եօթ տարի Կիպրոսի Մեղգոնեան Կրթական հաստատութեան մէջ իր որպէս գիտերօթիկ աշակերտ մնալը: Յակոբեանը ինչպէս չգրէր մեծն Ա. Սարուխանի մասին, երբ անոր հետ ընչաք էր նոյն օրը Գահիրէի մէջ եւ նկարչութեան ակունքէն խմած նոյն ջուրը:

Կրնանք ըսել քաղաքական յօդուածներ են, հոգեբանական հեռոով մարդ հասկացութիւնը բացատրող, պատմութենէն դասեր առնելու կոչով:

Հետեւեալ խօսքերով կ'աւարտի երկրորդ յօդուածը. - «Հայ ժողովուրդ, քուժի՛ր դրան մեզ, օգտը մեզ չի բուժելու...»

«Ոնիր եւ ուտացում»-ը վերջին գրութիւնն է հատորին իր 490-դ էջին վրայ, յօդուած, որ նուիրուած է Ռիչարդ Յովհաննէսեանի պատմագիրքին՝ «Հայաստանի Հանրապետութիւն I հատոր 1918-1919»:

Անդրադառնալով մեր անգէն ժողովուրդի ցեղասպանութեան, թելադրուած պատմագրողին ուղղախօսութենէն, Յակոբեանը հրդեհուած սիրտով կը գրէ.

- Այսքան ոճիրներէ, յանցագործութիւններէ վերջ անպատիժ ապրողներն տեսնելով ոնց չմտածել, որ մարդ կոչուած արարածը , հայերն ալ մէջը, մայր բնութեան, Աստուծոյ վիժուածը չեն, որ մարդ կոչուած թշուառականը, ողորմելին, անիծուած է, եւ ամէն ինչ անելու է հետզհետէ աւելի արագ վազելու դէմի իր կործանումը, նախապէս ոչնչացնելով ամէն ինչ իր շրջապատին մէջ: Մարդ կոչուած վիժուածը կարող է մէկ ու կէս միլիոն անգէն մարդկանց ոչնչացնել, մարդ կոչուած անողորմը կարող է սարել աթոմային ռումբ, ջրածնային ռումբ, մանրէաբանական ռումբ...:

Այնտեղ այս գիրքին հեղինակը կը ջաւագրէ Ռ. Յովհաննէսեանը, բայց կը տարի կարդալով այս պատմագիրը, որպիսեն պատմածը մեր կեանքն է, անհուսօրէն տխուր:

Յակոբեանը աւարտեց իր հեքիաթը, հողը տակափն կը մնայ թուրքին ոտքերուն տակ, բայց յոյսը, հայուն յոյսը մարած չէ. - «Պէտք է պահպանել հայ ազգը, ամէն հայ արժէ մըն է...»

Վերջացա՛ւ հեքիաթը...

Մեծ հայրիկ, պատմէ... շարունակէ՞...

Շարունակութիւնը... Վաղը, եթէ դաս մը առիր այս գիրքէն...

Ճշմարտապատում, անսահմանօրէն անկեղծ գիրք մը: Այս գիրքով Յակոբ Յակոբեանը որպէս արուեստագէտ նկարիչ, նոյնքան արուեստագէտ գրող մըն է:

Հալէպ, 9 Նոյեմբեր, 2007

ՈՒ ՄԵՐԹ ԼԱՅԱՒ, ՈՒ ՄԵՐԹ ԽՆԴԱՑ ԻՄ ՀՈԳԻՍ

Հեղինակ՝ Յակոբ Յակոբեան

ԹՈՐՈՍ ԹՈՐԼԱՆՅԱՆ

Սփիւռքէն՝ Կուրախանայ Արշիլ Կորքիի, Գառզուի, Ժանսենի ու Փոլ Կիրակոսեանի յաջողութիւններով ու Հայաստանէն՝ Մինասի ու Կալենցի գործերով:

Պարզ է, թէ դէմի ոտ կը յարի Յակոբեանին կարծիքը նկարչական արուեստի ընթացքին մէջէն:

«Յակոբ Յակոբեան Փարիզի մէջ» դարձեալ հարցազրոյց մըն է, այս անգամ Կարիկ Պասմաճեանի հետ:

Այստեղ Յակոբեանը կը պատմէ, թէ ինչպէս նկարիչ դարձաւ, ինչպէս երկու տարի Փարիզի մէջ ապրելով ու նկարչական յատուկ դասերու հետեւելով հանդերձ, չկրցաւ եւ ոչ մէկ նկար ստեղծել ու յանկարծ, եգիպտոս վերադառնալէ մի քանի տարի եսէ, երբ իրենց տան պատգամբէն ուրջ բոլորը կը դիտէր, տեսաւ պատէն կախուած սխտորի խուռն մը ու սկսաւ նկարել, գտած ըլլալով իր նկարելիք նիւթը...

Հոն, եգիպտոս ապրած երջանին, Հայաստանը կերազէր, Հայաստան հաստատուիլ կ'ուզէր, իր հողին, իր հայրենակիցներուն հետ ըլլալ կ'ուզէր, հոգեկան վիճակ մը, որ կը բացատրի այսպէս. - դուն նկարիչ ես ու հոգիդ վրայ, հայ նկարիչ ես ու հողդ կը ներկայացնես ու հոգեկան աշխարհիդ կերտուածքովը:

Այդպէս ալ եղաւ: Յակոբեանը Հայաստանին կապուած էր Սփիւռքի մէջ եւ ահա Հայաստան գալով դարձաւ նոր Սարեան մը, որ իր երկիրը ներկայացուց իր հոգիին պատկերովը, որ կը սիրէ իր երկրին աւանդն ու վաղ գաւանը:

Ամէն նկարիչ ունի իր Հայաստանը: Ու ամէն ակնդիր դիտելով Յակոբ Յակոբեանին գործերը, կը տեսնէ նոր Հայաստան մը, որ կ'ըսէ մեզի.- Ծանկեցուցէք այս երկիրը, այս երկիրը դարձուցէք ձեր սերը...

Բեանին տուած պատասխանները կը յանգին իր նեռաշխարհէն բխող հոգեկան ապրումներու բացայայտումին: Այդպէս է նաեւ, երբ Յակոբեանը կը պատասխանէ լիտուացի գրող՝ Եուտզաս Նեկոչիուսի հարցումին, որ ըսած կ'ըլլայ. - Մեր նկարչութեան եւ երաժշտութեան նահապետ Ցիտլիոնիսը ասում էր. «Աշխարհը մի երգող հանգուագ է»... հետաքրքիր կը լինէր իմանալ, թէ ինչ խնդիրներ էի դուք առաջադրում ձեզ, երբ վերցնում էի վրձինը»: Պատասխանը՝ նկարիչը ունի յատուկ զգայարան: «Որտեղ էլ եղել եմ՝ միշտ տեսել եմ նկարելու բան: Իսկ եթէ նկարելու բան տեսնում եմ, արդէն անկարելի է չնկարելը: Իմ մէջ սկսել էր գործել յատուկ զգայարանը»:

Եւ այսպէս, մտածումներ անոյծոյժ, բայց խոր մեկնաբանութիւններ հարիւրաւոր հարցերու, միտքերու յստակութեամբ մը, որ ծագող առաւօտեան կը յիշեցնէ, ըսել տալու համար. - Ոչ, մի՛թէ խօսք կամ բառ ունի արտայոյսը, որ կը բռնկի, այն ալ ինձի՞ պէս...

Դիտելով Յակոբ Սուքիասեանի ցուցահանդէսը, Յակոբեանը կը գրէ. - «Յակոբ Սուքիասեանի ամէն մի նկարը մի գողտրիկ պատմուածք է հայ հողագործի մասին»: Մի՞թէ Յակոբեանը ամէն ինչ չըսաւ նկարիչ Սուքիասեանի մասին:

Եւ ահա «Նկարագրութիւնն էր նոա կեանքը» յօդուածը, ուր Յակոբեանը կը ներկայացնէ նկարիչ Աշոտ Յովհաննիսեանը. - «Տեսնելով նոա նիւթական պայմանները այդ խեղճուկակ գիտի մէջ, նայելով նոա նկարներին, հասկացայ, որ ինքը սովորական նկարիչ չէ, այլ կարծես Հայաստան եկած առաքեալ է կամ ասպետ, որ չունի հարստութիւն եւ կայուածներ, չունի տուր, բայց ունի իր վրձինը: Անհասկանալի իր զէնքը, որով պիտի պայքարի ճշմարտութեան, իսկական գեղեցիկը պաշտպանելու համար, նաեւ ինքն իրեն պաշտպանելու համար»:

Յակոբեանը իր նման էջերուն մէջ ժամանակագիր մըն է, կենսագիր մը, որ գալիք օրերուն համար ուսումնասիրելու կոակ մը կը թողու:

Նկարիչ Յակոբեանը, որպէս Հայաստանի հաղարացի, շատ յստակօրէն կը յայտնէ իր հաղարական կեցուածքը մեր ժողովուրդի այսօրին ու վաղուան մասին. «Թշնամութիւններով դժուար է երկիր կառուցել»: Այսքան հարցը Ղարաբաղի մասին է: Հրաւէրներ խոյանալ: Մէկ հոգի չէ, որ պիտի փրկէ երկիրը կամ Ղարաբաղը: Բոլորս միասին պիտի փրկենք: «Անկախ Հայաստանն ինձ համար նախ եւ առաջ այն է, որ մեր կառավարութիւնը, մեր նախագահը ուրիշի կողմից նշանակուած չէ, այլ մենք ընտրած ենք: Ուստի՝ մենք սկսում ենք ամենակարեւոր մի փուլ մեր պատմութեան մէջ՝ մեր պատմութեան ստեղծումը... Սանից աւելի բարձր իդեալ ես չեմ պատկերացնում»:

Նկարիչ Սինասը միշտ ներկայ է Յակոբեանի հոգիին մէջ. «Մինասի այս սխանչելի ցուցահանդէսը տօնախմբութիւն մըն է, հրաւանքի օր մըն է նկարչութիւն սիրողներու համար:.... Մինասը իր արուեստով պայքարելով բռնութեան դէմ, սրկութեան դէմ, յաղթեց եւ զոհուեցաւ պայքարի ժամանակ: Մինասը պարզապէս հանճարեղ նկարիչ չէր, Մինասը Ոգի՛ի հերոս էր»:

Շահէն Խաչատրեան հեռախօսով կը յայտնէ Յակոբեանին, թէ Երեւանի մէջ պիտի կազմակերպէ Բեռնար Բիւֆէի գործերուն ցուցահանդէսը: Յակոբեանը թէ՝ «Լսածիս չհաւատացի: Բեռնար Բիւֆէի ցուցահանդէս Երեւանո՞ւմ... Դա նոյնն էր, եթէ Յոս են ջութակահար Մարսին Երիցեանն ու Իտալիա ապրած ու ստեղծագործած նկարիչ Օրագեանը: Քաղաքական բնոյթ ունի «Ճակատագրին դէմ գնալ երեւի անօգուտ է» յօդուածը:

Իսկ ինչո՞ւ չգրէր քաղաքական յօդուածներ: Իր ժողովուրդին զասակը ոչտմ է գրէր ու ստորագրեց նաեւ քաղաքական յօդուածներ:

«Ծանիր զքեզ, մենք՝ Հայերս» յօդուածը ինչպէս նկազ քաղաքական է, որ ցոյց կուտայ Յակոբեանին ունեցած տեղեկութիւններուն սուղութիւնը, պատմագրական տեղեկութիւնները մեր ժողովուրդին մասին, ուր իր իրատութեան մէջ կը գտնենք Արշիլ Գորկին, Մարտիրոս Սարեան վարդեսը: Հարա Վախտանգ Անանեանը, որուն գործերը կարդացած ու բարեկամութիւնը վայելած է Յակոբեան, որ կ'ըսէ որտոր գրողին մասին. «Վախտանգ Անանեանին համար. - Այս հողին վրայ ապրող մարդ, անասունը, բոյսը, երկինքը, «անձրեւը» իրեն համար մեկ ընտանիք էին՝ անբաժանելի՝ իրարու կարուած սիրով»:

Նկարիչ Աշոտ Մելիքոնեանի եւ լուսանկարիչ Հրայր Խաչերեանի (Բազէ) մասին սիրազեղ խօսքեր ունի Յակոբեանը, ուր կը նկարագրէ եօթ տարի Կիպրոսի Մեղգոնեան Կրթական հաստատութեան մէջ իր որպէս գիտերօթիկ աշակերտ մնալը: Յակոբեանը ինչպէս չգրէր մեծն Ա. Սարուխանի մասին, երբ անոր հետ ընչաք էր նոյն օրը Գահիրէի մէջ եւ նկարչութեան ակունքէն խմած նոյն ջուրը:

Կրնանք ըսել քաղաքական յօդուածներ են, հոգեբանական հեռոով մարդ հասկացութիւնը բացատրող, պատմութենէն դասեր առնելու կոչով:

Հետեւեալ խօսքերով կ'աւարտի երկրորդ յօդուածը. - «Հայ ժողովուրդ, բուժի՛ր դրան մեզ, օգտը մեզ չի բուժելու...»

«Ոնիր եւ ուտացում»-ը վերջին գրութիւնն է հատորին իր 490-դ էջին վրայ, յօդուած, որ նուիրուած է Ռիչարդ Յովհաննէսեանի պատմագիրքին՝ «Հայաստանի Հանրապետութիւն I հատոր 1918-1919»:

Անդրադառնալով մեր անգէն ժողովուրդի ցեղասպանութեան, թելադրուած պատմագրողին ուղղախօսութենէն, Յակոբեանը հրդեհուած սիրտով կը գրէ.

- Այսքան ոճիրներէ, յանցագործութիւններէ վերջ անպատիժ ապրողներն տեսնելով ոնց չմտածել, որ մարդ կոչուած արարածը , հայերն ալ մէջը, մայր բնութեան, Աստուծոյ վիժուածը չեն, որ մարդ կոչուած թշուառականը, ողորմելին, անիծուած է, եւ ամէն ինչ անելու է հետզհետէ աւելի արագ վազելու դէմի իր կործանումը, նախապէս ոչնչացնելով ամէն ինչ իր երջապատին մէջ: Մարդ կոչուած վիժուածը կարող է մէկ ու կէս միլիոն անգէն մարդկանց ոչնչացնել, մարդ կոչուած անողորմը կարող է սարել աթոմային ռումբ, ջրածնային ռումբ, մանրէաբանական ռումբ...:

Այնտեղ այս գիրքին հեղինակը կը ջաւագրէ Ռ. Յովհաննէսեանը, բայց կը տարի կարդալով այս պատմագիրը, որպիսեն պատմածը մեր կեանքն է, անհուսօրէն տխուր:

Յակոբեանը աւարտեց իր հեքիաթը, հողը տակափն կը մնայ թուրքին ոտքերուն տակ, բայց յոյսը, հայուն յոյսը մարած չէ. - «Պէտք է պահպանել հայ ազգը, ամէն հայ արժէ մըն է...»

Վերջացա՛ւ հեքիաթը...

Մեծ հայրիկ, պատմէ... շարունակէ՞...

Շարունակութիւնը... Վաղը, եթէ դաս մը առիր այս գիրքէն...

Ճշմարտապատում, անսահմանօրէն անկեղծ գիրք մը: Այս գիրքով Յակոբ Յակոբեանը որպէս արուեստագէտ նկարիչ, նոյնքան արուեստագէտ գրող մըն է:

Հալէպ, 9 Նոյեմբեր, 2007

ՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՆՏԵՍՆԵՐԻ ՆՈՐՕՐՅԱ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ

ԳՐԻԳՈՐ ԱՖԵՄՅԱՆ

«Սիրելի Ազաս.

...Եթե դու հեռու լինեիր մոսկվյան գրական մամուլից, ես չէի զարմանա. բայց դու այն մարդն ես, որ կարդում ես ու հետևում գրական թերթերին եւ ամսագրերին. մեր (երեւանի) գրական ճահճացման ոլորտներից մեկը մեր գրական մամուլի խեղճությունն է, թե՛ խնամով թե՛ որակով... Ինչո՞ւ մեր ինքնատությունն ու գրականությունը հասան այս օրին,- նորից եմ կրկնում,- ինքնատության մեղով: Տանը կատու չկա, մկները «հանգիստ-հանգիստ» են պարում. այս «հանգիստ»-ն մկնապար է, երեւի նրանց ֆոկուսորը: Թող մի կատուն տանը լինե՛ր... Մարդիկ կիսալուին, կամաչեին հրապարակային, տրագրական խոսքից: Իսկ հիմա... հասս ու բարակ մի հաշիվ է, չափանիշը՝ «հասարակական կարծի՞»-ը. իսկ դու չե՞ս տեսնում, թե այդ հասարակական կարծիքը ինչ աղբեր է կուլ տալիս... Ամենի կազմավորեր «հասարակականը»: Ես, իհարկե, ոչ, դո՛ւ,- անկասկած այդ:

Այո, միշտ էլ եղել է, ազնիվ գրականության հետ անել է նաեւ մոլախոտը, բայց այսքիսի հարաբերություն մ'ը է եղել, երբ գրողները հաշվվում են 260, իսկ նրանց արանում 10-ը իսկականը հազիվ մարես: Մի՛ գրող դեմ այսման խոսանարա՞... այսքիսի բոսան մ'ը է եղել...

Կարի՞ կա՞ առացուցելու, որ եթե Չարենցի, Սկսելի, Չաբել Եսայանի, Թորոսենցի կոտրից հետո մնացյալները մի ինչ հոգաստություն եւ հարմացիական հաջություն հանդես բերեին, մեր արձակը չէր հասնի այս ողբալի ասիճանին... Տասնյակ տարիներ իշխել են գրական էլիտաները, որոնք թաքեհով կամ առանց թաքեհի ինքնագոհ դեմքով փութա են տվել գրականության տախտակի վրա, կամ հոխորտ ու անճնարասան ծանր սաբոգներով առաջ են անցել ժամանակի ինքնության համար անոթեստ գործերով, ուրախ տիրոջ մակարդակից, որովհետեւ այդ մակարդակի վրա հետ է եղել իշխելը եւ առանձնանալ իրենց բոլ-բուսաթով, բոլ-բուսաթ, որը չի հասել Շիրվանի ոտ...:

Մինչեւ մ'ը...»:

...Խոսուվանեմ, վերոհիշյալն ամբողջովին պատկանում է Գուրգեն Մահարու գրչին, բացառությամբ առաջին տողի: Այն ուղղված է «Սիրելի Լեւոնին», 60-ական թվականների կարկառուն գրականագետ Լեւոն Հախվերդյանին: Ես հառյավել եմ միայն Շիրվանզադեի անվանը հետեւող գոտկատեղից ներեւ գտնվող բառը եւ փոխել առաջին տողը: Այս վերջինը՝ ժամանակների նմանությունն ընդգծելու համար: Բայց թող ոչ ոք չկասկածի, որ եթե Գ. Մահարին գրեր նամակ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Ազաս Եղիազարյանին, ապա կկրկներ «սիրելին», ինչի որ այլ կերպ դժվար է դիմել երկու միջակ գրողների մեջ անհասորեն խնձված մարդուն...

Ազաս Եղիազարյանը հանդես է եկել «Ազգ»-ի փետրվարի 9-ի թիվ 3 «Մշակույթ» հավելվածում ծավալուն, երկու էջ զբաղեցնող հարցազրույցով, որին խմբագրությունը տվել է «Ժամանակը՝ հավերժ հավության նոխմ՞գ» խորագիրը: Նա փորձել է պատասխանել «Գրական թերթում» եւ «Ազգում» լույս տեսած հրապարակումներին, որոնց նյութը Ն. Զարյանի եւ Հր. Քոչարի՝ 30-ական թվականների մասնիչական գործունեությունն էր եւ նրանց գրական ժառանգության վերանայման պահանջը: Մի կողմից նա կարծես հաճայնել է արծարծված հարցերին, մյուսից՝ մերժել դրանք բոլորը: Ահա թե ինչու եւ առանց վարանելու՝ «սիրելի՞»...

Փորձենք մենք էլ անդրադառնալ հարցազրույցին՝ ափսոսելով լինել համառոտ եւ, որ պակաս կարեւոր չէ՝ ուղղագիտ:

Դժբախտաբար ես չեմ կարող հարցազրույցի հեղինակին վերադարձնել նրա հաճոյախոսականն այն մասին, թե ինքը հասկանում է ինձ: Եթե նման «հասկանալուն» հետեւում է մեղադրականը, որ որոշական զգացմունքները նեղացրել են իմ հայացքները պատմության նկատմամբ, ապա ես ոչ մի կերպ չեմ հասկանում նրան (Ընդգծումներն ու անջատումները իմն են.- Գր. Ա.): Յուրաքանչյուր մարդ իր կենսագրության տերն է, եւ եթե նա չի գործել խոշոր սխալներ, ապա հաշվում է անցած ճանապարհի հետ այնպես բնական, ինչպես, ասենք՝ իր ազգանվան հետ: Որքան էլ ցավեմ Գուրգեն Մահարուն վիճակված փորձությունների համար, հավատացնում եմ, ֆենը եւ թույնը չեն, որ մղում են ինձ նման հրապարակումների: Ոչ էլ անհայր մանկությունը եւ պատանեկությունը, որոնց հետ եղել եմ եւ մնացել հաշտ, ասես այլ կերպ չէր էլ կարող լինել: Բայց ես ապրում եմ XXI դարում, քաղաքացին եմ Հայաստանի Հանրապետության, եւ ինձ, որպես շարքային ընթերցողի եւ քաղաքացու մտահոգում է այսօրվա մեր գրականության եւ գրականագիտության վիճակը: Դա է պատճառը, որ ես թույլ տվեցի ինձ վերահասցեագրել չորս տասնամյակից ավելի վաղեմություն ունեցող նամակը: Ինչպիսի նմանություն զգացի այնտեղ նկարագրվող ժամանակի եւ մեր օրերի միջեւ, չնայած այն ժամանակ կային գրական դեմքեր, միջավայր, ընթերցող հասարակություն: Իսկ այսօր... վստահորեն կարելի է ասել, որ խ. Աբովյանի ժամանակներից ի վեր հայ նոր գրականությունը չի եղել ավելի ողորմելի, ավելի ամուլ վիճակում: Հասկանում եմ, շատ բաներ գրականության ինստիտուտից չի կախված, բայց որպես գրական գործընթացը ղեկավարող կազմակերպություն ինչ է արել նա նոր իրավակարգի գաղափարախոսության տեսակետից անցյալը վերագնահատելու, գրական կանոնի բեկորները կազմակերպելու, նոր ծիլեր հասցնելու ուղղությամբ: Ամենի՞ մեջ այդ ամենը: Ես, իհարկե, ոչ, Ազաս Եղիազարյանը,- անկասկած այդ: Իր ինստիտուտի գիտաշխատողների հետ միասին:

Գրում եմ, բայց վստահ չեմ, որ կտանամ հարցիս պատասխանը: Պատասխանը կլինի նման առթն տացածի՝ այն է՝ ինստիտուտի տարեկան եւ հեռանկարային ոլորտների թվարկումով, Իսահակյանով, Չարենցով, Համասեղով, Նիկողոս Սարաֆյանով, Գալուստ Կոնտանդյանով (երեւի Հարութ Կոստանդյանն է...- Գր. Ա.), Հակոբ Օշականով, Վահան Տերյանով, Վազգեն Շուշանյանով, Ջաբեի Որբունիով, Լեւոն Շանթով... եւ դեռ՝ Սիամանտո, Աղբալյան, Ջոլանյան, Թեմելյան... Ինչո՞ւ համար մնից հանել այսքան դասականների, երբ հարցադրումը գնում է ընդամենը Ն. Զարյանի եւ Հր. Քոչարի մասին: Դասականների հետ թեանցուկ գտնելն անհրաժեշտ գործ է, բայց թեմային չի առնչվում: Մի կողմ եմ դնում նաեւ հարցազրույցում տրված հարցերի եւ դրանց պատասխանների «կարգապահական» կողմը: Ցանկության դեպքում ընթերցողը կհամոզվի անհամապատասխանության եւ շեղումների օրինակներում:

Վերադառնանք մեր... հարցերին: Իմ հրապարակումով,[1] աղբյուրների նշումով եւ հնարավոր հետեւողականությամբ, ես ցույց էի տվել Ն. Զարյանի եւ Հր. Քոչարի «սեկտանական» գործելակերպը բանաստեղծության տարիներին: Այդ Ն. Զարյանն էր, որ «մատերիալներ» էր ուղարկում «Պրավդա»-ին եւ «Լիտերատուրնայա գազետա»-ին դեռեւս ազատության մեջ գտնվող գրողների մասին,[2] այդ նա էր, որ պատճառական զեկուցագրում տարակուսանք էր հայտնում «որպես լրտես մերկացված» Չարեցի ետայանի ազատության մեջ գտնվելու կարգադրության համար,[3] այդ Հր. Քոչարն էր, որ կոչ էր անում «Չարենցի գրականությունը ջախջախել եւ դեն շպրտել»[4], այդ նա էր, որ իր գրչընկերոջը հայտարարում էր «ժողովրդի թշնամի» եւ ուշադրություն հրավիրում նրա վրա:[5]

Պատասխանը, որ կարելի է որսալ հարցազրույցի տողերի միջեւ եւ առանում, հանգում է ժամանակի բարդությունը հասկանալուն եւ դրա հետ մեղմը կիսելուն: Բայց ժամանակը ֆիզիկական հասկացություն է: Մարդն է ապրում ժամանակի մեջ եւ պայմանավորում դրա բնույթը: «Երբ հիվանդ է արդարությունը, մարդիկ խեղճանում են, մանրանում, դառնում երկերեսանի, չար, եսասիրաբար: Նոքա՛ բնում են, լիզում իրենց ոսնակոխող սարդոնները, ասում են խոսքեր, որոնք իրենցը չեն, կատարում են գործեր, որոնց հետ համաձայն չեն, բայց կատարում են, որովհետեւ արդարությունը հիվանդ է...»,- գրել է Գ. Մահարին: Կարելի է՞ սրանից եզրակացնել, որ 30-ական թվականների անարդար ժամանակները կիսում են այսօր Ն. Զարյանի եւ Հր. Քոչարի մեղմը: Ոչ, իհարկե: Այդ նույն ժամանակ, երբ Ն. Զարյանը վերջականաթես ոչնչացնելու համար Ա. Բակունցին, գրում էր նրա դեմ գրականությունից մոլոններով հեռու հոդվածներ,[6] Ե. Չարենցը ձոնում էր նրան՝ բանաստեղծություններ... Նույն մարդկային ձեռքն է, Աստծո կամ եթե կուզե՞ միլիոնավոր տարիների էվոլյուցիա անցած ձեռքը, որը ուղեղի՝ թելադրանքով մի դեմքում գրում է մատնություն, մյուսում՝ գրական հուշարձանի արժեքով տողեր...

Ես մեղադրվել եմ «անուշադրության մեջ», իբր չեմ նկատել, որ «Չարյանի ու Քոչարի դեմ» շատերն են եղել: Ճիշտ չէ, մեխանիկական ուշադրությունից բացի դեմ է ունենալ նաեւ լսողություն՝ մեներգիչներին տարբերելու համար: Այո, կրկնում եմ՝ խմբերգում եղել են բոլորը, սակայն նրանցից առանձնանում են հատկապես Ն. Զարյանն ու Հր. Քոչարը, «ամենամոլեռանդները», ինչպես ասվում է հարցազրույցում: Այո, կրկնում եմ, մատնություններով զբաղվել են շատ-շատ 3-4 գրողներ եւ նույնիսկ անհաջողունակ գրողներ, իսկ մնացածները «դամ են դահել»: «Մի՞թե նրա (այսինքն՝ իմ.- Գր. Ա.) աչքով չի ընկել, օրինակ, Վահան Թոթովենցի հրաշալի վիպակի մասին գրված իսկապես ջարդարարական հոդվածը, որի հեղինակին եւս շատ չանցած աֆսորեցին Սիբիր»:

Օրինակն անհաջող է: Խոսքը Վ. Ալազանի «Կյանքը խորհրդային գրականությունից հեռանալու ճանապարհին» գրախոսականի մասին է, որն ասես բարեկրթորեն, բայց հասկանալի պատճառներով չի ճշտվում հարցազրույցում: Վ. Ալազանը, Անոթոմ կեղծանվան տակ, հեղինակ է մի շատ «ջարդարարական» հոդվածների, բայց դրանք բոլորն էլ ռազմական ինքնատության նմուշներ են միայն: Ակնարկվող առանձին գրախոսականը լույս է տեսել 1934 թվականին, իսկ գրողների մասնիությունները սկիզբ առան Ա. Խանջյանի սպանությունից հետո: Նույն Հր. Քոչարի գրախոսականը խ. Դաշտենցի ժողովածուի մասին, եթե գրված լիներ մինչեւ 1936 թվականի հուլիսը, որտեղ էլ լիներ դասապարտելի, ինչպես Վ. Ալազանի գրախոսականը, մատնություն չէր հասնի, որովհետեւ ՊԱԿԿ-ի մասողը դեռ չէր աշխատում... պետք չէ մի ընդհանուր պարկի մեջ լցնել տարբեր ժամանակներում տարբեր նկատառումներով գրված հրապարակումները.

Տես էջ 6

Բ էջից

Սիրանույշը Երեւանում

«Լուսժողկոմատի միջնորդությամբ ժողկոմների խորհուրդը որոշել է սույն թվի սեպտեմբերի 1-ից ամսական 500.000 ռ. նպաստ եւ հարվածային բաժին բաց թողնել գեղարվեստի ու գրականության հետեւյալ գործիչներին՝ գրականագետներից Հովհաննես Հովհաննիսյան, Հովհաննես Թումանյան, Ղեւոնդ Ալիշանի, Հակոբ Հակոբյան, Լեո, Նար-Դոս եւ Շուշանիկ Կոստինյան: Դերասաններից՝ Գեւորգ Տեր-Դավթյան, Հ. Աբեղյան, Սիրանույշ, Հ. Ջահիֆյան, Ի. Ալիխանյան, Օ. Մայսուրյան եւ Ս. Սանվելյան: Նկարիչներից՝ Գ. Բաշինջաղյան, Ե. Թադեւոսյան եւ Մարտիրոս Սարյան»:

Տեղյակ է եղել Սիրանույշն այդ որոշմանը, հայտնի չէ: Այդ հարցը արձագանք չի ստացել մամուլում: 1922-ի սկզբներին նա Պարսկաստանից Բաքվի վրայով (որ կորցրել էր իր խնայողությունները) անցել է Թիֆլիս, վերջին անգամ խաղացել Մեղեա, Հանչեռ եւ այլ դերեր ու մեկնել Թբիլիս: Պոլսում Սիրանույշը բեմ չի բարձրացել՝ հայերեն նեռկայացումներ չեն տվել. ապրել է հուսալով, երբեմն գրի առել իր մտորումները դերասանական արվեստի, թատրոնի նշանակության եւ հարակից հարցերի մասին:

Բեմի կարոտը 1930-ին Սիրանույշին տարել է Եգիպտոս: 1931-ին Ալեքսանդրիայում մեկ անգամ Մարգարիտ Գոտիի խաղալուց հետո փոխադրվել է Կահիրե՝ մնալու ունենալով այդ դերով նշել իր բեմական գործունեության 50-ամյակը:

1932-ի սկզբներին, երբ Հայաստանում պատրաստվում էին նշելու Երեւանի Առաջին թեատրոնի (այժմ՝ Սունդուկյանի անվան) տասնամյակը, Թբիլիսիի հայկական թատրոնի դերասան, Սիրանույշի վաղեմի բեմընկեր Իսահակ Ալիխանյանը, որը եղել էր այդ թատրոնի հիմնադիր անդամներից մեկը, նամակով դիմել է մեծ դերասանուհուն՝ վերադառնալ Երեւան՝ խորհրդային Հայաստան, որ խանդավառությամբ կդիմավորեն իրեն:

Ալիխանյանը չիմանալով Սիրանույշի հասցեն, նամակն ուղարկել է Կ. Պոլսի «Նոր լուր» թերթի խմբագրությանը: Նամակն անցել է Սիրանույշի դստեր՝ Աստղիկի ձեռքը, նա էլ իր հերթին ուղարկել է Ալեքսանդրիա, այնտեղից էլ հասցրել են Կահիրե՝ իր իսկական հասցեատիրոջը:

Սիրանույշը մեծ հուզմունք է արել այդ հրավերի կապակցությամբ: Պատասխան նամակը թերի է մնացել (հանձնայն դերոյ, միայն թերի եւ սեւագիր ձեռագիրն է մեզ հասել): Նամակից պարզվում է, որ կյանքից հոգնած Սիրանույշն այլեւս չի ցանկացել բեռ դառնալ իր սիրելի ժողովրդի վրա, թեեւ սերը մնացել է նույնը:

Ալիխանյանին ուղղած նամակում Սիրանույշը գրել է. « Ձեր նամակի ամբողջ պարունակությունը ամենազգնիվ զգացմունքի մը արտահայտությունը ըլլալուն պատճառով, ես իմ անձը երախտապարտ եմ համարում ձեզ, որ ինձանից փոքր լինելով հանդերձ, հիշեցնում եք իմ պարտականությունը հանդեպ իմ կովկասահայ ժողովուրդը, որը պակեց իմ ճակատը դափնյա պակով, որին միշ եմ արժանի, նաեւ ծնունդի Մասիսը՝ յոր հրաբխոտ բարձրությամբ, հոյակապ կորմեր բաց առած, վիթխարի թեւերով ուզում է գրկել յոր ծնունդիայլ գագաթը, ոգեւորում էր ինձ, կորով էր ներշնչում նորանոր ստեղծագործությունների համար:

Մինչեւ հայ թատրոնը, որի բարգավաճման համար իմ անբողջ ուժն ու կարողությունը տվել եմ, այլեւս չի հետաքրքրում ինձ, չեմ ուզում իմանալ ինչ է կատարվել նրա հետ...»: Այստեղ սեւագրությունն ավարտվում է, ավելի ճիշտը՝ ընդհատվում: Երեւում է հուզմունքը խեղդել է նրա կոկորդը եւ այլեւս ուժ չի ունեցել շարունակելու իր ասելիքը: Իսկ ասելիք ունեցել է. ամենամեծ ասելիքը եղել է բեմի կարոտը, Երեւանի բեմում աշխատելու կարոտը:

1932 թ. ապրիլի 17-ին Կահիրեի «Ալ Համբրա» թատրոնում «Կամելիազարդ տիկնիկ» պիեսով պետք է նշվեր Սիրանույշի բեմական գործունեության 50-ամյակը, բայց հիվանդացել է եւ իր կյանքի վարագույրը փակել նույն թվականի հունիսի 10-ին: Թաղվել է Մարմնիայի գերեզմանատանը: 1944-ին հուշահանդակ է կանգնեցվել նրա գերեզմանին, որն անհետացել է վերջին տարիներին:

Սիրանույշի ծննդյան 150-ամյակը լավագույն առիթն է նրա հիշատակը պատիվ բերելու համար Հայաստանի թատերական գործիչների միության Դերասանի տունը նրա անունով կոչելը, ինչպես Պետերբուրգում այն կոչվում է Սավինայի, իսկ Մոսկվայում՝ Յաբլոչկինայի անուններով:

Սիրանույշի հիշատակի հավերժացման համար պատրաստվել է նրա կյանքի եւ բեմական գործունեության (1857-1932) տարեգրությունը (500 էջ): Ինչպես նման բնույթի ամեն մի գործ, տարեգրությունը եւս լուացումների տեղ է ունենում: Եթե երեւանցիների (ինչպես նաեւ այլ վայրերում ապրողների) մոտ կան (իսկ պետք է որ լինեն) Սիրանույշի մատկագրությամբ լուսանկարներ, ապա շատ ցանկալի է դրանց տեսքը տարածել Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի թատերական բաժնի վարիչին, համոզված լինելով, որ իրենց անունն էլ տեղ կգտնի տարեգրության մեջ, իբրեւ սկզբնաղբյուր: ■

Գեբապատրաստ Հայոց կոմիտասին անչափ գեղեցիկ եւ թանկագին լիշատակի փոխարեն խորին յարգանքով
1 մարտ 1909, Բաքու

Բանավեճ

Դ էջից

դանց միջեւ դնել հավասարության նշան եւ հանգել տխրահռչակ «բաներ» տեսությանը... Ռաղդական ինքնայատության բնորոշ ներկայացուցիչներ էին Գ. Վանանդեցին, Հ. Գլուխիեխյանը, Ա. Վշտունին, Պ. Ֆոլյանը, Գ. Անդրեասյանը եւ ուրիշ բաներ, բայց նրանք նույնպես մասնիչներ չեն եղել: Ենթադրենք անգամ, թե մասնիչների թիվը ոչ թե 7-8 է, այլ 18, հետո՞ ինչ: Ոչինչ: Պատմությունը բոլորին մասնել է մոռացության, բացի «ամենամոլեռանդ» Ն. Ջարյանից եւ Հր. Քոչարից...

Հարցադրույցում երջահայացության կոչ է արվում եւ բերվում «ոչ հայկական իրականությունից փաստ»: Իբր անգլիացիներից ոչ մեկը չի բողոքում, որ Լոնդոնում դրված են անգլիական թագավորի եւ նրան գլխատած Կրոմվելի կիսանդրիները: Փաստը թվում է ցցուն միայն առաջին հայացքից: Նախ ես չեմ կասկածում, որ Կրոմվելի կիսանդրին իր գեղարվեստական արժեքով չի զիջում Մերկուրովի Լենինի արձանին եւ երջահայացության մասին այս առումով իսկապես կարելի է խոսել: Կարելի էր երջահայացություն դրսեւորել անգամ Սալինի մոնումենտի նկատմամբ, գալիք սերունդներին որպես ցուցադրական ակնառու նմուշ ցույց տալու համար, թե ինչ բան է անհասի պատժումը: Բայց անհասկանալի է, երբ խղճականությունը ափոթում են գրականության հետ: Անգլիացիներից միապետականները կարող են առաջնությունը տալ Կառլոս Առաջինին, մյուսները՝ Կրոմվելին: Դա խղճական նախասիրությունների հարց է, բայց պատկերացրեք Պուշկինի հուշարձանի կողքին Դանտեսի արձանը եւ գրականագետին, որը դրանք մասնաբաժանելով կբարթաթի՝ ահա տերերը, ահա տերերի կինը, սիրել ում կցանկաք...

Չէ, Ջարենցի, Բակունցի փողոցների եւ դպրոցների կողքին երեւան խղճում չեն կարող լինել Ջարյանի եւ Քոչարի անունները: Մենք այդպես «երջահայաց», այդպես մեծահոգի լինելու իրավունք չունենք... մանավանդ որ մեծահոգությունը կասարվում է անգերեզման գողերի հաշվին:

Ինչո՞ւ եմ տեսնում փողոցների եւ դպրոցների հարցը եւ կարծես հեռանում գրական խնդիրներից: Բանն այն է, որ Ն. Ջարյանը եւ Հր. Քոչարն արդեն մահացել են կրկնակի մահով՝ որպես մարդ եւ որպես գրող: Դպրոցական ծրագրերում նրանք դեռ պահպանվում են, բայց կրճատված, ուսուցիչների հայեցողությանը թողնված: Նրանց գրքերը չեն հրատարակվում, չեն թարգմանվում, հրատարակվածներն էլ չեն կարդացվում եւ մոռացվում են: Եվ միայն խորհրդային ժամանակներում կնքված փողոցներն ու դպրոցներն են իրենց անախոնիկ ներկայությամբ խանգարում պատմության վերջնական դասավճռին:

Ա. Եղիազարյանը պատմում է նրանց գրական ժառանգությունը, գտնում, որ «ըստ հասարակական վերաբերմունքի եւ ժամանակի»՝ «շատ դժվար թեմա է լինի առացուցել, որ «Արա Գեղեցիկը» կամ «Կարոտն» ու «Նահապետը» թույլ գործեր են»: Իհարկե, գրական ստեղծագործությունների գնահատականը սուբյեկտիվ գործ է, եւ դրա վերջնական պատասխանը դուրս է մեր այսօրվա հրապարակման սահմաններից: Բայց որ նա կասկածի տակ է վերցնում Ռուբեն Հովսեփյանի ցաքր կարծիքը «Կարոտի» մասին գուցե այն հիմնավորումով, որ հենց նա է գրել դրա կինոսցենարը, նույնպես հարմարեցված, «ակնջից քաշված» կռվան է: Հաճախահայային կինոյի պատմության մեջ խիստ սակավ են ըստ լավ գրական գործերի նկարահանված հաջող կինոֆիլմերը, իսկ հակառակ օրինակները՝ որքան ուզես: Այդպիսի կերպարանափոխումներ էլ կատարվել են Հր. Քոչարի գործերի հետ, օրինակի սցենարիստ, ռեժիսորի, դերասանների (հիշենք թեկուզ գլխավոր դերակատար Նկարիչ Ռաֆայել Աթոյանին...), եւ ստեղծել «հասարակական վերաբերմունքի եւ ժամանակի» թվացյալ տպավորություն: *

Ընդհակառակը, Ռ. Հովսեփյանի կարծիքին պետք է մոտենալ հատուկ ուշադրությամբ: Աշխատելով կինոսցենարի վրա, նա թափանցել է գրողի ստեղծագործական գաղտնարանը եւ համոզվել դրա իրատապությունում: Պետք է հատուկ ուշադրությամբ մոտենալ նաեւ Վասիլի Գրոսմանի «Բարին ընդ ձեզ» ուտոպիայի՝ նա երկու ամիս ապրել է երեւանում՝ «Մեծ տան զավակները» վեպի թարգմանության գործունեությամբ, ժամանակն անցկացրել բացառապես Հր. Քոչարի հետ, բայց ասի ու տես, որ հարյուրից ավելի էջերում չի գտել ոչ մի դրական խոսք վեպի կամ դրա հերոինակի մասին: Ավելին, վկայել է Հր. Քոչարի գրական նեղ մտահորիզոնի մասին: Հայտնի է, որ Օ. Մանդելշտամը իր ոչ պատշաճական ասողը անց է կացրել երեւանում: Եվ Գրոսմանը հարցուփորձ է անում իր հյուրընկալին. «...նա չէր հիշում Մանդելշտամին... ինձ ասաց, որ շատ աղոտ կերպով հիշում է խոշոր թթով, նիհար մի մարդու, հավանաբար՝ շատ աղետ, որին իմը երկու անգամ հյուրասիրել է ընթրիով ու գինով: Խոշորաքիթ մարդը՝ գինովանալով, ինչ-որ բանաստեղծություններ էր կարդում. ամենայն հավանականությամբ, դա Մանդելշտամն է եղել»:[8]

Երկու գրող, որոնք ընդհուպ զբաղվել են Հր. Քոչարի գործերի տեսաբանությամբ: Մեկն արտահայտել է իր վերաբերմունքը ժամանակակցի նկատմամբ բարեկիրթ լռությամբ, իսկ մյուսը՝ պատմական կոչ գնահատականով...

Ինչ վերաբերում է «Արա Գեղեցիկին», ավելորդ չէ մեկ անգամ եւս հիշեցնել Գ. Մահարու «սուբյեկտիվ» կարծիքը, որ այն «...շատ բարձր չէ հայր Արսեն Ղազիկյանի գործերից արվեստով եւ իդեոլոգիայով...»:

Ս. Ջորյանի օրագրային գրառումը հարցադրույցում համարվում է «մի մարդու սուբյեկտիվ կարծիք»: Պետք է տարբերել վկայությունը կարծիքից: Երբ Ս. Ջորյանը գրում է, որ Հր. Քոչարը «որպես գրող անարժեք էր, անարվեստ, սրա-նրա թեմաներն ու սյուժեները վերցնող-ձգակող», արդեն դա սուբյեկտիվ կարծիք է, բայց «տասնյակների գլուխ կերած 37-38 թթ. «հերոս»-գրքարշիչ ու մասնիչ...», «խորամանկ, խարդախ ու կեղծ առաած», որի նմանը չի եղել գրողների միությունում[9] գնահատականները ժամանակակցի վկայություն են, որի վավերությունը հաստատվում կամ մերժվում է տողերի հեղինակի բարոյական նկարագրով:

Ես կրկնում եմ իմ հրապարակման հիմնական կռվանները, որովհետեւ դրանք երբեմն ներկայացվել են հարցադրույցում, բայց դա չի նշանակում, թե դրանցով սահմանափակվում են փաստերը: Ահա եւս մի ժամանակակցի՝ Վ. Նորենցի վկայությունը. «...դու զարմանք էիր հայտնել, թե Հ. Ք.-ն ինչ արժանիների համար է ընդունվել ԿԿ-ի անդամ: Մոռացել ես, որ նա էր ինձ մեղադրում նացիոնալիզմի մեջ՝ երեխայիս անունը Սալիկ՝ որպես ապացույց բերելով: Գիտե՞ս դա ինչ մեծ ծառայություն է: Վտահացնում եմ քեզ, եթե այդ մի հատիկ փաստը հայտնի դառնա մեր գրականության ապագա պատմագրին, ապա Հ. Ք.-ի անմահությունն ապահովված է: Հապա... Ավ. Իսահակյանի հետ նամակագրություն ունենալու մեր անհավելի հանգագրությունի մեկնաբանումը... Չէ... Այդ ինչ, դու շատ ես սխալվում, նրանց պատասխանը ծառայում է արարությանը, ժամանակությանը, պատմությանը եւ գրականությանը, բայց էլի ինձ լավ չեմ զգում նման բացահայտումներից: Ինչ կարող եմ անել ես՝ սահման մասնիչաց՝ գրիչն յուրյանց...

Իզուր է Ա. Եղիազարյանը պատմում հանձնված բեռները: Դառնով նա ոչինչ չի փոխի, կվնասի միայն իրեն: Ս. Կարապետյանն էլ փորձեց «Գրական թերթում» եւ նույն գրականության ինստիտուտի «Գրականագիտական հանդեսում» հակամահարիական, զարյանամետ, ֆոչառամետ հրապարակումներով («Նախի Ջարյանի իրական կերպարը»,[13] «Հրաչյա Քոչարը եւ իր ժամանակը»[14]) ազդել գրականության պատմության վրա: Երեւի կարծում էր, թե իր գրական ժառանգությունն այնքան ծանոթ է, որ ի զորու է նման խնդիր լուծել: Ոչնչի չհասավ, բացի իր ազգանվան վրա հարգանքից: Եվ երրորդ ազգանունը, որն այսօր կարող է դրվել Ջարյանի եւ Քոչարի կողքին, հոգեւոր հարազատության առումով, Կարապետյանն է: Իր մեղքով:

Ա. Եղիազարյանն անդրադառնում է նաեւ երկու գրողների հաղորդակցական կերպարին եւ փորձում այնտեղ գտնել նրանց (եւ իր) համար փրկարար գոտիներ: Նա թվարկում է Լ. Շանթի գործերի հրատարակման հարցի արծարծումը, Սարդարապատի հուշահամալիրի մտահղացումը, վկայակոչում տպագրություններ, հուշեր: Լ. Շանթի գործերի հրատարակման կատարողությամբ վկայակոչում է Ա. Միկոյանի հետ 1961 մարտի 14-ի (?) հանդիպման տպագրությունը: Այստեղ, մեղմ ասած, թյուրիմացություն կա: Բանն այն է, որ այդ օրերին Լ. Շանթի դրամաների հրապարակման հարցը ննջարկվել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանի հետ յոթը գրողների հանդիպման ժամանակ, որոնցից մեկը եղել է Գ. Մահարին եւ այդ մասին նա գրել է Մ. Առմենին. «...խոստացավ կարդալ Շանթի գործերը եւ մտածել նրան տեսաբիլիտացիայի ենթարկելու մասին. հիշեց Բունինին հօգուտ Շանթի...» (28 մարտ 1961թ)[15]: Ա. Միկոյանի հետ հանդիպումը եղել է մեկ տարի անց, որի մասին նույնպես կա Գ. Մահարու գրառումը. «Միկոյանը եկավ, ընտրեց եւ գնաց: Սակայն նախախն գնալը մի խումբ գրողների հետ ունեցած իր պատմական զրույցում խոսեց մի շարք խնդիրների մասին եւ լուծեց մի շարք խնդիրներ.-

1. Շանթին վերականգնել.- «Տաղանդավոր գրող է եւ նրան պետք է հրատարակել եւ բեմ հանել»...

...4. Սարդարապատի հերոսամարտը ժողովրդին է պատկանում եւ ոչ թե դասընկերությանը...»[16] (26 մարտի 1962թ):

Ելնելով այս ժամանակագրությունից, Լ. Շանթի գործերի հրատարակման հարցի արծարծման առաջնայնությունը ես ավելի մեծ հիմքերով կարող էի վերագրել Գ. Մահարուն, մանավանդ որ իմ ձեռքի տակ է նաեւ այդ մասին նրա անտիպ, մերժված նամակը «Գրական թերթի» խմբագրությանը, բայց այդպիսի բան, որքան հիշում եմ, ես ինձ թույլ չեմ տվել:

Եվ վերջապես մի՞թե ես պետք է հիշեցնեմ խորհրդային թոհուբոհում եփված գրականագետին, թե ինչպես էին սովորաբար լուծվում նման կարգի հարցերը: Նախ բարձրաստիճան պետական գործչի «դաբրոն» էր ստացվում հյուրընկալի՝ Յա. Զարոբյանի հետ առանձնազրույցում, իսկ հետո ճարվում էին մարդիկ, որոնք «ծույլ ֆիզգուլի նման վազում է դեպի բուվառը: - Տեր, կեցո՛ն...»:

Տեղին է արդյոք Ռ. Ջարյանի հուշերի վկայակոչումը Ն. Ջարյանի առիթով: Ինչո՞ւ չքարձրաձայնել, որ այդ փայլուն ավետաբերի հուշերի կենտրոնում ոչ թե տասնյակ հուշ-հերոսներն են, այլ ինքը, հեղինակը, որ այդ հուշերն ըստ մեծ մասի կառուցված են «ինձ ասաց», «ես ասացի»-ների վրա... Իսկ Ռ. Ջարյանի հուշերը հարցակալի տակ վերցնելուց հետո, ինչ կմնա երջկոմի քարտուղարի հուշերից՝ ինքներդ դատեք...

Եվ վերջինը: Մինչեւ հարցադրույցը նույն հարցի շուրջը, նույն վերադիտումներով լույս էր տեսել գրականության ինստիտուտի ատենագրությամբ մի հոդվածասական:[17] Ինչպես պարզվեց նույն ինստիտուտի բ. գ. բարձրաստիճան աշխատակցուհու ընդդիմախոսականից,[18] հրատարակումը չէր ենթակայել ոչ կոլեկտիվի ընդհանուր ժողովում, ոչ գիտական խորհրդի նիստում: Ինչ անուն տալ երեւույթին՝ կոլեկտիվի կարծիքի սեփականաշնորհում, խորհրդայնացում...

Ա. Եղիազարյանի հարցադրույցն ինձ չբավարարեց թե ձեւով եւ թե բովանդակությամբ: Անկախ նրանից, թե ինչպիսի շահագրգիռություն կունենա մեր հրապարակային երկխոսությունը, ես այլեւս սպասելիներ չունեմ նրանից: Ահա թե ինչու վերջին տողերով խնդրում եմ մեր պետական եւ գրական այրերին, համապատասխան հիմնարկներին եւ կազմակերպություններին՝ ձեռնարկել Ն. Ջարյանի եւ Հր. Քոչարի անունները երեւանյան փողոցների եւ դպրոցների վերանվանման հայլեր: Այդ պատվին նրանք արժանացել են ոչ թե հայ գրականությանը, այլ խորհրդային տոտալիտար իրավակարգին մատուցած ծառայությունների համար:

Հ. Գ. Ինչպես երեւում է, ջինը ջից բաց է թողնվել: Լույս տեսավ մարական խորագրով եւս մի հրապարակում:[19] Դա իմինին լավ է: Սակայն հոդվածի ընթերցումը չի կարող տարակուսանքի մեջ չգցել ընթերցողին: Հոդվածի առաջին կեսում հեղինակը, Երեւանի պետական համալսարանի հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչը, դուրս է գալիս A կետից եւ, իր իսկ տրամաբանության հետեւողականությամբ, թվում է, բարեհաջող եւ ուղիղ գծով պետք է հասներ B կետը: Սակայն երկրորդ կեսում հոդվածն անսպասելիորեն վեր է ածվում մոդվածի («փողոց-մոդոց» կլինի, իսկ հոդված-մոդված՝ ո՞չ...) եւ անսպասելի մի զիգզագով հեղինակը հայտնվում է մի կետում, որը շատ հեռու չէ երբեմնի Կառնիր Բանակի փողոցի վրա գտնվող գրականության ինստիտուտի «ընդհանուր» դիրքերից: Նման կիսաս-պրաս, «բայց»-ական դատաստարանը բնորոշ էր խորհրդային «բարեթաբաս» ժամանակներին: Մի կողմից հոդվածագիրը խիզախորեն խոստանում է Հր. Քոչարի վեցհատորյակի «4.000 էջից ավելին», մյուս կողմից նա ստեղծագործության վերարժեքավորումը թողնում է «գրականագետների նոր սերնդին, որը, մեր սերնդի բարդույթներից լրիվ ազատված, կարող է ննջել այն որպես պատմագրական արժեք»: Սա ինչ է՝ առողջ բանականության ծաղր, թե «հիմար»,- երկու դեպքում էլ չեն ծառայում ճշմարտությանը:

Ավելի լավ կլիներ, եթե հարգելի պրոֆեսորը մահանգվեր ոչ թե ժամանակակից սերնդի, այլ սեփական բարդույթներով: Եթե նման պատիֆիսական «բարեհոգությունը» հետեւանք է խառնվածքի եւ բնավորության, արդա դա այնքան էլ լավ չէ իր ղեկավարած ամբիոնի եւ նորագույն գրականության համար, իսկ եթե գրական կոնյունկտուրայից եւ անձնական շահերից բխող դիրքորոշման՝ արդա ավելի վատ է: Մենք բոլորս ունենք պատասխանատվություններ այն ժամանակի նկատմամբ, որում ապրում ենք, եւ «ոսկե միջինը» փնտրող, նախ ու մեխին հարվածող հոդվածագրի ղեկավարած ամբիոնը նույնպես պատասխանատու էր անցյալ տասնամյակներում արժեքավորել Ն. Ջարյանի եւ Հր. Քոչարի թողած կամ չթողած գրական ժառանգությունը, իսկ գրական կամ բարոյական հարցումներով բնակչությանը դիմելը նիհարելի չէ, քանի որ ինչ-որ տեղ սահմանակցում է անբարոյականության հետ:

Նորայր

Ծանոթագրություններ

1. «Մակբեթը չի լվանում ձեռքերը»: «Ազգ», 2008, հավելված «Մշակույթ», 12 յունուարի, թիվ 1:
2. Ն. Ջարյան: ՊՂ եմ ես: «Միտք», եր., 2005, 17-23 մայիսի, թիվ, 16:
3. Ն. Ջարյան: ՊՂ եմ ես : «Միտք», եր., 2005, 31 մայիսի-6 հունիսի, թիվ 18:
4. Ջարենցպարտում ըստ անտիպ վավերագրերի: եր., 1977, էջ՝ 106-107:
5. Նացիոնալիստական տականների հոգեստրդին: «Գրական թերթ», 1937, 10 մարտի:
6. «Բարձրացնել բոլշեւիկյան գաստությունը գրականության եւ արվեստի ֆրոնտում», «Խորհրդային արվեստ», 1936, թիվ 15-16, 1 սեպտ., էջ՝ 203-204: «Դեմի խորհրդային գրականության նոր վերելք», «Խորհրդային Հայաստան», 1936, 18 սեպտ.: «Գրական լեզվի նացիոնալիստական աղավաղումների դեմ», «Խորհրդային գրականություն», 1936, թիվ 3-4: «Ընդդեմ նացիոնալիզմի եւ տրոցկիզմի, հանում սոցիալիստական մեծ գրականության», «Գրական սերունդ», 1936, թիվ 4, էջ՝ 15-19: «Կատը կտրած խմբագրեցը», «Գրական սերունդ», 1936, թիվ 5-6, էջ՝ 33-35: «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով», «Գրական թերթ», 1936, թիվ 19, 25 օգոստոսի:
7. «Գրական թերթ», 1934, թիվ 4:
8. Վասիլի Գրոսման: «Բարին ընդ ձեզ»: Երեւան, 1966, էջ՝ 20:
9. «Նորք», եր., 2006, թիվ 4, էջ՝109-110:
10. ԳԱՄ, Վ. Ալազանի ֆոնդ:
11. Նկատի ունի 1936 թվականին ՀԿԿ Կենտկոմի գաղտնարանական գծով քարտուղարին եւ ՆԳ ժողովրդական կոմիսարին:
12. ԳԱՄ, Վ. Ալազանի ֆոնդ:
13. «Գրական թերթ», 2001, 1-15 հունվարի, թիվ 1: Այս առիթով տես նաեւ՝ Գր. Ամեմյան, «Մահարի-Ջարյան-Կարապետիկյան եռանկյան մութ անկյունները», «Ազգ», 2007, հավելված «Մշակույթ», 19 մայիսի, թիվ 10:
14. Գրականագիտական հանդես, եր., 2005, Ա(9), էջ՝ 193-224:
15. Հայաստանի ազգային արխիվ, Մ. Առմենի ֆոնդ:
16. Նույն տեղում:
17. «Գրական թերթ», 2007, 23 նոյեմբերի:
18. «Ազգ», 2008, հավելված «Մշակույթ», 26 յունուարի, թիվ 2:
19. Վ. Գաբրիելյան: «Ներել թե չներել»: «Գրական թերթ», եր., 2008, 15 փետրվարի, թիվ 4: ■

ՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՆՏԵՍՆԵՐԻ ՆՈՐՈՐՅԱ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ

ՊՈԼՍԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԵՏԸ

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երջանկահիշատակ Զահրաց հետ առդեմ ուսումնական անց Զարեհ Խրախունին է պատմականորեն նվաճել վերջին տարբերակս դարի պոլսահայ իմացական բանաստեղծության նահատակը լինելու գեղագույն պատիվը: Ծննդյան վկայականով Արտաշես Ցյումբուլյանը (ինքը պիտի փափագեր ավանդական ՇԻՄՊԻՇԵԼԱՆ ձեւը)՝ արդեն Զարեհ Խրախունին, որ ստեղծագործում էր դեռ վաղ տարիից եւ ուներ կազմակերպված մտածողություն, Պոլսի Մխիթարյան վարժարանում, արդեն եւ Սամբուլի համալսարանում բարձրագույն կրթություն ստանալով, խորացավ փիլիսոփայության ու գեղագիտության գաղտնարանները եւ իր ստեղծագործությունը դրեց նոյասակասլաց հունի մեջ: Թերեւս այս էր գլխավոր պատճառը, որ դեռ 1940-ականներից ստեղծագործող այդ անհատականությունը որպես բանաստեղծ հանդիսացավ բավական ուշ՝ համեմատաբար հասուն տարիքում, եւ առաջին հերթողարները հրատարակեց 1964-ին: Մինչեւ հասունություն նա որոնումների ճանապարհը դյուրին չի եղել. հայրենի եւ համաշխարհային բանաստեղծական համակվագի մեջ նա ծանր տճանմով որոնել ու գտել է իր սեփական ձայնը հնչեցնելու կերպը եւ ոչ թե հակադրվել է ավանդական բանաստեղծներին ու հերթողությանը, այլ հայտնաբերել իրեն ոգեւորող երեւույթները, մարդկային ու հանրային հարաբերությունները բանաստեղծականացնելու նախորդներից ու ժամանակակիցներից տարբեր եղանակ, որ պայմանավորված էր նրա իմնաստիպ աշխարհընկալումով, իրեն ու երեւույթները պատկերելու առավել խորհրդանշական միավածությամբ, որից, սակայն, գրեթե չի տուժել բանաստեղծության զգացական կողմը: Պատճառը պարզ է. այսօրվա մտավորական ընթերցողն ունի խոհերի ու զգացմունքների ավելի բարդ աշխարհ, եւ միջնադարյան բնորոշ վարդ ու եղնիկի, սոխակի ու սիրամարգի հիմքով ստեղծված պատկերը չի կարող լինել հույզի ու գեղագիտական բովականության լիարժեք աղբյուր:

Բնական է, որ առարկայական աշխարհի բանաստեղծականացման ճանապարհին պիտի կայանար ստեղծագործական երեւակայության եւ իրերի բնույթի իմաստասիրական ճանաչողության յուրօրինակ համադրություն, որով էլ պիտի ձեւավորվեր գեղարվեստական պատկերի ոլորտ որակը: Գերազանցապես իմացական ու մտածական այդ պատկերը՝ թեեւ զգացականով օծված, բնականաբար անսովոր ու դժվարամատչելի պիտի լիներ զգացմունքային բանաստեղծության ավանդական պատկերացում ունեցող ընթերցողի համար, որովհետեւ «խախտվում» էր դասական բանաստեղծությանը բնորոշ զգացմունքի եւ մտքի հավասարակշռությունը՝ արվեստագետի աշխարհաճանաչողության, զգացմունքի բովանդակության եւ գրող-ընթերցող հարաբերության ասիճանական փոփոխությունների պատճառով: Եվ այս ընթացքում էլ ավանդական՝ վանկերի ու տեսերի կանոնավոր ներաշնակությամբ հյուսված հանգավոր տողերի ու տների, բանաստեղծության դասական տեսակների, այլ խոսքով՝ տաղաչափական ամանակային, վանկային, վանկատեսական, համատեղ ու ազատ (verlibre) համակարգերի կողքին գոյատեւելու իր բնական իրավունքն է հասաստել ազատ բանաստեղծության իմացական տեսակը, որ չափածոյի համաչափությունն ու երաժշտականությունը գերազանցապես հիմնում է մտքի ու տրամաբանական տեսքի վրա:

Քիչ դեպքերում է գրող-ընթերցող հարաբերությունը վերածվում մտերմության, մանավանդ որ մերօրյա բազմազբաղ ընթերցողը գրականությանն անմիջաբար հաղորդակցվելու քիչ ժամանակ ունի կամ գրեթե չունի: Բայց սա կարծես ամենեւին չի վերաբերում արժանավոր Նահատեսին՝ Զարեհ Խրախունուն, որովհետեւ առաջին իսկ բանաստեղծական ժողովածուներով, որոնք լույս տեսան նույն 1964-ին, նա կարողացավ նվաճել դժվարահաճ ընթերցողի ուշադրությունը: Բայց հիմնախնդիրը դեռեւս լուծված չէր. ընթերցողն իսկապես ուներ բնական վարանումներ ու տարակուսանքներ. արտաքուս այն տպավորությունն էր ստեղծվում, թե նրա բանաստեղծությունն օտար ծագումնաբանություն ուներ, բարունակությունը չէր արեւմտահայ բանաստեղծության դասական շրջանի եւ սփյուռահայ նորագույն բանաստեղծության, որովհետեւ անմիջաբար ընկալելի չէր: Այս հանգամանքներում դժվար էր նկատել մեր գեղարվեստական մտածողության զարգացման պատմության մեջ որակական նոր շրջափուլ նշանավորող երեւույթը: Նույն՝ թեկուզեւ շատ ուշադիր ընթերցողը՝ առանց որոշակի իմացականության ու պատասխանատվության հազիվ թե կարող լիներ այս հարցականներում կողմնորոշվելու:

Իրողություն է, որ Զարեհ Խրախունին չուներ Ավ. Իսահակյանի «զգացմունքների տարերային անմիջականությունը» (Վ. Տերյան) եւ «արեւելահայ գեղջուկ պարզությունը» (Հ. Օշական): Իր եւ Իսահակյանի տարբերությունները ժամանակին Տերյանն իմն է հասալիորեն բացատրել՝ ընդգծելով իր եւ ընթերցողի միջեւ առկա տարաբնույթ միջնորդավորումները, որոնք չկային Իսահակյան-ընթերցող հարաբերության մեջ: Սնված լինելով Պոլսո գրական ավազանից՝ Խրախունին չուներ նաեւ Մեսարենցի ու Վարուժանի մտածողության հասկությունն ու մաչելիությունը, թեպետ նաեւ նրանց ազդակիցն է գեղարվեստական մտածողության մեջ, առավել հակված էր դեպի Սիամանթոն, որը, կիկլոպյան հզոր լուսարձակով դիտելով իրականությունը, վարուժանյան բնորոշումով, «շիկացած երկաթով մարմարէ սալերուն վրայ դաջուածներ կ'ընէ, որոնք սիմեմայի մը երեւոյթը ունին»: Ընթերցողն, ուրեմն, Խրախունու պոեզիան հասկանալու եւ արժեւորելու համար, կրկնենք, պիտի ունենար որոշակի պատրաստվածություն, մտավոր զարգացման անհրաժեշտ մակարդակ: Այս պատճառով էլ դժվարությամբ կայացավ Զարեհ Խրախունու եւ ընթերցողի անհրաժեշտ ու փափագելի մտերմությունը:

Մի այլ ցավալի ու աննպաստ խնդիր էլ կա. ոչ միայն հաղթական, այլեւ տարաբաժանակային ու այլ պատճառներով՝ հայոց հոգեւոր մշակույթի մի էական ու կարեւոր մասին՝ այսօրվա պոլսական գրականության հետ տեսականորեն ու անմիջաբար շփվելը, ցավոք, միշտ չի հաջողվում. ընդհատումներով կամ կցկտուր հաղորդակցության պայմաններում պոլսահայ ներկա. բանաստեղծների, այդ թվում եւ Զ. Խրախունու բոլոր ժողովածուները ժամանակին մեր ձեռք չեն ընկել, ուստի եւ լիարժեք ու ամբողջական չի եղել մեր պատկերացումը պոլսահայ արդի գրական վարպետների՝ Զահրաի, Իգնա Սարգսյանի, Վարդ Շիկահերի, Որոթ Հաստեղյանի, Զարեհ Խրախունու եւ մյուսների ստեղծագործական հունձքի մասին: Աշխարհի տարբեր հարաթներում՝ Սամբուլ, Բեյրութ, Փարիզ, Մոնրեալ, Երեւան, Լոս Անջելես, Էջմիածին եւ այլուր, լույս տեսած հայերեն 26 բանաստեղծական ժողովածուների, օտար լեզուներով վեց հրատարակությունների, երկու թատերախաղերի, երկու գրականագիտական գրքերի, խմբագրական բազմաթիվ աշխատությունների հեղինակ Զարեհ Խրախունին այսօր մեզ է ներկայացվում նախորդ հերթողագրերից իրոք բարձր ճաշակով հաղված մի մեծաղիր ու շքեղ հատընտիրով, որը վերնագրված է «Տօնագանգ» (Երեւան, 2007, 300 էջ): ՀԳ միության ու «Սփյուռք» գիտակրթական կենտրոնի նախաձեռնությամբ, պրոֆ. Սուրեն Դանիելյանի հեղինակությամբ, նրան նվիրված հանդիսավոր ակադեմիայի նախաշեմին, գրեթե ամբողջ գրական ասպարեզը՝ գրողներ, գրականագետներ, գրականասերներ, հանդիսատեսներ, ուսանողներ, դասախոսներ, գրական ամսագրեր ու թերթեր, ինչպես նաեւ Հայաստանի Գրողների միությունը, Գրողների տունը, Գրական հանդեսը, Գրական ամսագիրը, Գրական թերթը, Գրական ինստիտուտը, Գրական թանգարան

Օսկար-2008

Թե ում է շնորհվում «Օսկար» անունը կրող արձանիկը, պարզ կդառնա վաղը փետրվարի 24-ին, Լոս Անջելեսում կայանալիք կինոարվեստի ամենահեղինակավոր մրցանակաբաշխության ժամանակ, որն, ի դեպ, այս տարի հոբելյանական է: Օսկարը տոնում է իր 80-ամյակը:

Ամերիկայի Գողդերի գիլդիայի երկարաբեւ գործադուլը, որը հունվարին տարավեց «Ոսկե Գլոբուս» հանդիսությունը, կարող էր տարավել նաեւ այս մեկը, սակայն կարծես թե փողն իր դերը խաղացել է, եւ միլիոնավոր մարդիկ ափսարի ամենատարբեր անկյուններում հուսախաբ չեն լինի:

Դրանով, ավա՜ղ, ամենն ինչ չի սահմանափակվում:

Կանանց հատկապես հետաքրքրում է տեսնել, թե այս կամ այն դերասանուհին ի՞նչ եւ ինչպե՞ս է հագնված:

Կինոյի սիրահարներին հետաքրքրում է նաեւ այն, թե ինչպե՞ս են իրենց պահելու, ի՞նչ կատակներ ու սրամտություններ են արտասանելու եւ կարճ ժամանակում քանի՞ հոգու են շնորհակալություն հայտնելու հաղթող դերասան-դերասանուհիները:

Եվ վերջապես ամենակարեւորը՝ թե ո՞վ է տիրանալու արձանիկներին, քանի որ մրցանակաբաշխության գաղտնիությունը, անկանխատեսելիությունը կարծես նրա ամենահետաքրքրական, ամենահուզիչ մասն է:

Արտառուչ տպասումներ պարգեւող այս վերջին հարցն անշուշտ կախված է տարբեր անվանակարգերում ներկայացված թեկնածուների անուններից: Այս տարի հայտնի դերասան-դերասանուհիների (Ջորջ Քլունի, Դենիել Դեյ Լյուիս, Թոմի Լի Ջոնս, Քեյթ Բլանշեթ) կողքին շատ են նաեւ երիտասարդների կամ էլ ծանոթների անունները: Նրանց թվում են Լաուրա Լեննին, Էլեն Փեյջը (20 տարեկան), Քիրա Նայթլին (22 տարեկան) եւ ուրիշներ:

Ստորեւ մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում 7 անվանակարգերում 5-ական թեկնածուների անունները՝ փորձելով տալ նաեւ հակիրճ տեղեկություններ յուրաքանչյուրի մասին:

Եվ սրտանպաստ շնորհավորում է...

I. «Լավագույն ֆիլմ» անվանակարգում ներկայացված են.

ա) **«(Մեղ)երի հավություն»** ռոմանտիկական դրամա՝ նկարահանված բրիտանացի ճանաչված գող Իյան Մկյուեանի վեպի հիման վրա: Ռեժիսորն է Ջո Ռայթը, որը հայտնի է իր «Հպարտություն եւ նախապաշարմունք» ֆիլմով, որն արժանացել է բրիտանական կինոարվեստի ակադեմիական մրցանակին (BAFTA): Ֆիլմը, որին հունվարին Ոսկե Գլոբուս մրցանակ շնորհվեց որպես 2007-ի լավագույն կինոնկար, արծարծում է հին ու նոր սերունդների իրար չհասկանալու եւ մշտական բախման մեջ լինելու հարցը: 1935 թվի ամռանը Սեսիլիայի եւ Ռոբիի միջեւ տեղի ունեցած միջադեպը սխալ է մեկնաբանվում եւ փոխում է ինչպես Սեսիլիա եւ Բրիոնի քույրերի, այնպես էլ նրանց եւ տանտիրոջ որդու՝ Ռոբիի միջեւ գոյություն ունեցող հարաբերությունները: Դերերում՝ Քիրա Նայթլի եւ Սոիրս Ռոնան:

բ) **«Ջունո»** ֆիլմը: Ռեժիսոր Ջեյսոն Ռայթման, սցենարիստ՝ Դիաբլո Կոդի, որը 2006-ին ուշադրության արժանացավ իր «Candy Girl» ֆիլմով:

«Ջունոն» Մինեսոտա նահանգից մի դեռատի աղջկա մասին է, որն ասում եւ անում է այն, ինչ մտածում է, առանց հաշվի առնելու բարոյական նորմերն ու էթիկայի կանոնները:

16-ամյա Ջունոյի դերը մարմնավորում է Էլեն Փեյջը:

գ) **«Մայլզ Քլեյթոն»** ֆիլմը, որը ռեժիսորական դեբյուտն է վետերան սցենարիստ Թոմի Գիլրոյի: Նրա անվան հետ են կապվում այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք են «Սատանայի փաստաբանը» (1997 թ.), «Կյանքի աղացուցը» (2000 թ.) եւ «Բոռնի վերջնագիրը» (2007 թ.): Ֆիլմը Նյու Յորքում իրավաբանական մի ֆիրմայի մասին է, որը փորձում է անաղարտ պահել իր հեղինակությունը: Գլխավոր դերում է Ջորջ Քլունին, որն իր կյանքը վտանգի տակ է դնում՝ փորձելով բարոյական եւ էթիկական ճիշտ լուծումներ ընտրել: Այստեղ դերերում ընդգրկված են Թիմ Վիլկինսոնն ու Թիլդա Սվինտոնը:

դ) **«Ծերերի տեղը չէ այստեղ»** ֆիլմը, որը Ջոնաթան Մկարթիի վեպի հիման վրա նկարահանված նորօրյա վեստեռն-թրիլլեր է, որտեղ տեխասցի Լուեյին Մոսը, տիրանալով պատահական մի դիակի կողքին գտնվող 2 մլն դոլար գումարին, իրեն գտնում է շերիֆի (օրենքի) եւ մոլագար վարձու մարդասպանի հետաքննությունների ոլորտներում: Ռեժիսորներ Իթն եւ Ջոել Քոենների այս ֆիլմում գլխավոր դերերը կատարում են Թոմի Լի Ջոնսը (շերիֆ) եւ Խավիեր Բարդեմը (մարդասպան):

ե) **«Արյուն կհոսի»** ֆիլմը (ռեժիսոր Պոլ Թոմաս Անդերսոն), որը նկարահանված է ամերիկացի գող Էփսոն Սինկլերի (1878-1968 թթ.) «Նավթ» վեպի հիման վրա, որտեղ 20-րդ դարի սկզբին տեխասցի արծաթախույզը արծաթի փոխարեն նավթ է հայտնաբերում հանքերում եւ միանգամից հարստացած սկսում է Կալիֆոռնիայում աղխաս ընտանիքներին համոզել, որ իրեն վաճառեն իրենց հողերը: Արծաթախույզ Դենիել Փլեյնվիուի դերում՝ Դենիել Դեյ Լյուիսն է:

II. «Լավագույն դերասան» անվանակարգում ներկայացված են.

ա) **Ջորջ Քլունին:** Ռեժիսոր Թոնի Գիլրոյի «Մայլզ Քլեյթոն» ֆիլմից:

բ) **Դենիել Դեյ Լյուիսը:** Ռեժիսոր Պոլ Թոմաս Անդերսոնի «Արյուն կհոսի» ֆիլմից:

գ) **Ջոնի Դեփը:** Ռեժիսոր Թիմ Բարտոնի «Սուինի Թոդ» ֆիլմից:

դ) **Վիգո Մորտենսենը:** «Արեւելյան խոստումներ» ֆիլմից, որը ռուսական մաֆիայի մասին է: 49-ամյա Մորտենսենը հայտնի է «Մատանիների տիրակալը» ֆիլմից, որտեղ մարմնավորել է Արագորնի դերը: Նոր ֆիլմում նա անխիղճ գանգստերի դերն է կատարում:

ե) **Թոմի Լի Ջոնսը:** Ռեժիսոր Պոլ Հագիսի «Իսահի հուշերը» ֆիլմից, որն իրական պատերազմի թեման է շոշափում, եւ ազդարարում, որ պատերազմը միայն մարտադաշտում չէ, որ մղվում է: Պատերազմը ամենահանգիստ, ամենախաղաղ մարդուն անգամ կաստիպեցնում է, սիրողում գործել գազանաբար:

III. «Լավագույն դերասանուհի» անվանակարգում ներկայացված են.

ա) **Մարիոն Քոթիյարը:** «Կյանքը վարդագույն ակնոցներով» ֆիլմից, որը հոչակավոր երգչուհի Էդիթ Պիաֆի մասին է: Ֆրանսիական ֆիլմ, որը բրիտանական BAFTA ակադեմիական կինոմրցույթում շահել է 4 մրցանակ:

բ) **Էլեն Փեյջը:** «Ջունո» ֆիլմից:

գ) **Ջուլի Քրիսթին:** «Նրանից հեռու» ֆիլմից:

ԵՎ ՄՐՑԱՆԱԿԸ ՇՆՈՐՀՎՈՒՄ Է...

է էջից

դ) **Քեյթ Բլանշեթը**: «Ոսկեդարը» ֆիլմից, որը «Էլիզաբեթ» ֆիլմի շարունակությունն է:

ե) **Լաուրա Լինֆին**: «Վայրենիները» ֆիլմից:

IV. «Տղամարդու լավագույն երկրորդական դեր» անվանակարգում ներկայացված են.

ա) **Ջեյսի Աֆլեքը**: «Տեսսի-Տեյմսի սպանությունը վախկոտ Ռոբերտ Ֆորդի կողմից» ֆիլմից: Ռեժիսոր Էնդրու Դոմինիկ: 32-ամյա Ջեյսին Բենի փոքր եղբայրն է, որը ֆիլմում մարմնավորում է Ֆորդի դերը Բրեդ Փիթի (Տեյմս) կողքին: Մեկ տարվա մեջ սա նրա 2-րդ դերն է: Մյուսը իր եղբոր առաջին ռեժիսորական աշխատանքում՝ «Վազիր փոքրիկ, վազիր»-ում սանձնված դերն է:

բ) **Խավիեր Բարդեմը**: «Ծերերի տեղը չէ այստեղ» ֆիլմից:

գ) **Ֆիլիպ Սեյմուր Հոֆմանը**: «Ցարի Վիլսոնի պատերազմը» ֆիլմից:

դ) **Թոմ Վիլկինսոնը**: «Մայլլ Քլեյթոն» ֆիլմից:

ե) **Հալ Հալբրուքը**: «Դեռի հախուռն կյանք» ֆիլմից: Ռեժ.՝ Շոն Փեն:

V. «Կնոջ լավագույն երկրորդական դեր» անվանակարգում ներկայացված են.

ա) **Էյմի Ադամսը**: «Վազիր փոքրիկ, վազիր» ֆիլմից:

բ) **Սոիրս Ռոնանը**: «(Մեղմերի) խավություն» ֆիլմից:

գ) **Թիլդա Սվինտոնը**: «Մայլլ Քլեյթոն» ֆիլմից:

դ) **Քեյթ Բլանշեթը**: «Ես այնտեղ չեմ» ֆիլմից, որը Բոբ Դիլանի կյանքի մասին է: Այլոց շարքում Քեյթը մարմնավորում է Բոբի դերը որոշակի ժամանակում:

ե) **Ռուբի Դին**: «Ամերիկացի գանգստերը» ֆիլմից, որը թմրադեղերի բիզնեսի մասին է:

VI. «Լավագույն ռեժիսոր» անվանակարգում ներկայացված են.

ա) **Իթն եւ জոել Քոենները**: «Ծերերի տեղը չէ այստեղ» ֆիլմի համար:

բ) **জուլիան Շնաբելը**: «Սուզվող զանգն ու թիթեռը» ֆիլմի համար, որը ֆրանսիական «Էլլ» պարբերականի խմբագիր Ժան-Դոմինիկ Բոբիի հուշագրության վրա է հիմնված: Բոբին 43 տարեկանում անդամալույծ էր դարձել եւ այդերը թարթելով էր թելադրում տեքստերը: Ռեժիսորը «Ոսկե Գլոբուսի» էր արժանացել հունվարին:

գ) **Պոլ Թոմաս Անդերսոնը**: «Արյուն կհոսի» ֆիլմի համար:

դ) **Թոնի Գիլրոյը**: «Մայլլ Քլեյթոն» ֆիլմի համար:

ե) **জեյսոն Ռայթմանը**: «জունո» ֆիլմի համար:

VII. «Լավագույն օտարալեզու ֆիլմ» անվանակարգում ներկայացված են.

ա) **«Բոֆորը»** (Իսրայել): Դերերը տեղի են ունենում 2000 թվին Լիբանանից Իսրայելցիների դուրս գալու օրերին, երբ զինվորները տեւական հարձակումների սպառնալիքի տակ մի կողմից սգում են իրենց ընկերների կորուստը, մյուս կողմից՝ պատրաստվում էվակուացիայի:

բ) **«Դրամաներգները»** (Ավստրիա): Զակսենհաուզենի համակենտրոնացման ճամբարում մի խումբ բանտարկյալներ, որոնք հարկադրաբար զբաղված են դրամանենգությամբ, փորձում են հեռաձգել կեղծ դրամների ներհոսքով Մ. Նահանգների եւ Բրիտանիայի տնտեսությունները քայքայելու նացիստների ծրագրի իրականացումը:

գ) **«Կատին»** (Լեհաստան): 1940-ական թվերի եղերական դեպքերի ֆոնի վրա հյուսված մշտանորոգ հույսի պատմությունը մի կնոջ, որը հրաժարվում է ընդունել, թե ամուսինը մահացած է:

դ) **«Մոնղոլը»** (Ղազախստան) 12-րդ դարի Մոնղոլիայում են կատարվում դեպքերը: Ցինգիզ խանի պատանեկության շրջանը պատկերող՝ այս ֆիլմում հոր սպանությունից հետո Թեմուչինը իր հարազատ եղբոր՝ জամուխայի աջակցությամբ պատերազմում է գահը խլողների դեմ եւ փորձում միավորել բոլոր մոնղոլ ցեղերին իր իշխանության ներքո: Ռեժիսոր՝ Սերգեյ Բոդրով:

ե) **«12-ը»** (Ռուսաստան): 12 երդվյալ ատենակալներ պետք է որոշեն ճակատագիրը երիտասարդ մի չեչենի, որին ներկայացված է իրեն որդեգրած ռուս հորը սպանելու մեղադրանք: Ռիժիսոր Նիկիտա Միխալկովի այս ֆիլմը, ըստ կինոքննադատների, այլաբանական յուրօրինակ մոտեցում է Ռուսաստանի մերօրյա հասարակական-քաղաքական խնդիրներին:

Պատրաստեց
ՏԻԳՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԸ

ՊՈԼՍԿՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ...

Ջ էջից

կենսազգացողության խորհրդանշական կերպն է, որ դրսեւորվել է նրա «Տանազանգ» երթողագրում: Եվ որքան զարել է այն, նույնքան մեծ են տեսադաշտն ու ընդգրկումը, նույնքան տեսանելի ու առարկայորեն շոշափելի է գեղարվեստական պատկերի մեջ խտացված բազմերանգ կյանքը:

Քերթվածների ստեղծման աշխարհագրությունն ու ժամանակագրությունը շատ են դիտարժան. ճանապարհորդություններ, կառախմբեր ու կայարաններ, երկրներ ու քաղաքներ, ու մարդիկ, մարդիկ՝ տարագույն ու տարազգի, նույն ցավի ու տագնապների, նույն երազի ու երջանկության սպասումի մարդիկ, որոնց հանդեպ դրսեւորվում է լայնախոհ ու մեծասիրտ հեղինակի՝ ծեծարենցյան «Ընկայի...»-ները եւ «Արի մարդուն հայր մերը» հիշեցնող այլասիրությունը, որով ջանում է սփոփել աշխարհի մեգապոլիսներում խճճված բազմահոգ մարդկության ցաված սիրտը: Անչափ կարեւոր է, որ բարոյական այդպիսի վեհ կեցվածք է դրսեւորում աշխարհում ամենից անհոգվածը, ծանրագույն կորուստներ կրած, հոգով ու պատմական հիշողությամբ խոցված հայ ժողովրդի բանաստեղծ զավակը, որը ոչ միայն չի դառնում աշխարհաղդացի՝ ազգային ամեն ինչի ուրացումով, ընդհակառակը, գրից գիրք ու շարից շարք ավելի ընդգծում է իր հայ լինելու հպարտությունն ու այդ բարձրագույն գիտակցությամբ է բանաստեղծակերացնում ոչ միայն իր դարի հայ մեծերի՝ Արշիլ Գորկու, Գաբրիել Սեւանի, այլեւ իրեն հոգեկից էռնստ Յենինգուելի, Ժակ Պրեւերի եւ ուրիշների առնչությունները: 1915-ն ու նրա հեռեւանքները տեսած ժողովրդի բանաստեղծը պիտի ամենից խորն զգար 2001-ի սեպտեմբերի 11-ի մարդաթին աղետի ողբերգականությունը եւ հիշատակի ամենասրտառուչ խոսք ուղղեր նյույորքյան անմեղ զոհերի հիշատակին.

Մինչ կը ճաբեմ ու նաբ
Աչքի պոչով կը նայիմ հեռուստացոյց պատատին
Հանկարծ բերնի մէջ պատառը կ'ըլլայ հար
Պատառահաղ դանակ դգալ կ'ինեան վար
Մեր ափերով պինդ կը փակեմ աչքերը մեր դուրս ինկած,
Երբ կը բանամ՝ մղձաւանջ չէ, հունի մէջ չեմ, երազ չէ...
... Ցածէն թռչող օդանաւ մը վիթխարի
Որ հրաշէկ կացին որդէս կը հարվածէ մէջը բեմին երկնամերձ՝
Ու կը պայթի ահագնաբոց ճայթիւնով
Զոր չեմ լսեր սակայն կը զգամ դղրդիւնէն ոսկորներու ծուծերուն...

Բնորոշ խորագրեր ունեն Չարեխի խոհանոցի երթողագրերը եւ մանավանդ վերջինները՝ «Ազատերգութիւն» (1993), «Ուրախ խօսք» (1996), «Քար Հայաստանի» (1997), «Շերքի վրայ ճարտարախաղ» (1998), «Դարաբաղում» (2001), «Մեսրոպաբան» (2005): Սրանց ուշադիր ընթերցումը այն համոզումն է գոյացնում, որ Աստիրոնը լավ ճանաչող, նրա ձեռավորման պատճառներն ու գաղտնի հեռանկարները լավ պատկերացնող երթողը, բնականաբար, այլ հայացքով պիտի նայեր այսօրվա Հայաստանին ու ավելի խոր պիտի զգար նրա արժեքը համայն հայության համար: Այդ համոզումը նախ ենում են այն բանաստեղծություններն ու շարքերը, որոնցում մեր պատմության ու ճակատագրի խորագույն իմացությամբ առավել առարկայորեն են պատկերված հայրենիքը եւ առավել զգայական՝ մեր ժողովրդի ազգային հավաքականության ու միասնության խորհուրդը, հայ մարդուն առավել բնորոշ ստեղծարար ձիրքերը, այլասիրությունը, ազգային ու համամարդկային վեհ գաղափարներին նվիրվելու պատասխանատվությունը: Հայ գրերի մատենագրության գրության պատմությունը դեռեւս հինգերորդ դարից ներկայացրել են Կորյունը, Խորենացին, Փարպեցին, հետագայում Մեսրոպ Մատենագրին սրբագրել ու գեղարվեստականացրել են մեր գրողներն ու մյուս արվեստագետները՝ Մ. Նալբանդյանը, Ռաֆֆին, Ս. Ներսիսյանը (գեղանկար), Սիամանթոն, Դ. Դեմիրճյանը, Հովհ. Շիրազը, Պ. Սեւակը, Գր. Խանջյանը (գրքերեն) եւ ուրիշներ: Թվում էր՝ այլեւս անկարելի պիտի լիներ այս ուղղությամբ նոր խոսք ասելը, բայց ահա Չարեխ խոհանոցին գտել է վաղուց հայտնի վավերական պատմությունը գեղարվեստականացնելու նոր միջոցներ, գրերի ստեղծման 1600 - ամյակի առթիվ տասնվեց բանաստեղծություններով հյուսել «Մեսրոպաբան» պոեմը, որի վերջաբանում, աշխարհաքիր հայությանը նորովի մատնացույց անելով տասնվեցդարյա գրության արդիական արժեքը, բերում է հայոց նորագույն պետականության շուրջ համախմբվելու պատգամախոսությունը.

Տասնվեց դար եղբ այսօր
Հազար անգամ փառք կուտանք
Հազար անգամ երանի՝
Որ հակառակ այդքան դարու արհավիրքի
Հալածանքին կոտորածին բռնագաղթին գերութեան,
Եղբը միշտն հայորդիներ- աննախընթաց թուանշան՝
բայց ոմանք լոկ ծագումով -
Վերածված ազգաս անկախ ու գերիշխան պետութեան հեռ ձեռք ձեռի
Տարի մը ամբողջ կը տանինք
Ազգայարիայն Գիւղը մեծ
Որ է նոյնքան փոխագործ - գուցէ նոյնիսկ շատ աւելի՝
Ազատատար գոյի մըն է երկնառք
Նեռուած խանձէն թիւ այս դարու ոլկիաներին ալեկոծ,
Քան թե անցեալ շրջաններուն՝ հինգերորդին - միւսներուն
Երբ բոլանդակ Ազգն Հայոց
իր տան մէջ էր հաւաքուած ...

Չարեխ խոհանոցին իր ստեղծագործությամբ լավագույնս հերքում է մեր միասնական ազգային գոյականությունը մասնատելու, արեւելահայ, արեւմտահայ, սփյուռքահայ մասերի բաժանելու նախկին փորձերը. նա իր էությամբ, ուղղությունով հայ բանաստեղծ է, պոլսական գրական իրավ մեծությունների ազնիվ շարունակությունը՝ այսօր արդեն նահատեսի կարգավիճակով: Նա ոգեսունի շեմն անցել է ծանրակշիռ վաստակով, եւ մեծ բարեբախտություն է նրա բանաստեղծական երկարակեցությունը: Այս տարիում սովորաբար կամ անցնում են արձակի, կամ հրապարակախոսության, կամ էլ դադարում են ստեղծագործելուց: Սակայն Չարեխ խոհանոցն արդյունավոր գրական ուղում եւ մանավանդ վերջին երթողագրերին նեսված համառոտ անդրադարձն անգամ այն տպավորությունն է թողնում, որ իր ազգային արմատներով հարս, կյանքի ոգեորդ տասնամյակը թեւակոխած բանաստեղծն առողջ է մտածողությամբ ու դեռեւս լի է ստեղծագործական կարողություններով, մեր հոգեւոր կալվածները նոր գոհերով հարստացնելու չխամրող եռանդով:

Արեւատությունն վաստակած երթողին հանում ոլորտային գրական կանգուն օգնի եւ ի շահ մեր ազգային ողջ գրականության: ■

Ստորեւ բարգմանաբար ներկայացվող հոդվածում ճանաչված հայագետ Պատրիկ Բուքանանը մեղադրաբեր է Կոսովոյի միակողմանի անկախությանը: Նա հերթական է նաեւ «Արեւմուտքի վախճանը», «Մեծ դավաճանություն», «Հանդուգնություն, ոչ թե կայունություն» եւ «Որտեղ ճիշտը սխալ դուրս եկավ» գրքերի:

Եթե պատերազմ է լինելու, «դա նշանակելու է Բալկաններում ինչ-որ մի հիմար բանի պատճառով», ասել էր ժամանակին գեներալ Ալեքսանդր Պետրովիչը: 1914-ի հունիսի 28-ին Սարաեւոյում Գավրիլո Պրինսիպի կրակոցից ավստրիացի գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը առիթ էր, որ սանձազերծվի Առաջին համաշխարհային պատերազմը:

1999-ի գարնանը Մ. Նահանգները 78 օր շարունակ ռմբակոծեց Սերբիան, որպեսզի ստիպի նրա բանակին դուրս գալ Բնօրանից՝ Կոսովոյից: Սերբերն այնտեղ պայքարում էին «Կոսովոյի ազատագրության բանակի» (ԿԱԲ) ալբանացի անջատողականների դեմ: Մենք մեզ ոչ մի իրավունք չտեսանք վերապահելու ռմբակոծելու Բելգրադը, ինչպես բրիտանական արայական նավատորմը իրեն իրավունք չէր վերապահել ռմբակոծելու Նյու Յորք ամերիկյան քաղաքացիական պատերազմի ժամանակ:

Մեզ համոզում էին, որ Սերբիան ռմբակոծում ենք կանխելու համար այնտեղ տեղի ունեցող ցեղասպանությունը: Բայց այնտեղ ոչ մի ցեղասպանություն էլ տեղի չէր ունենում: Դա պարզապես սուտ քարոզչություն էր: Միլոշեւիչի պատերազմում սերբերի եւ ալբանացիների զոհերի վերաբերյալ ՄԱԿ-ի հրապարակած վերջնական զեկույցում մահացածների թիվը Լինկոլնի պատերազմում ընկածների 1 տոկոսն էլ չէր կազմում:

Ճիշտ է, պատերազմի ժամանակաշրջանում հազարավոր ալբանացիներ փախուստի դիմեցին: Բայց պատերազմի ավարտից հետո Կոսովոյի սերբերը ականատես են լինում, թե ինչպես են իրենց բնօրանի սասնյակ հազարավոր հայրենակիցները ենթարկվում էթնիկական զտումների կամ թե ինչպես են իրենց եկեղեցիներն ու մենաստանները բարբարոսաբար ճանվում ու ջարդվում:

Ջանգվածային տեղահանությունների ժամանակ նրանք ամեն ինչ կորցրեցին: Երկրում մնացած 120 հազար սերբերը տեղավորված են հիմնականում ՆԱՏՕ-ի զինվորական ստորաբաժանումների կողմից վերահսկվող անկլավներում: «Պեյում գտնվող սերբական մի վանքի շրջակայքում իսլամական զորավարժարանները պաշտպանում սրբավայրը, որն այժմ իսկայական պատով առանձնացված է, որպեսզի տարեց մայրապետները զերծ մնան ալբանացի պատահական անցորդների հայհոյանքներից եւ քարերից:

Կիրակի օրը Կոսովոն անկախություն հռչակեց եւ անմիջապես ճանաչվեց Եվրոմիության եւ Նախագահ Բուշի կողմից: Բայց դրանով պատմությունը չի ավարտվում: Դա շատ բան տեսած Բալկանների հարուստ պատմության մի նոր էջի սկիզբն է միայն:

Քաղաքացիական պատերազմում միջամտելով, անջատողականներին թիկունք կանգնելով եւ հաղթելով, որ մի նոր պետություն ստեղծեն եւ կառուցեն զուտ էթնիկական, կրոնական եւ ցեղային հիմքերի վրա, մենք մի վտանգավոր նախադեպի սյուներն ենք կանգնեցնում: Մահմեդական եւ ալբանացի ծայրահեղականներն արդեն իսկ խոսում են Մեծ Ալբանիայի մասին, որի մեջ են մտնելու Ալբանիան, Կոսովոն, ինչպես նաեւ Սերբիայի, Չեռնոգորիայի եւ Մակեդոնիայի հիմնականում մահմեդական ալբանացիներով բնակեցված շրջանները:

Եթե այս ալբանացիներն իրենց հերթին անջատվելու եւ Կոսովոյի հետ միանալու պահանջ ներկայացնեն, մենք ինչի՞ հիման վրա ենք մերժելու նրանց պահանջը: Սահմանների անձեռնմխելիության սկզբունքն ենք կիրառելու: Իսկ եթե Յուգոսլավիայի Կոսովոյի Միտրովիցա շրջանում բնակչության մեծամասնությունը կազմող սերբերը, որոնք մերժում են ալբանացիների իշխանությունը, ցանկանան անջատվել եւ իրենց սերբ հայրենակիցներին դիմեն, որ պատսպարեն իրենց, ինչ է լինելու այդ դեպքում: Դարձյալ Սերբիայի դեմ ենք պատերազմելու: Կոսովոյի տարածքային ամբողջականությունն ենք պաշտպանելու, երբ մենք գլխավոր դերը կատարեցինք խորտակելու Սերբիայի տարածքային ամբողջականությունը:

Ամերիկայի հովանավորությամբ ստեղծված Բոսնիա-Հերցեգովինայի Դաշնության տարածքում գտնվող Սրոպսկայի Սերբական Հանրապետության բնակչությունը անկախանալու եւ Սերբիայի հետ միավորվելու ցանկություններ է արտահայտում: Ինչի՞ հիման վրա ենք մերժելու նրանց պահանջները:

Սերբիայի դեմ մեր սանձազերծած պատերազմը անսահմանադրական էր, անարդար եւ անմիտ: Կոնգրեսը չէր հաստատել այդ որոշումը: Սերբիան, որը երկու պատերազմներում մեր դաշնակիցն էր եղել, երբեք չէր հարձակվել մեր երկրի վրա: Մենք սերբերին բռնամացրինք, մեր դեմ հանելով նաեւ օտարներին: Ստեղծեցինք երկրորդ մահմեդական պետությունը Բալկաններում:

Միջամտելով մեզ բոլորովին չվերաբերող քաղաքացիական մի պատերազմի մեջ, Միացյալ Նահանգները, որին Պրիշտինայում ողջունում են, Բելգրադում՝ դատապարտում, մի ավելորդ բեռ է վերցրել իր վրա: «Կոսովոյի ազատագրության բանակ» հորջորջված մեր նոր դաշնակիցներին առդարձիորեն մեղադրում են մարդկանց եւ թմրադեղերի թրաֆիկինգի, բռնությունների եւ ահաբեկչության մեջ:

Եվ դեռ սա սկիզբն է էթնիկական ինքնիշխանության:

Ռումինիան հրաժարվում է ճանաչել Կոսովոյի նորանկախ պետությունը եւ լավ հիմքեր ունի դրա համար: Տրանսիլվանիայում բավականին մեծ հունգարական փոքրամասնությունը զգնվում է Բուխարեստի խանության ներքո: Դա նրան տվել է 1919-ի Փարիզի հաշտության պայմանագրով, որտեղ Խորվաթիան, Սլովենիան եւ Բոսնիա-Հերցեգովինան Վիեննայից անջատվելով միացվեցին Սերբիային:

Աբխազիան եւ Հարավային Օսիան, Կոսովոն որպես նախադեպ դիտարկելով, պահանջում են իրենց անկախությունը ճանաչել: Եվ, քանի որ ՆԱՏՕ-ի ընդարձակման կողմնակիցներն ամեն ջանք գործադրում են Վրաստանին ՆԱՏՕ-ի կազմում ընդգրկելու համար, արդա անխուսափելի է դառնում Վաշինգտոն-Մոսկվա հավանական առճակատումը:

Այս կողմից Իսլամիան, ունենալով նման պահանջներ, բախերի եւ կասպիական անջատողականների կողմից, չի ճանաչում նորանկախ Կոսովոն:

Մահմեդական աշխարհն, ինչ խոսք, հավանություն է տալիս Եվրոպայում մի նոր մուսուլմանական պետության հայտնվելը: Բայց Թուրքիան երեւի հարց առաջ քաշի, թե ինչու Եվրոմիությունն ու Մ. Նահանգները միեւնույն տրամաբանությամբ պատսպարեպ չեն ճանաչում Յուգոսլավիայի Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը:

«Բալկանացման» այս նոր ալիքի հետեւանքով, որ մենք բարձրացրել ենք, բազմաթիվ խնդիրներ են առաջ գալու աշխարհի տարբեր ծայրերում եւ ամենից առաջ անշուշտ Ռուսաստանում: Այդ պատճառով էլ Պուտինը սպառնում է ճանաչել Աբխազիան եւ Հարավային Օսիան ի հակադրումն Կոսովոյի անկախության Արեւմուտքի ճանաչման:

Թարգմ. Հ. Ծ.

Դարձյալ Բալկաններում

Բելգրադում հրկիզվել է ամերիկյան դեսպանատունը

Իսկ նախագահ Տադիչը մնում է Եվրոպամեջ

Աշխարհի լրատվամիջոցները լայնորեն լուսաբանում են Բելգրադում բողոքի բազմաձայն ցույցերի ժամանակ ամերիկյան դեսպանատան հրկիզման փաստը: Հինգշաբթի օրը հարյուր հազարավոր սերբեր հուժկու հանրահավաքներով ու ցույցերով դատապարտեցին Կոսովոյի անկախացումը ճանաչած եվրոպական պետություններին եւ ԱՄՆ-ին: Նույն ուշքաթաք գիշերը միջադեպեր տեղի ունեցան մեկ տասնյակ դիվանագիտական ներկայացուցչությունների, մասնավորապես Խորվաթիայի, Թուրքիայի, Գերմանիայի, Բելգիայի դեսպանատների մոտ: Ցուցարարներից ոմանք ներխուժեցին ԱՄՆ-ի դեսպանատուն (որտեղ այդ պահին մարդ չկար) եւ հրկիզեցին այն:

Այդ դեպքերից հետո առաջ Սերբիայի վարչապետ Վոյսլավ Կոշտունիցան հանրահավաքում ելույթ ունենալով խոստացել էր, որ «Սերբիայում որեւէ մեկը երբեւիցե իրավունք չի ունենա ճանաչելու Կոսովոյի անկախությունը»:

Մինչդեռ նախագահ Բորիս Տադիչը, չնայած ԵՄ մի շարք երկրների դիմելը, չնայած ԵՄ մի շարք երկրների կողմից Կոսովոյի անկախության հաճանաչմանը, Բուխարեստից հաճանաչմանը, Բուխարեստից հաճանաչմանը, Բուխարեստից

Մշակույթ

Տարկովսկու օրագրերի ռուսերեն առաջին հրատարակությունը

Ռուսերենով առաջին անգամ հրատարակվել են մեծ կինոբեմադրիչ Անդրեյ Տարկովսկու օրագրերը: Մոսկվայում ներկայացվել է «Մարտիրոլոգ» վերնագրված գիրքը, որը, բեմադրիչի որդու խոսքերով, «պատասխան կտա բազմաթիվ հարցերի»:

Տարկովսկու մասին պատմող շատ գրքեր են լույս տեսել, բայց նրա օրագրերը գրեթե անծանոթ են հանրությանը: Ինտերֆաքս գործակալությունը նշում է, որ տվյալ գիրքը ռուսերենով նրա օրագրերի առավել լիակատար հրատարակությունն է: Ի դեպ, ափսորի 9 լեզուներով օրագրերն արդեն հրատարակված են, մինչդեռ Ռուսաստանում 20 տարի շարունակ հրատարակությունը չէր հաջողվում: Այդ մասին իր ելույթում ասաց ՌԴ «Տարկովսկու օրագրերը լույս են տեսել նրան իրտրնկալած երկրներում: Դրանք առաջին անգամ ամբողջությամբ լույս են տեսնում ռուսերենով: Սա եւս մեկ բանալի է հեղինակի ստեղծագործությունների ընթերցման համար, հեղինակ, որը 20-րդ դարում ամենանշանավորներից մեկն է», ավելացրել է դեսպանը:



Գրքի նախաբանը գրել է Տարկովսկու որդին: Այնտեղ նշվում է, որ «Մարտիրոլոգը» ռուսաց լեզվով մեծ բեմադրիչի գրական ժառանգության հրատարակումների շարքում առաջինն է եւ ընդգրկում է 1970-ին Տարկովսկու սկսած օրագրերի ամբողջական տեքստերը: Դրանք, ինչպես նաեւ գծանկարները եւ լուսանկարները վերարտադրվում են Ֆլորենցիայի արխիվի փաստաթղթերի հիման վրա: Այնտեղ գտնում է Իտալիայում Անդրեյ Տարկովսկու միջազգային ինստիտուտը, որտեղ հավաքված են բեմադրիչի մոսկովյան, հոմեական, լոնդոնյան եւ փարիզյան բոլոր անձնական նյութերը:

«Դարս իր օրագրերը անվանել էր «Մարտիրոլոգ», այսինքն՝ տառապանքների ցանկ: Նա հաճախ կրկնում էր. «Մենք ստեղծված չենք երջանկության համար: Կան դրանից ավելի կարեւոր բաներ», նշում է Տարկովսկու որդին:

Ռուսերեն առաջիկա հրատարակություններում կիրառվակվեն Տարկովսկու «Դրոշմված ժամանակ» գիրքը, նրա սցենարները, մտահոգումները, ափսեանմային օրագրերը, նամակագրությունը եւ արխիվի մյուս փաստաթղթերը:

Անդրեյ Տարկովսկին սովորել է Կինոյի համամիութենական ոլորտային ինստիտուտում՝ Միխայիլ Ռոմի արվեստանոցում եւ արդեն 1962-ին նկարահանել է «Իվանի մանկությունը» ֆիլմը, որն անմիջապես համբավի արժանացրեց երիտասարդ բեմադրիչին: Նրա մտերիմ ընկերներից է եղել հայ նշանավոր կինոբեմադրիչ Սերգեյ Փարաջանովը: 1966-ին Տարկովսկին նկարահանել է «Սոլոմոնի ընտանիքը» նշանավոր ֆիլմը, որը կինովարձույթում հայտնի դարձավ «Անդրեյ Ռուբլյով» անունով եւ ընդգրկվեց կինոյի պատմության 100 լավագույն ֆիլմերի շարքում: Դրան հաջորդեցին հայտնի ֆանտաստ գրողների գրքերի հիման վրա Տարկովսկու նկարահանած «Սոլյարիս» եւ «Ստալկեր» ֆիլմերը: Դրանց նկարահանումների առանցքում նա ստեղծեց «Հայելի» ինքնակենսագրական ժապավենը:

Տարկովսկու քաղաքական ափսոսանքներից են «Լենկոմ» թատրոնում բեմադրված «Համլետը» եւ Լոնդոնում բեմադրված «Բորիս Գոդունովը»: 1982-ին բեմադրիչը մեկնեց Իտալիա, որտեղ նկարահանեց «Կարոտախտ» ֆիլմը: Վերջին՝ «Զոհաբերություն» ֆիլմը նա ստեղծեց Շվեդիայում: Տարկովսկին մահացավ Փարիզում 1986-ին:

Պ. Ք.

Նկարիչներին բնորդելը վտանգավոր է

Հավեստի պատմության գիտակներին շատ դեպքեր են հայտնի, երբ բնորդը նկարչի հետ աշխատանքն ավարտելուց հետո ընկել է ծայրահեղ հոգեկան վիճակների մեջ, ֆիզիկական կամ հոգեկան խեղումներ ստացել: Շատերն են հիշում Վերածնունդի դարաշրջանի մեծերից մեկի՝ Սանդրո Բոտիչելլիի հետ կապված իրադարձությունները: Նրա ստեղծած «Գարուն», «Երեսակներ երկնքից», «Վեներայի ծնունդը» նկարների բնորդները մահացել են խիստ կասկածելի հանգամանքներում:

Բայց առավել վտանգավոր եղել է ռուս հանճարեղ նկարիչ Իլյա Ռեպինը: Նա ընդհանրապես մեծ դժվարությունների էր հանդիպում բնորդներ գտնելիս: Սկզբնական շրջանում հրաժարվողները չէին կարողանում բացատրել, թե ինչու չեն սիրում բնորդել Ռեպինին: Բայց հետո այս վախը փաստագրվեց:

Վոլգայի ափին նա մի հանի բուրլակների (նավաքարշ բանվորների) գտավ, որոնց խնդրեց բնորդել իր «Բուրլակները Վոլգայի վրա» նկարի համար: Ուրվանկարներն անելուց հետո, երբ Ռեպինն արդեն սկսել էր աշխատել ներկերով, իրար հետեւից խորհրդավոր ձեւով մահացան բոլոր բնորդները: Ոչ ոք կենդանի չմնաց: Նույն կերպ եղավ նաեւ «Իվան Գրոզնին եւ նրա որդի Իվանը» նկարի բնորդների հետ: Նկարիչ

Սյասյեդովը, որը Իվան Գրոզնու բնորդն էր եղել, նկարն ավարտելուց հետո, մոլուցքի պահին իր մնացել սպաներ իր մանկահասակ որդուն: Իսկ գրող Գարշինը, որը բնորդել էր արքայազն Իվանին, խելքը թռցրեց եւ ինքնասպան եղավ՝ իրեն ցած նետելով բարձր աստիճանավանդակից:

Ավելի ծանր ողբերգություններ պատեցին նրանց, որոնց դիմանկարներն էր ստեղծել Ռեպինը: Մուսորգսկի, Պիսեմսկի, Պիրոգով, իտալացի մեծ դերասան Մեսի որ Արժանտո... Սա մարդկանց այն ոչ լրիվ ցուցակն է, ովքեր բնորդել են Ռեպինին, սակայն մահացել խորհրդավոր հանգամանքներում: Դեպքերի այս շարանից սարսափած, նկարների մեծ հավաքածու ունեցող եւ Տրետյակովյան քանգարանի տեր Պավել Տրետյակովը վախենում էր առաջարկել Ռեպինին՝ Տյուլեւի դիմանկարն անելու: Սակայն վերջին պահին չդիմեցավ գայթակղությանը եւ դիմեց Ռեպինին: Եվ ինչ եք կարծում... Այո, հազիվ էր Ռեպինն իր ձեռքը վերցրել Վրձինը, երբ Տյուլեւը հիվանդացավ եւ շատ արագ մահացավ:

Այդ ժամանակ նրան խնդրեցին ստեղծել մեծ բռնակալ Ստալինի դիմանկարը, հույս ունենալով, որ այս անգամ էլ Ռեպինի խորհրդավոր ազդեցությունը բռնակալի վախճանը կարագացնի: Սակայն պատվերը տվեցին ոչ թե մայրաքաղաքի մասնավորականները, այլ Սարատովի Դուման: Եվ, ինչպես՝ ամեն անգամ... Նկարն ավարտելուց հետո, Ստալինը ուղեւորվեց Կիեւ, ուր եւ նրան գնդակահարեցին: Զգուշացել նկարիչներին բնորդելուց:

ՍԵՐԳԵՅ ՏԱՍԻՆՅԱՆ

«Դարը՝ մեր մեջ, մենք՝ դարի»

«Դարը՝ մեր մեջ, մենք՝ դարի» գիրքը հրապարակախոսությունների ժողովածու է չորս հատորով: Գրքում ամփոփված են լրագրող Հասմիկ Գուլակյանի ծանոթում հրապարակած նյութերը, հրապարակախոսությունները ու հարցազրույցները, որոնք հեռարձակվել են Հանրային ռադիոյով եւ «Վեմ» ռադիոկայանով:

Գրքում հեղինակն անդրադառնում է բազմաբնույթ հարցերի, առաջ քաշում խնդիրներ եւ մասնագետ զրուցակիցների օգնությամբ փնտրում լուծման տարբեր ուղիներ, ճանապարհներ:

«Բարեկամության» նոր ձեւ» հրապարակախոսության մեջ հեղինակն անդրադառնում է հայ-վրացական հարաբերություններին, որոնք ավանդաբար բարեկամական են բնութագրել: Հայրենադարձներ շարունակ Թբիլիսին եղել է հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային կենտրոններից մեկը, «իսկ մինչեւ սոցիալիստական հեղափոխությունը, տենչել ու բարգավաճել է հայազգի հաղթաղղուխների ջանքերով»:

Սակայն պարզվում է, որ անցնող հարյուրամյակում վրացական իշխանությունների վերաբերմունքը հայկական եկեղեցիների նկատմամբ բարեկամական անվանել չի կարելի: Հեղինակն անդրադառնում է 2000-ին Թբիլիսիում հայկական մշակութային կոթողների ու եկեղեցիների նոպատակադրված վերացմանը, վերափոխմանը: Խնդրի շուրջ հեղինակը զրուցում է ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանի հետ: Զրուցակիցը տարեթվերով ու նորովի փաստերով ներկայացնում է Թբիլիսիի իրադարձությունները ու հանգում եզրակացության, թե «բարեկամությունը լինում է երկուստեղ, արժանապատվորեն: Բարեկամություն չի լինում մեկի գերեզմանը քանդելու կամ նրա մշակույթը յուրացնելու գնով: Բարեկամները պետք է միմյանց հարգեն: Անհանդուրժելի է հանուն քաղաքական «ջերմ» գործարքների սեփական մշակույթի զոհաբերությունը»:

Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված հոդվածաշարում ուշադրություն է «Թուրք սեղեղելուդ համար չեմ ամչնար, Աստված» հրապարակախոսությունը (հեղինակն օգտագործել է սփյուռքահայ նշանավոր գործիչ, գրող-հրապարակախոս Արամ Հայկազի խոսքերը), որ նվիրված էր Հրանտ Դինքի հիշատակին:

Հեղինակը գայլոտք եւ ցավ է արտահայտում մարդասպանության համար, որ «ինչ-որ լամունի ձեռքի գործը չէ, այլ վաղուց ծրագրված հայենի գործողության շարունակություն»: Հրանտ Դինքի ողբերգական վախճանի մասին հեղինակը զրուցում է պատժական գիտություններ թեկնածու Գեւորգ Յազըճյանի հետ:

«Հրանտ Դինքի սպանությունը սարսափելի ահազանգ է թուրքերի բարի դրացիական մարդացման նկատմամբ պատուսնոներ սնուցողներին: Մենք չենք կարող այս հարցում շռայլ լինել, որովհետեւ հայրենիքի այս վերջին կտորը կորցնելուց հետո վերականգնելու ոչ մի հույս այլեւս չի մնա»:

«Գրքի հանդեպ մեր պատասխանատվությունը եւ մեր ուժն է, եւ մեր թուլությունը» հոդվածը նվիրված է հայոց գրքի ստեղծման 1600-ամյակին, հեղինակը բարձրացնում է արդի խնդիրներ, պատմական անցյալի հետազոտությունից ներկայացնում Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի դերը: Վերջնամասում մտահոգությամբ է խոսում ՀՀ-ում գիտության մասին, որ հայտնվել է շատ ծանր վիճակում եւ միջազգային ասպարեզ դուրս գալու խնդիր ունի: «Պատասխանենք մեր բնաբխարհը մեզնից» հրապարակախոսությունում Հ. Գուլակյանը գրում է բնապահպանական խնդիրների, Սեւանա լճի կորուստների եւ բուսական ափարտի իրավական պատասխանության մասին:

«Մեր բնաբխարհը, իրոք, մենք պետք է պահպանենք: Պահպանենք այսքան, վաղը կարող է ուշ լինել: Դա յուրաքանչյուրիս պարտքն է, իհարկե, լցված օրենքով: Հոգ տանելով բնության մասին՝ մենք հոգում ենք մեր մասին, մեր ապագայի մասին»:

ՀՈՒՇԱՐՁ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեր Արեղյանն Էջմիածնում

«Պոեզիայով ներթաթավուն լուսային անցումներ, խիստ նրբորեն կառուցված լեռնային բնանկարներ, սանց հնարանքության գաղտնիքը պետք է որոնել Աբեղյանի բնատուր տաղանդի մեջ: Հայաստանն ու Աբեղյանն անհակելի են: Նրանց անկարելի է զատել եւ ներկայացնել առանց մեկը մյուսի»: Մեր Աբեղյանի կտավները դիտելուց հետո այսպիսի ոգեկում է արել ֆրանսահայ նշանավոր նկարիչ Գառզուն:

Հայաստանի ժողովրդական նկարիչ Մեր Աբեղյանի համար վրձինն ու գույները երջանատող աշխարհ, մարդն եւ բնությունը գեղարվեստորեն պատկերելու միջոց է եղել: Կանխից սացած յուրահանչյուր տպավորություն իր հանահունչ արտահայտությունն է գտել կտավներում: Աբեղյանի բնանկարներում գերիշխում են լեռները: Ի տարբերություն վառ ու բազմահնգ նայուտնորների, դրանք գունատ են ու պարզ իրենց գունային ներդաշնակությամբ: Նկարչի բնապատկերները, կարծես, խոսում են բնության վեհության, նրա անսահման բազմազանության եւ իմաստության մասին: Իմաստուն ու խորհրդավոր է բնությունն Աբեղյանի կտավներում:

«Բարձր, կարույտ երկնքի, անդրադարձող ձորեր, լեռներ, հովիտներ, անկրկնելի գեղեցիկ ու իմաստուն բնություն, այսպիսին է իմ Հայաստանը: Նա լեգենդար է ու հեռավոր: Ասել, որ սիրում եմ Հայաստանը՝ նշանակում է շատ քիչ բան ասել», մի առիթով նշել է Մեր Աբեղյանը: Աբեղյանի կանանց դիմանկարները հնարավոր բնույթ ունեն: Լավագույններից մեկը, թերեւ, «Լուսիկ Աբեղյանի դիմանկարն» է (1974), որին հատուկ է մեղմ նազանիությունը եւ կանացիությունը, երազկոտ բախտի հմայքը:

Մ. Աբեղյանը բազմիցս նշել է, թե երջանկություն է լինել Սարյանի ժամանակակիցը: Վարդեսի նման նա էլ երազում էր դառնալ սեփական թանգարանի բացման ականատեսը: 1990-ի հունիսի 6-ին ծննդավայրում՝ Էջմիածնում, բացվում է նկարչի թանգարանը: Այս տարիներին թանգարանը դարձել է հարյուր ամենակարեւոր մշակութային օջախներից մեկը: Էջմիածնում մշակութային կյանքն աշխուժացնելու համար թանգարանի տնօրենությունը հաճախակի նկարչական ցուցադրություններ է կազմակերպում: 2007-ին թանգարանում տեղի է ունեցել յոթ ցուցահանդես, որոնցից հատկապես հետաքրքրական էր ֆրանսահայ նկարիչներին նվիրված միջոցառումը, սիրտուհայ նկարիչներ Մ. Մորյանի եւ Գ. Պարսամյանի անհատական ցուցահանդեսները (որոնց «Ազգն» անդրադարձել է):

2009-ին կլրանա նկարչի 100-ամյա հոբելյանը: Այդ առթիվ տնօրենությունը հանդիսավոր գրքույկ է ուղարկել, որտեղ մինչ հոբելյանական միջոցառումը վերանորոգեն թանգարանի տեսքն ու հրատարակեն նկարչի աշխատանքների կատալոգը: Իսկ թանգարանը խնդիրներ շատ ունի: Տնօրենության գերխնդիրը ջեռուցման հասանելիքի բացակայությունն է: Տանկիրյան կա նաեւ թանգարանին կից ցուցասրահ կառուցել՝ գրաֆիկական միջոցառումներ եւ ցուցադրություններ կազմակերպելու համար:

<< <

Դավիթ Քալաշյանն ու Վարդան Խոջայանը երկրորդ մրցանակակիրներ

Մոսկվայում ընթացող շախմատի «Աերոֆլոտ» փառատոնում առաջինն իրենց մրցվեցան ավարտեցին «B» եւ «C» խմբերում հանդես եկող շախմատիստները: Ավարտական տուրից առաջ հայ մի քանի շախմատիստներ հավակնում էին գլխավոր մրցանակին: Հաղթանակին առավել մոտ էր «B» մրցաշարում հանդես եկող Դավիթ Քալաշյանը, որը 6,5 միավորով երեք շախմատիստների հետ գլխավորում էր աղյուսակը: 9-րդ տուրում չորս առաջատարների միջեւ երկու մրցախաղերն էլ ավարտվեցին ոչ-ոքի: Քալաշյանը սեւերով հաշտություն կնքեց Վիկտոր Կոտրեյչիկի հետ, իսկ չին շախմատիստներ Լի Վանգն ու Ցեն Վանգը միավորը բաժանեցին միմյանց միջեւ: Արդյունքում նշված չորս շախմատիստները վաստակեցին 7-ական միավոր: Նրանց միացան եւս երեքը, որոնց թվում էր նաեւ 3ուրի Համբարձումյանը: Վերջինս հաղթեց Իգոր Բոգայովին: Գլխավոր մրցանակը՝ 5000 դոլարը բաժին հասավ բելառուս գրոսմայստեր Վիկտոր Կոտրեյչիկին, որը մրցակիցներին գերազանցեց լրացուցիչ ցուցանիշերով: Դավիթ Քալաշյանը զբաղեցրեց 2-րդ տեղն ու ստացավ 3000 դոլար: 3ուրի Համբարձումյանը 6-րդն էր: Նա որպես դրամական ստացավ 700 դոլար: Այս խմբում հանդես եկող մեր մյուս շախմատիստները հետեւյալ ցուցանիշները ցույց տվեցին. 24. Հովիկ Հայրապետյան՝ 5,5 միավոր, 32. Դմիտրի Հարությունյան՝ 5,5, 40. Վարդան Մելիքյան՝ 5, 48. Վահե Բաղդասարյան՝ 5, 59. Դավիթ Գետոգյան՝ 4,5, 89. Աղասի Ինանց՝ 4, 92. Տիգրան Գասպարյան՝ 4, 96. Վարդան Գրիգորյան՝ 4:

Ցավոք, «C» խմբում հանդես եկող մեր շախմատիստներին էլ չհաջողվեց տիրել գլխավոր մրցանակին: Այստեղ վերջին տուրից առաջ 7 միավորով առաջատարը ռուսաստանցի Անդրեյ Աբրամովն էր, որը մրցում էր իրենից կես միավորով հետ մնացող Արթուր Ղառագյոզյանի հետ: Այդ պարտիայի ելքն էլ վճռորոշ եղավ: Սպիտակներով հաղթանակ տանելով, Աբրամովը վաստակեց 8 միավոր ու դարձավ մրցաշարի հաղթող՝ արժանանալով 3000 դոլարի: 7,5 միավորով 2-րդ տեղը գրավեց Վարդան Խոջայանը՝ ստանալով 2000 դոլար: Նա ավարտական տուրում պարտության մատնեց Խաչատուր Մեսրոպյանին: Խոջայանն արդեն երկրորդ մրցաշարն է, որ Մոսկվայում հաջող է հանդես գալիս: Վերջերս նա հաղթող էր ճանաչվել Մոսկվայի բաց առաջնությունում: 7 միավորով 4-րդ տեղը գրավեց Տիգրան Սիմոնյանը, որը հաղթեց Ռահիմ Պասիեւին: Նա ստացավ 1000 դոլար: 6,5-ական միավորով համապատասխանաբար՝ 6-րդ, 9-րդ եւ 10-րդ տեղերը զբաղեցրած խաչատուր Մեսրոպյանը, Արթուր Ղառագյոզյանը եւ Անդրեյ Մինասյանը 600-ական դոլար պարգեւավճարի արժանացան: 5,5-ական միավորով Սարգիս Սարգսյանը 31-րդն էր, Արմեն Անտիկյանը՝ 33-րդը: Նրանք ստացան 200-ական դոլար:

Ուժեղագույնների մրցաշարում հայ շախմատիստներից միայն Տիգրան Քոթանջյանն ու Հրանտ Մելիքյանը իրենց օգտին հաղթական միավորներ գրանցեցին Արթուր 3ուստրովի եւ Ֆաբիանո 3առուանայի հետ պարտիաներում: Ասրյան-Ամոնատով, Մինասյան-Հակոբյան, Անդրեասյան-Նայդիչ, Փաշիկյան-Պավլովիչ պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Ավարտական տուրից առաջ լավագույն արդյունքն ունի Ասրյանը (5 միավոր), որը սեւերով մրցելու է Բորկի Պրեդոնիչի հետ: 4,5-ական միավոր ունեն Հակոբյանը, Քոթանջյանը եւ Մինասյանը: Մելիքյանի հաշվին գրանցված է 3,5 միավոր, Փաշիկյանն ու Անդրեասյանը վաստակել են 3-ական միավոր: Այստեղ 6,5 միավորով միանձնյա առաջատարը 3ան Նեպոմնյաչին է: 6-ական միավորով նրան հետաքրքրում են Ալեխանդր Մորիլովն ու Ալեխեյ Դրեեւը:

A2 մրցաշարում մեր երեք շախմատիստներից առավել հաջող է խաղում Դավիթ Պետրոսյանը, որը հաղթելով Անդրեյ Խառլովին, վաստակել է 5 միավոր: 6,5 միավորով առաջատարը Մարաս Ասկարովն է:

Գերմանական եւ անգլիական ակումբների հաջող մրցելույթները

Հայտնի դարձան ՈւԵՖԱ-ի գավաթի խաղարկության 1/8 եզրափակիչի մասնակիցները: Ռուսաստանը ներկայացնող երկու թիմերից պայքարը կշարունակի միայն երկրի չեմպիոն «Զենիթը»: Առաջին խաղում ՈԴ չեմպիոնը սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթել էր «Վիլյարեալին»: Պատասխան խաղում արդեն 30-րդ րոպեին Պավել Պոգրեբնյակը բացեց հաշիվը՝ ծանր կացության մեջ դնելով դաշտի տերերին, որոնց հաջող փոխ մտնելու համար անհրաժեշտ էր արդեն 3 գոլ խփել: Դժվարին խնդիրը իսպանացիները չկարողացան կատարել: Ճիշտ է, նրանք ի վերջո հաղթեցին 2-1 հաշվով՝ հաղթական գնդակը խփելով վերջին րոպեին (Թոմասոն):

1/8 եզրափակիչում «Զենիթի» մրցակիցը կլինի «Մարսելը», որը պայքարից դուրս մղեց Մոսկվայի «Սպարտակին»: «Մարսելը» դեռեւս առաջին խաղից հետո էր ուշադիր համար լուրջ հայտ ներկայացրել, երբ սեփական հարկի տակ հաղթել էր 3-0 հաշվով: Ճիշտ է, Մոսկվայում «Սպարտակը» փորձեց ռեւանշի հասնել, բայց միայն 2 անգամ գրավեց մրցակցի դարպասը (2-0): Այնի ընկան Պավլենկոն ու Պավլյուչենկոն: Վերջինս, պատահական մրցումներում հոբելյանական՝ 100-րդ գոլը խփեց:

1/8 եզրափակիչում առավել մեծ ներկայացուցչություն ունի Գերմանիան, որի չորս թիմերը հաջողությամբ հաղթահարեցին հերթական փուլի արգելքը: «Բայերը» սեփական հարկի տակ 5-1 հաշվով ջախջախեց «Գալաթասարային»: Նոսկոմիսի հաշվով «Բավարիան» պարտության մատնեց «Աբերդինին»: «Վերդերը» հյուրընկալվելիս էլ հաղթեց «Բրագային» (1-0), որին առաջին խաղում պարտության էր մատնել 3-0 հաշվով: «Համբուրգը» «Ցյուրիխի» հետ սեփական հարկի տակ կայացած խաղում թեեւ ոչ-ոքի խաղաց (0-0), սակայն առաջին խաղում հաղթել էր 3-1 հաշվով: Միայն «Նյուրնբերգին» չհաջողվեց 1/8 եզրափակիչ մտնել: «Բենֆիկայի» հետ խաղում գերմանացիները բավարարվեցին ոչ-ոքի (2-2) արդյունքով: Իսկ թիմերի առաջին խաղում հաղթել էր «Բենֆիկան» (1-0):

Հաջող հանդես եկան նաեւ անգլիական թիմերը, որոնցից երեքն էլ կշարունակեն պայքարը: «Բոլտոնը» ու «Տոտենհեմն» ուղեգիր նվաճեցին ի հաշիվ առաջին խաղերում մրցակիցների նկատմամբ տոնած հաղթանակների: Պատասխան խաղերում «Բոլտոնը» ոչ-ոքի (0-0) խաղաց «Սլեթիկոյի» հետ, «Տոտենհեմը»՝ «Սլավիայի» (1-1): Իսկ ահա «Էվերտոնը» երկրորդ խաղում էլ հաղթեց նորվեգական «Բրանին» (6-1):

Մյուս հանդիպումների արդյունքներն են. «Բազել»-«Սպորտինգ»՝ 0-3, «Բորդո»-«Անդերլեխտ»՝ 1-1, «Խետաֆե»-«ՍԵԿ»՝ 3-0, «Պանաթինայիկոս»-«Գլազգո Ռեյնջերս»՝ 1-1, «Հելսինգբորգ»-«Էնդհովեն»՝ 1-2, «Ֆիորենտինա»-«Ռուսենբորգ»՝ 2-1:

1/8 եզրափակիչում կմրցեն հետեւյալ զույգերը.

«Մարսել»-«Զենիթ»
«Անդերլեխտ»-«Բավարիա»
«Գլազգո Ռեյնջերս»-«Վերդեր»
«Բոլտոն»-«Սպորտինգ»
«Բայեր»-«Համբուրգ»
«Խետաֆե»-«Բենֆիկա»
«Ֆիորենտինա»-«Էվերտոն»
«Տոտենհեմ»-«Էնդհովեն»

Պատանեկան օլիմպիադան կանցկացվի Սինգապուրում

Համաշխարհային սպորտի պատմության մեջ պատանեկան առաջին օլիմպիական խաղերը կկայանան 2010-ին Սինգապուրում: Այսպիսին են Լոզանում ՄՕԿ-ի անդամների միջեւ անցկացված հարցման արդյունքները, որ հրապարակել է այդ կազմակերպության նախագահ Ժակ Ռոգեն:

Սկզբում օլիմպիադան իրենց մոտ անցկացնելու հայտ էին ներկայացրել ինը քաղաքներ՝ Մոսկվան, Աբեմը, Սինգապուրը, Թուրինը, Բանգկոկը, Դերբեցենը, Գվատեմալա Սիթին, Կուալա Լումպուրը եւ Պոզնանը: Հեռագրում Սիթին, Կուալա Լումպուրը եւ Պոզնանը: Հեռագրում ՄՕԿ-ն այդ ցանկից ընտրեց հինգին, որից էլ հունվարի 21-ին կայացած քվեարկությամբ մնացին երկուսը՝ Մոսկվան ու Սինգապուրը:

Պարգեւավճարներ մրցանակակիրներին

Պեկինի օլիմպիադայում չեմպիոնի տիտղոսին արժանացած բելառուսցի յուրահանչյուր մարզիկ պետությանց կողմից կստանա 110 հազար դոլարով: Այդ գումարից 100 հազարը կտրվի պետբյուջեից, իսկ 10 հազարը՝ չինական Xtep ֆիրմայից, որը հովանավորյալը կլինի Բելառուսի ՄՕԿ-ի հետ: Ֆիրման կստորագրի նաեւ բելառուսցի օլիմպիականների հանդերձանքը: Արծաթե մեդալակիրներին ֆիրման կստանան 5 հազար դոլարով, իսկ բրոնզե մրցանակակիրները կստանան 3 հազար դոլար: Պետբյուջեից էլ 2-րդ եւ 3-րդ մրցանակակիրներին կտրվի համապատասխանաբար 50 եւ 30 հազար դոլար պարգեւավճար:

ՖՈՒՏԲՈԼ

«Միկան» մեկնարկեց ոչ-ոքի արդյունքով

Ասեարակի «Միկայի» ֆուտբոլիստները ոչ-ոքի (0-0) արդյունքով մեկնարկեցին Ազգաբադում ֆուտբոլի Թուրքմենստանի «Նախագահի գավաթի» 14-րդ միջազգային մրցաշարում: Մեր թիմի մրցակիցը Թուրքիայի ակումբային հավաքականն էր:

Արդեն երկրորդ տարին պատվավոր մրցանակի համար պայքարի ելորեն են նետերգրավվում 10 թիմեր, որոնք նախնական փուլում բաժանվել են երեք խմբի: «Միկան» ընդգրկված է «A» խմբում, որտեղ բացի թուրքական թիմից, հանդես է գալիս նաեւ Թուրքմենստանի գավաթակիր «Շաքադամը»: «B» խմբում հանդես կգան Դրդրզգսանի խառակի չեմպիոն «Դորդոյ-Դինամոն», Կազանի «Ռուբին-2-ը» եւ Թուրքմենստանի փոխչեմպիոն Ազգաբադի ՍՏՍՌ-ն: «C» խմբում գլխավոր մրցանակի համար կպայքարեն Իրանի երիտասարդական հավաքականը, Տաջիկստանի բրոնզե մեդալակիր «Վախշը», Թուրքմենստանի չեմպիոն «Ազգաբադը» եւ երկրի բրոնզե մեդալակիր «Նեբիտչին»:

Մրցակարգի համաձայն, «C» խմբի հաղթողը կմտնի եզրափակիչ, իսկ 2-րդ տեղը զբաղեցրած թիմը կվիճարկի բրոնզե մեդալները: Եզրափակիչի 2-րդ մասնակիցը կորոշվի «A» եւ «B» խմբերում առաջին տեղը զբաղեցրած թիմերի մրցաշարում: Հաղթողը կմտնի եզրափակիչ, պարտվողն իրավունք կստանա վիճարկելու բրոնզե մեդալները: 6-րդ տարին անընդմեջ մրցաշարի ընդհանուր մրցանակային հիմնադրամը 35 հազար դոլար է: Մրցաշարի հաղթողը «Նախագահի գավաթի» հետ կստանա նաեւ 20 հազար դոլար պարգեւավճար: 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրած թիմերը կպարգեւատրվեն 10 եւ 5 հազար դոլարով: Նշենք, որ անցած 13 խաղարկություններում միայն երեք անգամ են գլխավոր մրցանակը ստանալ այլ երկրների թիմերը: 1998-ին հաղթող է ճանաչվել Թեհրանի «Էսթեղլալը», 2002-ին մրցանակը ստանալ է Քութահիի «Տորպեդոն», 2006-ին՝ Մոլդովայի «Դայիան»: Առավել հաճախ՝ 4 անգամ հաջողությունն ուղեկցել է Ազգաբադի «Նիսային» (1999, 2003-2005): Երկու անգամ հաղթող են ճանաչվել մայրաքաղաքի «Կոպետդաղը» (1995, 2001) եւ Թուրքմենստանի ակումբների հավաքականը (1996-1997): Մեկական անգամ գավաթակիր են դարձել Ազգաբադի հավաքականը (2000) եւ ՍՏՍՌ-ն (2007):

Մելքոնյանն աչքի ընկավ «Մեսալուրգում»

«Բանանցի» ֆուտբոլիստներ Սամվել Մելքոնյանն ու Արարատ Առաքելյանը շարունակում են փորձաշրջանը Դոնեցկի «Մեսալուրգում», որն այս օրերին ուսումնամարզական հավաք է անցկացնում Թուրքիայում: Կասնոդարի «Կուբանի» հետ խաղում, որում «Մեսալուրգը» հաղթել է 3-1 հաշվով, Սամվել Մելքոնյանը դարձել է գոլի հեղինակ: Նա մոտ 22 մետրից շեշտակի հարվածով գրավել է մրցակցի դարպասը՝ կրկնապատկելով հաշիվը:

Թիմի գլխավոր մարզիչ Սերգեյ Յաչչենկոն գոհ է հայ ֆուտբոլիստներից: Սպասվում է, որ մոտ օրերս «Բանանցի» ֆուտբոլիստները պայմանագիր կկնքեն ակումբի հետ:

Քարամյանները զբաղվում են նաեւ բարեգործությամբ

Ռուսական «Պոլիտեխնիկա» ակումբում հանդես եկող Քարամյան եղբայրները 8 հազար դոլար են փոխանցել Տիմոշուայում կառուցվող հաշմանդամ երեխաների մարզական կենտրոնի շինարարության հիմնադրամին: «Ուրախ եմ, որ լավ գործի եմ մասնակցել, հատկապես հաշմանդամ երեխաներին օգնելու համար: Երբ հարցը վերաբերում է երեխաներին, անպայման պետք է օգնել», նշել է Արտավազդ Քարամյանը:

Զուեւան Եվրոպայի ռեկորդ սահմանեց

Սանկտ Պետերբուրգում անցկացված լողի Ռուսաստանի առաջնությունում 18-ամյա Անաստասիա Զուեւան Եվրոպայի նոր ռեկորդ սահմանեց: 100 մ թիկնալողում նա ցույց տվեց 59,61 վրկ արդյունք: Եվրոպայի նախկին ռեկորդը պատկանում էր ֆրանսիացի հանրահայտ մարզուհի Լորա Մանոդուին (59,87 վրկ): Նշենք, որ մինչ Եվրոպայի ռեկորդը բարելավելը Զուեւան նախնական լողահերթում գերազանցել էր Ռուսաստանի 14-ամյա վաղեւության ռեկորդը՝ մրցաշարանությունը հաղթահարելով 1.00,09 րոպեում:

«Ես ընդհանրապես չէի մտածում, որ Եվրոպայի ռեկորդ կսահմանեմ: Մարզիս հետ ծրագրել էինք գերազանցել Ռուսաստանի ռեկորդը (1.00,83) եւ փորձել մրցաշարանությունն անցնել 1 րոպեից ավելի արագ: 3ուրահանչյուր լողորդի համար էլ դա կարեւոր հոգեբանական սահմանագիծ է: Անչափ ուրախ եմ, որ հաջողվեց դա հաղթահարել: Եվ դա այն դեպքում, որ մեկնարկից առաջ, երբ հագնվում էի, հանկարծակի պատռեցի լողազգեստս», նշել է 18-ամյա մարզուհին:

Մրցանակը մնաց չխաղարկված

Օրերս մարզասրահների ափսարհի նոր ռեկորդ սահմանած ռուսաստանցի ձողացատկորդուհի Ելենա Իսինբաեւային չհաջողվեց հաղթող ճանաչվել Լեհաստանի Բիդգոշչ քաղաքում անցկացված «Պերոյի գավաթի» խաղարկությունում: Այստեղ նա գլխավոր հակառակորդն իր հայրենակից, ափսարհի նախկին ռեկորդակրուհի Սվետլանա Ֆեոֆանովան էր, որը հաղթեց 4,71 մ արդյունքով: Իսկ Իսինբաեւան սխրված էր բավարարվել 4,61 մ արդյունքով: Երկու մարզուհիներն էլ անհաջող փորձեր կատարեցին հաղթահարելու 4,81 մ բարձրությունը:

Մրցումների կազմակերպիչները հույս ունեին, որ Իսինբաեւան կփորձի բարելավել ափսարհի իր ռեկորդը՝ սահմանելով 30 հազար եվրո պարգեւավճար: Սակայն մրցանակը մնաց չխաղարկված: Նշենք, որ 2004-ի փետրվարից Իսինբաեւան մարզասրահներում անցկացված մրցումներում դեռեւս ոչ մեկին չէր զիջել առաջին մրցանակը:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Տեր-Պետրոսյանի գլխավորած շարժումն, ըստ «Միլիեթի», շուտով կմարի

«Եթե չլինեն ցուցարարների հետ ոստիկանության բախումներ»

Նախորդ համարում «Ազգը», անդրադառնալով ՀՀ նախագահական ընտրությունների թուրքական արձագանքներին, կարծիք էր հայտնել, որ հակառակ Լեւոն Տեր-Պետրոսյանի առարկումներին, Թուրքիան ճանաչում է դրանց արդյունքները: Կարծիքի համար հիմք էին ծառայել թուրքական մամուլի հրապարակումները: Ճանաչման պարագայում հարցն, ինչ խոսք, հրապարակումները չեն, այլ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի օմոնիավորական ուղերձը, որը նա փետրվարի 21-ին հղել է Հայաստանի նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանին: Ուղերձում Գյուլը հույս է հայտնել, որ Սերժ Սարգսյանը նոր պատասխանում կնպաստի հայ եւ թուրք ժողովուրդների կապերը կարգավորելու համար ամուրաժեռ մթնոլորտի ստեղծմանը, եւ իր բարեմաղթանքներն է հայտնել Հայաստանի ժողովրդին:

Նույն օրը թուրքական հանրային հեռուստատեսությունը համապատասխան մեկնաբանություններով թուրք հեռուստադիտողին ներկայացրեց Աբդուլլահ Գյուլի ուղերձը, ապա եւ նշեց, որ Ադրբեջանը բողոքի նոտա է տվել ԵԱՀԿ-ին, Եվրոպայի խորհրդին եւ Եվրախորհրդարանին՝ պահանջելով ամվավեր ճանաչել ՀՀ նախագահական ընտրությունների արդյունքները: Քանի որ ընտրությունների անվավեր ճանաչման տրամաբանությունը միանգամայն հակասում է Սերժ Սարգսյանի նոր պատասխանում ընտրվելու առնչությամբ «թուրք ազգի եւ ամենայն իր անունից» օմոնիավորելու Թուրքիայի նախագահի տրամադրություններին, ուստի թուրքական հեռուստատեսությունը, համադրելով այս երկու լուրը, փաստորեն քույլ է տալիս Ադրբեջանի պահանջի սնանկությունը: Թերեւս դրանով բացահայտվում է Հայաստանի հարցում թուրք-ադրբեջանական տարաձայնությունների առկայությունը, դրանց դրսեւորման միջոց է դառնում նախագահական ընտրություններում Սերժ Սարգսյանի հաղթանակը:

Այս ամենն, ինչ խոսք, չի նշանակում, որ Թուրքիան պատրաստվում է վերանայել Հայաստանի նկատմամբ որդեգրած դիրքորոշումը, սակայն Սերժ Սարգսյանի հաղթանակը եւ հատկապես հաղթանակի առնչությամբ Աբդուլլահ Գյուլի հղած ուղերձը կտրուկ փոխել են թուրքական շրջանակների վերաբերմունքը ՀՀ ընտրված նախագահի նկատմամբ: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ Սամի Քոհենի «Միլիեթի» փետրվարի 22-ի համարում հրապարակած հոդվածին: Ահա թե ինչ է գրում նա.

«Հայաստանի նախագահական ընտրություններից անմիջապես հետո հազարավոր բողոքարկողների փողոց դուրս գալը որոշ կասկածներ առաջացրեց ինչպես արդյունքների ճշտության, այնպես էլ երկրի հաղթական աղագայի առնչությամբ: Ընտրություններում Սերժ Սարգսյանին ձայների մեծ տարբերությամբ պարտված Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցների կարծիքով լուրջ ընտրախախտումներ են կատարվել: Հակառակ դրան օտարերկրյա դիտորդները, որոնք հետեւել էին ընտրությունների ընթացքին, նշում են, որ արդյունքների վրա ազդող որեւէ լուրջ խախտում չեն արձանագրել: Սակայն Տեր-Պետրոսյանը համառորեն շարունակում է առարկել եւ հայտարարություններ է անում, թե հետեւյալ չի կատարելու եւ պայքարը տանելու է մինչեւ վերջ:

Ինչ ընթացք կունենա այդ պայքարը, կմնանվի՞ արդյոք հարեւան Վրաստանում 5 տարի առաջ ծայր առած այն փողոցային ցույցերին, որոնք հանգեցրել էին «թավշյա» հեղափոխության: Հայաստանի առաջնակարգ լրագրողներից մեկը, որի հետ երեկ հարցազրույց եմ ունեցել, ասաց, որ Երեւանում մեծ չէ բողոքարկողների շանսը, որովհետեւ ժողովուրդը հեղափոխություն չի ուզում: Եթե չլինեն ցուցարարների հետ ոստիկանության բախումներ, ապա բողոքարկողների շարժումը կմատնվի անուշադրության եւ շուտով կմարի:

Ինչն է փոխվելու

Եթե ամեն ինչ իր հունով ընթանա, ապա 40 օր հետո նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանը կգբաղեցնի իր նախորդի՝ Ռոբերտ Քոչարյանի աթոռը: Կառավարման ինչ-որ մի՞տք է ընտրելու Սարգսյանը: Նա նույնությամբ շարունակելո՞ւ է Քոչարյանի ուղին, թե՞ ժամանակի ընթացքում որոշակի փոփոխություններ է կատարելու: Երեւանի մեր լրագրող բարեկամն ասում է, որ Սերժ Սարգսյանը, որեւ էլ Քոչարյանի «մարդը» համարվի, այլ հիմնության տեր անձնավորություն է: Թեեւ նա պատասխանում է նախորդի որդեգրած հաղթական գիծը, սակայն հնարավոր է հետագայում նոր ոճ եւ մոտեցում դրսեւորի:

Նոր նախագահի գլխավոր առաջնահերթությունը ստեղծությունն է լինելու, որպեսզի ստեղծությունը բարելավելու խոսքում է տվել ընտրողներին: Ինչ խոսք, Սերժ Սարգսյանի օրակարգի առաջնահերթ խնդիրներից են նաեւ դարաբաղյան հիմնահարցն ու Թուրքիայի հետ հարաբերությունները: Ըստ ամենայնի, տարբեր գործոններ սահմանում են Սարգսյանին, որ կանգնի որակիչ քայլեր կատարելու անհրաժեշտության առջեւ:

Գուցե նոր սկիզբ

Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերությունների նորմալացման հարցում, ինչպես Անկարան, այնպես էլ Երեւանն սպասում են, որ առաջին քայլը դիմացինը կատարի: Այդ պատճառով էլ առ այսօր որեւէ լուրջ քայլ չի կատարվում, դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվում, չեն բացվում սահմանները եւ Դարաբաղի հարցում չի արձանագրվում թեկուզ նվազագույն առաջընթաց:

Կարելի՞ է Սերժ Սարգսյանից ակնկալել նոր սկիզբ: Այդ հարցին պատասխանելիս Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի Կովկասի գծով փորձագետ Հասան Քամբրլաթն արեց հետեւյալ եզրակացությունը. «Որոշ դեպքերում «բազեի» համարում ունեցող առաջնորդները խաղաղության հասատման հարցերում շատ ավելի հաջողակ են լինում: Հնարավոր է, որ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավման համար Սերժ Սարգսյանը դրական քայլ կատարի:

Դեռեւս, որ Հայաստանի նորընտիր նախագահը ժամանակի ընթացքում կօգտագործի այս հնարավորությունը»:

ՀԱՅՈՐ ՉԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Ք/Ն N1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԻՑ
ըստ 01 հունվարի 2008 թ.

Կազմակերպության անվանումը	«Փոքրիկ Քնարիկ» ՍՊԸ
Փոստային գտնվելու վայրը	Դար. ան. խաղ. ար. կազմ.
Հեռախոսի եւ էլ. փոստի հասցեները	
Տնտեսագիտական գործունեության հաշվառման համարը	02223337
Գործունեության տեսակը	հագ. դրամ
Գործունեության վայրը	
Փոստային գործունեության իրականացման վայրը	Գ. Լուսավորիչի 12/3

ԱՌԿԱ	տող	Լսելիության տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	2117	876
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	2117	876
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի գծով	170	231	471
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	231	471
ՀԱՇՎԵՊԱՀՈՒՄ	230	2348	1347

ՊԱՍԻՎ	տող	Լսելիության տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի գրանցված արժեք	240	50	50
Կուտակված շահույթ	270	(36224)	(49098)
Ընդամենը սեփական կապիտալ	300	(36174)	(49048)
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վերադարձումներ	360	38522	50393
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	38522	50393
ՊԱՍԻՎՆԵՐԻ	500	2348	1347

Ք/Ն N2

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2008 թ., տարի

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (փոքրագույն ժամանակաշրջան՝ անորոշակի)	Հաշվետու տարի (փոքրագույն ժամանակաշրջան՝ անորոշակի)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	64919	58495
Գործառնական շահույթ (վնաս)	030	64919	58495
Իրացման ծախսեր	040	(9194)	(12486)
Վարչական ծախսեր	050	(1225)	(1241)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	54500	44768
Գործառնական շահույթ (վնաս)	090	54500	44768
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	54500	44768
Շահույթահարկի գծով ծախս (եկամուտ)	160	54500	44768
Շահույթահարկի գծով ծախս (եկամուտ)	170	(43820)	(44643)
Զուտ շահույթ (վնաս) շահույթահարկի գծով հետո նախորդ ժամանակաշրջանի հետո	180	10679	125

Գլխավոր հաշվապահ

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Տնօրեն

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՕԳԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բունդեսթագի ճանաչումից հետո անթույլատրելի է ուրացողներին դահլիճ տրամադրել

Փետրվարի 24-ին, ժամը 15-ին Բեռլինի «Մարիթիմ» հյուրանոցում «Խոջալուի կոտորածը եւ 1915-ի իրադարձությունները» վերնագրյալ մի կոնֆերանս է անցկացվելու, որի բացման խոսքը վերադարձված է արտասանել Հյուսիսային Կիպրոսի նախկին նախագահ Ռաուֆ Դենքթաշին: Առաջին բանախոսը ադրբեջանցի պատգամավոր, Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն դոկտ. պրոֆ. Յ. Մահմուդովն է:

Կոնֆերանսին մասնակցելու է նաեւ Յուսուֆ Հալաչօղլուն:

Բեռլինում կազմակերպված հիշյալ միջոցառման դեմ բողոք են հայտնել Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, ինչպես նաեւ Հալլե-Վիթենբերգի Մարտին Լյութեր համալսարանի դոկտ. պրոֆ. Հերման Գուլցը: Բեռլինի ոստիկանապետին հասցեագրած նամակում պարոն Գուլցը հիշեցնում է, որ 2005-ի մարտին ԳԴՀ մայրաքաղաքում ցեղասպանությունն ուրացող նմանատիպ մի նախաձեռնություն արդեն կասեցվել է՝ օրենսդրական հիմնավորմամբ՝ «դրանով կանարգվի մահացածների հիշատակը»: 2008-ի փետրվարի 24-ին նախատեսված կոնֆերանսը ուրացման նույն քաղաքականության շարունակությունն է, գրել է գիտնականը:

«Այս բովանդակությամբ կոնֆերանսի անցկացումը, որը գլխիվայր շրջում է փաստերը եւ ծառայում միմիայն թուրքական ուրացման քաղաքականությանը, 2005-ին գերմանական Բունդեսթագի ճանաչման բանաձեւից հետո անթույլատրելի է», ձեւակերպված է Գերմանահայոց կենտրոնական խորհրդի մամլո հաղորդագրության մեջ՝ հյուրանոցի ղեկավարությունից պահանջելով նմանաբնույթ միջոցառումների համար դահլիճ չտրամադրել:

ԼՌ.Ս.

Գերմանիա

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեւան քաղաքի Արաբկիր թաղամասային բաժանմունքը (պատվիրատու) ԵԱԹ-ԳՀԳ-ԱՊՁԲ-6/08 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **Արաբկիր համայնքի սոցիալապես անապահով՝ բնակիչների կարիքների համար դեղորայքի ձեռք բերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ փոխանցել «Զարգացման Հայկական բանկ» ԲԲ 1810052137053312, «Ալասան» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչեւ 8-րդ աշխատանքային օրվա ժամը 10-ը դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Զարյան 27, 416 սենյակ, հեռ.՝ 28-13-51:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա:

Հայտերը պետք է ներկայացվեն մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10-ը:

Արաբկիր թաղամասային

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԾՁԲ-08/12» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«ՀՀ ԿԱ ՀՊԾ Սպանդարյանի ՀՏ վարչական շենքի սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Արդիինվեստբանկ», «Բեջ-գալ» ՍՊԸ -ի 247230066158 ՀՀ -ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Ի. Քոչարյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացվել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10.00-ն:

ԽՍՏՈՐԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ ԳԱԶԻ ՍԱՐՔԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Հայաստանի հրեշ անվանգության ծանրագիացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության խորհուրդ նպատակահարմարության տեսանկյունից հայտնում է, որ գազասարքավորումներից օգտվելուց առաջ պետք է օդափոխել տիրույթը, որտեղ տեղադրված են գազի սարքավորումները: Նախման օգտվելը սուզել ծխնելույզի հարի առկայությունը, միեւնույն ժամանակ՝ հոդգոնական թիթեղա խողովակների միացումները, հարի առկայության դեպքում միայն օգտվել գազի սարքից:

Ծխնելույզի հարի թուլության կամ բացակայության ժամանակ, գազի թունավոր հեւանոթով առաջանում է անխածնի օքսիդ (ածխ գազ), որը ուժեղ թունավոր գազ է եւ դրա անշնչահանելության առկայությունը տիրությունում կարող է ծառացու թունավորման պատճառ լինել: Խորհուրդ է տրվում նման դեպքում անմիջապես ծարել ծխնելույզները եւ նոր միայն օգտագործել գազասարքը: Ծխնելույզների ծարման եւ վերանորոգման աշխատանքները կատարում են նաեւ «Հայաստանի հրեշ անվանգության ծանրագիացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության տարածային ստորաբաժանումները:

Հաճախ բնական գազի օգտագործման կանոնների պահանջների՝ ջեռուցվող սարքերի բլոկների եւ ազդանշանների խողովակից պատրաստված ծխնելույզները պետք է ծարվեն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իսկ աղյուսից՝ եռամյակը մեկ անգամ:

Ցի թույլատրվում հանկարծ բազմաբնակարան շենքերի ծխնելույզները բնակիչների կողմից ինքնուրույն փոփոխություններ ենթարկել, ծարել ու վերանորոգել, դրանով կարող են զրկել իրենց եւ հարեւաններին ծխնելույզների ճիշտ շահագործումից՝ ստեղծելով դիբարձ դեպքերի ռիսկեր:

Ծխնելույզների ծարման, վերանորոգման, ինչպես նաեւ տեխնիկական թույլտվության ստացման համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 443432, 569668, 446903, 526195, 287773

ՖՈՒՆԱՑԸ ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ԸՆԿԱԼԵԼ ՈՐՊԵՍ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԱԿՈՒՆ

«Հայաստանի հրեշ անվանգության ծանրագիացված ծառայություններ»
Իրավաբանական անձանց միության խորհուրդ
ՈՎ պատասխանատու հրապարակում

ՊՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՅՈՒԵԳԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ «Ազգ» օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայագրի համարը՝ 02 U N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Նանոր Անանիան: Տպաքանակ՝ 3000, ստորագրած է տպագրության՝ 22.02.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արգակունյաց 2: